



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Հավաքների և միավորման
ազատություն

2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ

Պատրաստվել է քարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր ուժ չունի:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Սույն փաստաթղթի էլեկտրոնային կամ տպագիր տարբերակն ամբողջությամբ կամ մասնակի թարգմանել և (կամ) վերարտադրել ցանկացող հրատարակողներին կամ կազմակերպություններին խնդրում ենք լրացնել *request to reproduce or republish a translation* ձևը՝ թույլտվության ընթացակարգի վերաբերյալ տեղեկանալու համար:

Եթե ցանկանում եք տեղեկանալ նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցների ընթացիկ թարգմանությունների մասին, խնդրում ենք անցնել հետևյալ հղմամբ՝ *pending translations*:

Սույն ուղեցույցի բնօրինակը կազմվել է անգլերեն: Այն պարբերաբար թարմացվում է և վերջին անգամ՝ 2023 թվականի օգոստոսի 31-ին: Այն կարող է ենթարկվել խմբագրական վերանայումների:

Նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցները կարելի է ներբեռնել <https://ks.echr.coe.int> կայքից: Հրապարակվող թարմացումների համար խնդրում ենք հետևել Դատարանի թվիթերյան էջին՝ <https://twitter.com/echrpublication>:

Սույն ուղեցույցը թարգմանվել է «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն թարգմանության բացառիկ պատասխանատուն է հանդիսանում վերոնշյալ ծրագիրը:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2023 թ.

Բովանդակություն

Բովանդակություն	3
Ծանոթագրություն ընթերցողի համար.....	5
I. Հավաքների ազատություն	7
Ա. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի կարևորությունը և դրա կապն արտահայտվելու ազատության իրավունքի հետ.....	7
Բ. 9-րդ, 10-րդ և (կամ) 11-րդ հոդվածների ներքո ներկայացված գանգատների դասակարգումը.....	8
1. Կրոնական հավաքներ. 9-րդ և 11-րդ հոդվածներ.....	8
2. Հավաքը՝ որպես արտահայտման ձև և հավաքի ընթացքում կարծիքի արտահայտում. 10-րդ և 11-րդ հոդվածներ.....	8
Գ. Հավաքների ազատության իրավունքի շրջանակը.....	10
1. Հավաքի ձևը և տեսակը.....	11
2. Հավաքի վայրի ազատությունը.....	11
3. Խաղաղ հավաք.....	12
Դ. Պոզիտիվ պարտավորություններ	13
1. Հավաքի խաղաղ անցկացումն ապահովելու պարտավորությունը	14
2. Հակընդդեմ ցույցեր	14
Ե. Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումները.....	15
1. Միջամտություն հավաքների ազատության իրավունքի իրացմանը.....	15
2. Սահմանափակումների հիմնավորումը.....	16
ա. Նախատեսված է օրենքով.....	17
բ. Իրավաչափ նպատակ.....	18
գ. Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում.....	19
i. Հավաքի ընթացքում արտահայտված կարծիքների բովանդակության հիման վրա միջամտության հարցում հայեցողության նեղ շրջանակ.....	19
ii. Հավաքների ընդհանուր արգելքի հարցում հայեցողության նեղ շրջանակ ...	20
iii. Բնականոն կյանքը և երթևեկությունը դիտավորությամբ խաթարելու համար պատժամիջոցներ կիրառելու հայեցողության առավել լայն շրջանակ.....	21
iv. Չսպող ազդեցություն.....	21
v. Պատժամիջոցներ՝ բնույթը և խստությունը.....	22
vi. Ցրում և ուժի գործադրում.....	23
Չ. Նախնական իրազեկման և արտոնման ընթացակարգերը.....	23
1. Նախնական իրազեկման և արտոնման ընթացակարգերի նպատակը.....	24
2. Անօրինական հավաք.....	24
3. Ինքնաբուխ հավաք.....	25
Է. Դատապարտելի վարքագիծ.....	26
II. Միավորման ազատություն	27
Ա. Միավորման ազատության իրավունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում.....	27
Բ. Կապը Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածների հետ.....	28
Գ. Միավորման ազատության իրավունքի շրջանակը և բովանդակությունը	29
1. Միավորման հասկացությունը.....	29

2.	Հանրային իրավունքի հաստատություններ, մասնագիտական մարմիններ և պարտադիր անդամակցություն.....	29
3.	Միավորման ստեղծումը և դրա իրավական ճանաչումը	30
4.	Միավորումների ինքնավարությունը, ներքին կառավարումը և անդամակցությունը	31
5.	Միավորման նեգատիվ ազատությունը	31
Դ.	Միավորման ազատության սահմանափակումները.....	32
1.	Նախատեսված է օրենքով	32
2.	Իրավաչափ նպատակ	33
3.	Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում	33
ա.	Դատարանի ուսումնասիրության սահմանները	34
բ.	Միջամտության խստությունը և համաչափության պահանջը.....	34
Ե.	Միավորումների առանձին տեսակներ.....	36
1.	Քաղաքական կուսակցություններ	37
ա.	Գրանցման մերժում և լուծարում.....	37
բ.	Ֆինանսավորում և ստուգումներ.....	40
2.	Փոքրամասնությունների միավորումներ.....	41
3.	Կրոնական միավորումներ	43
Չ.	Պոզիտիվ պարտավորություններ.....	45

III. Արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց միանալու ազատություն..... 46

Ա.	Արհեստակցական միության իրավունքների շրջանակը.....	46
Բ.	Էական տարրերը և Դատարանի մոտեցումը.....	48
Գ.	Գրանցման մերժումը	48
Դ.	Պատժամիջոցներ և գապող միջոցներ.....	49
Ե.	Արհեստակցական միությանը չմիանալու իրավունքը.....	50
Չ.	Ներքին հարաբերությունները կարգավորելու և անդամներին ընտրելու արհեստակցական միությունների իրավունքը.....	50
Է.	Կոլեկտիվ բանակցության իրավունքը	51
Ը.	Գործադուլի իրավունքը.....	52
Թ.	Պոզիտիվ պարտավորություններ և հայեցողության շրջանակ.....	53

IV. Չինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի անդամների նկատմամբ կիրառվող սահմանափակումներ..... 54

Ա.	Պետական վարչակազմ	55
Բ.	Ոստիկանություն	56
Գ.	Չինված ուժեր.....	57

Մեջբերված գործերի ցանկը 58

Ծանոթագրություն ընթերցողի համար

Սույն ուղեցույցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ «Դատարան», «Եվրոպական դատարան» կամ «Ստրասբուրգի դատարան») կողմից հրատարակվող «Կոնվենցիայի վերաբերյալ ուղեցույցեր» (անգլ.՝ «Case-Law Guides») շարքից է՝ նախատեսված պրակտիկ իրավաբաններին Ստրասբուրգի դատարանի կայացրած հիմնարար վճիռների և որոշումների մասին տեղեկացնելու համար: Սույն ուղեցույցում վերլուծվում և ամփոփվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (հետայսու՝ «Կոնվենցիա» կամ «Եվրոպական կոնվենցիա») 11-րդ հոդվածի շուրջ ձևավորված նախադեպային իրավունքը: Ընթերցողները հնարավորություն կունենան ծանոթանալու տվյալ ոլորտի հիմնական սկզբունքներին և վերաբերելի նախադեպերին:

Մեջբերված նախադեպային իրավունքի օրինակներն ընտրվել են ուղենիշային, առավել կարևոր և (կամ) վերջերս կայացված վճիռներից և որոշումներից:¹

Դատարանի վճիռներով և որոշումներով ոչ միայն լուծվում են Դատարանին ներկայացված կոնկրետ գործերը, այլև հետապնդվում է ավելի լայն նպատակ, այն է՝ Կոնվենցիայով սահմանված կանոնների պարզաբանումը, երաշխավորումը և զարգացումը, ինչը նպաստում է պետությունների՝ որպես Պայմանավորվող կողմերի ստանձնած հանձնառությունների կատարմանը (*Ireland v. the United Kingdom*, 18-ր հունվարի 1978թ., § 154, շարք A թիվ 25, իսկ վերջերս նաև՝ *Jeronovičs v. Latvia* [GC], թիվ 44898/10, § 109, 5-ր հունիսի 2016թ.):

Այսպիսով, Կոնվենցիայի միջոցով ստեղծված համակարգի նպատակն է լուծել հանրային քաղաքականության խնդիրները՝ ելնելով ընդհանուր շահերից, այդպիսի բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և տարածելով մարդու իրավունքներին առնչվող իրավական պրակտիկան Կոնվենցիայի անդամ պետություններում (*Konstantin Markin v. Russia* [GC], 2012, § 89): Դատարանը հատուկ շեշտել է, որ Կոնվենցիան կատարում է «եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» դերը մարդու իրավունքների բնագավառում (*Bosphorus Hava Yolları Turizm ve Ticaret Anonim Şirketi v. Ireland* [GC], թիվ 45036/98, § 156, ECHR 2005-VI, իսկ վերջերս նաև՝ *N.D. and N.T. v. Spain* [GC], թիվ 8675/15 և 8697/15, § 110, 13-ր փետրվարի 2020թ.):

Կոնվենցիայի թիվ 15 արձանագրությունը վերջերս ներմուծեց սուբսիդիարության սկզբունքը Կոնվենցիայի նախաբանում: Սկզբունքը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում «Մասնակից պետությունների և Դատարանի համատեղ պատասխանատվություն», իսկ ազգային իշխանությունները և դատարանները պարտավոր են այնպես մեկնաբանել և կիրառել ներպետական օրենսդրությունը, որ ապահովեն Կոնվենցիայում և դրան կից Արձանագրություններում սահմանված իրավունքների և ազատությունների լիարժեք իրագործումը (*Grzęda v. Poland* [GC], § 324):

Սույն ուղեցույցը պարունակում է հղումներ Կոնվենցիայից և վերջինիս Լրացուցիչ արձանագրություններից մեջբերված հոդվածներից յուրաքանչյուրում օգտագործված «բանալի» բառերին: Յուրաքանչյուր գործով քննարկված իրավական խնդիրներն ամփոփված են Բանալի բառերի ցանկում (անգլ.՝ «List of keywords»), որոնք ընտրվել են (հիմնականում) Կոնվենցիայի և Արձանագրությունների տեքստից անմիջականորեն վերցված եզրույթների բառարանից:

¹ Մեջբերված նախադեպային իրավունքը կարող է լինել Դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի պաշտոնական լեզուներից (անգլերեն և ֆրանսերեն) որևէ մեկով կամ միաժամանակ երկուսով: Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումները վերաբերում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճիռին: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում (dec.) բառը նշանակում է, որ հղում է արվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը (հղման անգլերեն տարբերակում [GC]) նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից: Պալատի այն վճիռները, որոնք սույն թարգմանումը հրատարակելու պահին դեռևս օրինական ուժի մեջ չեն մտել, նշագրված են աստղանիշով (*):

Դատարանի նախադեպային իրավունքի *HUDOC database* շտեմարանում հնարավոր է որոնումներ կատարել ըստ բանալի բառերի: Բանալի բառերով որոնելու պարագայում կարելի է գտնել նմանաբնույթ իրավաբանական բովանդակություն ունեցող փաստաթղթերի խումբ (բանալի բառերի օգնությամբ ամբողջացվում են յուրաքանչյուր գործի վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները և եզրակացությունները): Առանձին գործերի բանալի բառերը կարելի է գտնել՝ «HUDOC» համակարգում սեղմելով «Case Details» կոճակը: «HUDOC» շտեմարանի և բանալի բառերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս «HUDOC»-ի օգտագործման ձեռնարկը (անգլ.՝ «*HUDOC user manual*»):

I. Հավաքների ազատություն

Կոնվենցիայի 11-րդ հոդված

«1. Յուրաքանչյուր որ ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

HUDOC-ի բանալի բառեր

Խաղաղ հավաքների ազատություն (Freedom of peaceful assembly) (11-1) – Միավորման ազատություն (Freedom of association) (11-1) – Հիմնել/միանալ արհեստակցական միություններին (Form and join trade unions) (11-1) – Չմիանալ արհմիություններին (Not join trade unions) (11-1) – Անդամների շահեր (Interests of members) (11-1)

Միջամտություն (Interference) (11-2) – Օրենքով սահմանված (Prescribed by law) (11-2); Մատչելիություն (Accessibility) (11-2); Կանխատեսելիություն (Foreseeability) (11-2); Չարաշահման դեմ երաշխիքներ (Safeguards against abuse) (11-2) – Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ (Necessary in a democratic society) (11-2); Ազգային անվտանգություն (National security) (11-2); Հասարակական անվտանգություն (Public safety) (11-2); Անկարգությունների կանխում (Prevention of disorder) (11-2); Հանցագործության կանխում/կանխարգելում (Prevention of crime) (11-2); Առողջության պահպանություն (Protection of health) (11-2); Բարոյական սկզբունքների պաշտպանություն (Protection of morals) (11-2); Ուրիշների իրավունքների և ազատությունների պաշտպանություն (Protection of the rights and freedoms of others) (11-2) – Չինված ուժերի անդամներ/ զինծառայողներ (Members of armed forces) (11-2) – Ոստիկանության ներկայացուցիչներ (Members of police) (11-2) – Վարչակազմի անդամներ (Members of administration) (11-2)

Ա. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի կարևորությունը և դրա կապն արտահայտվելու ազատության իրավունքի հետ

1. Խաղաղ հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունք է և, ինչպես արտահայտվելու ազատության իրավունքը, այդպիսի հասարակության հիմքերից է: Հետևաբար, այն չի կարող սահմանափակ կերպով մեկնաբանվել (*Djavit An v. Turkey*, 2003, § 56; *Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 91):

2. Այս իրավունքի հիմնարար բնույթից ելնելով՝ Դատարանը դժկամությամբ է ընդունելու առարկություններն առ այն, որ գանգատաբերը «էական վնաս» չի կրել, և հարկ է մերժել 11-րդ հոդվածի ներքո ներկայացված գանգատները՝ հիմք ընդունելով Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետը (*Berladir and Others v. Russia*, 2012, § 34; *Öğrü v. Turkey*, 2017, § 18):

3. Կարծիքների և դրանք արտահայտելու ազատության պաշտպանվածությունը Կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված՝ հավաքների և միավորման ազատությունների նպատակներից մեկն է (*Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* [GC], 1999, § 37):

4. Անկախ իր ինքնավար դերից և կիրառման առանձնահատուկ ոլորտից՝ 11-րդ հոդվածը հարկ է դիտարկել նաև 10-րդ հոդվածի լույսի ներքո, որտեղ հավաքների ազատության իրագործման

նպատակն անձնական կարծիքների արտահայտումն է (*Ezeline v. France*, 1991, § 37), ինչպես նաև հանրային բանավեճի համար հարթակ ապահովելու անհրաժեշտությունը և բողոքի անկաշկանդ արտահայտումը (*Eva Molnár v. Hungary*, 2008, § 42):

5. 10-րդ և 11-րդ հոդվածների միջև կապն առանձնակի արդիական է, երբ իշխանությունները միջամտում են խաղաղ հավաքների ազատության իրավունքին՝ որպես արձագանքում ցույցի մասնակիցների կամ միավորման անդամների տեսակետներին կամ արված հայտարարություններին (*Primov and Others v. Russia*, 2014, § 92; *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, § 85):

Բ. 9-րդ, 10-րդ և (կամ) 11-րդ հոդվածների ներքո ներկայացված զանգատների դասակարգումը

1. Կրոնական հավաքներ. 9-րդ և 11-րդ հոդվածներ

6. Երբ հավաքը հիմնականում կրում է կրոնական բնույթ, կարող են կիրառվել թե՛ 9-րդ և թե՛ 11-րդ հոդվածները: Քաղաքային այգում պաշտամունքի ծառայություն չթույլատրելու հարցն ուսումնասիրվել է 11-րդ հոդվածի ներքո, որը մեկնաբանվել է 9-րդ հոդվածի համատեքստում այն հիմքով, որ խնդրո առարկա հավաքը պետք է իրականացվեր հանրային վայրում և կարգավորվեր հավաքների համար սահմանված կանոններով (*Barankevich v. Russia*, 2007, § 15; *Centre of Societies for Krishna Consciousness in Russia*, 2021, § 46): Մյուս կողմից, մասնավոր կամ վարձակալված տարածքներում կրոնական հավաքը խոչընդոտելու հարցը քննության է առնվել միայն 9-րդ հոդվածի տեսանկյունից (*Kuznetsov and Others v. Russia*, 2007, § 53; *Krupko and Others v. Russia*, 2014, § 42; *Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia*, 2007, §§ 143-144): Այնուհետև, մեկ այլ գործով, երբ քաղաքապետի կամ դատական որոշումներով մերժվել է զանգատաբեր կրոնական կազմակերպության հայտը՝ ծրագրելու պաշտամունքի սեփական վայրի կառուցումը, Դատարանը վերաբերելի բողոքները քննել է 9-րդ հոդվածի հիմքով, որը մեկնաբանվել է 11-րդ հոդվածի լույսի ներքո (*The Religious Denomination of Jehovah's Witnesses in Bulgaria v. Bulgaria*, 2020, § 80):²

7. Կրոնական ծեսի մասնակցելու համար, որը եղել է զանգատաբերների կրոնական հավատամքի գուտ հրապարակային դրսևորում, ահաբեկչության կանխարգելման մասին օրենսդրության համաձայն զանգատաբերների դատապարտմանն առնչվող գործով Դատարանը գտել է, որ խնդրո առարկա իրավիճակը կարող է քննության առնվել Կոնվենցիայի մի շարք դրույթների ներքո, այդ թվում՝ զանգատաբերների նշած 7-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածներով: Այնուամենայնիվ, հայտնել է այն տեսակետը, որ կոնկրետ գործում բարձրացված հիմնական հարցը պետք է քննության առնվի միայն 9-րդ հոդվածի ներքո (*Güler and Uğur v. Turkey*, 2014, §§ 12 and 26):

2. Հավաքը՝ որպես արտահայտման ձև և հավաքի ընթացքում կարծիքի արտահայտում. 10-րդ և 11-րդ հոդվածներ

8. Բողոքի քննությունը 10-րդ կամ 11-րդ հոդվածի կամ միաժամանակ երկու հոդվածների ներքո պայմանավորված է տվյալ գործի առանձնահատուկ հանգամանքներով և դիմումատուի զանգատների էությանը (*Women On Waves and Others v. Portugal*, 2009, § 28; *Bumbeș v. Romania*, 2022, § 69; *Ete v. Türkiye*, 2022, § 17): Բողոքները միջոցառման վերաբերյալ, որի նկատմամբ կիրառելի չէ 11-րդ հոդվածը, քանի որ այն կա՛մ չի հանդիսացել «հավաք», կա՛մ հավաքը չի կրել «խաղաղ» բնույթ, ուսումնասիրվել են 10-րդ հոդվածի շրջանակում՝ 11-րդ հոդվածի լույսի ներքո (*Steel and Others v. the United Kingdom*, 1998, §§ 92 և 113, որտեղ Դատարանը երկու հարցերն էլ թողել է իրրև բաց հարցեր): Բողոքի ակցիան, որի ընթացքում չթույլատրված հարկադիր մուտք է արվում պաշտոնական տարածքներ, կարող է պարունակել արտահայտման ձև՝

2. Տե՛ս 9-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը. *Կրոնի ազատություն*, բաժին I.E

պաշտպանված 11-րդ հոդվածի լույսի ներքո մեկնաբանվող 10-րդ հոդվածով (*Taranenko v. Russia*, 2014, § 69):

9. Դատարանը կարևորել է այն փաստը, որ հավաքի մասնակիցները ձգտում են ոչ միայն արտահայտել իրենց կարծիքը, այլև անել դա այոց հետ միասին (*Primov and Others v. Russia*, 2014, § 91): Հետևաբար, մեկ մասնակցի կողմից իրականացվող ցույցերը քննության են առնվում 10-րդ հոդվածով՝ հաշվի առնելով, ըստ անհրաժեշտության, 11-րդ հոդվածի համատեքստում սահմանված ընդհանուր սկզբունքները (*Novikova and Others v. Russia*, 2016, § 91): Բողոքի ակցիան, որի ընթացքում մոտ երեսուն անձից բաղկացած խումբը փակվել էր պաշտոնական տարածքում, հնչեցնում էր կարգախոսներ և թռուցիկներ էր նետում պատուհաններից, քննության է առնվել 10-րդ հոդվածի ներքո (*Yezhov and Others v. Russia*, 2021, § 27): Սոցիալական ցանցերի միջոցով մարդկանց հավաքի մասնակցելու կոչեր ուղղելը 10-րդ հոդվածի կարգավորման շրջանակում է, որն, ըստ անհրաժեշտության, մեկնաբանվում է 11-րդ հոդվածի լույսի ներքո (*Elvira Dmitriyeva v. Russia*, 2019, § 66):

10. Հավաքի ընթացքում կատարված ոչ բռնի արարքները պաշտպանված են 11-րդ հոդվածով: որ դիտավորությամբ երթևեկությանը խոչընդոտող ու կյանքի բնականոն ընթացքը խաթարող ճանապարհների արգելափառումը և այլ ֆիզիկական գործողությունները համարվել են 11-րդ հոդվածի շրջանակում կարգավորվող (*Barraco v. France*, 2009, § 39; *Lucas v. the United Kingdom* (dec.), 2003), թեև Դատարանը նշել է, որ նմանօրինակ արարքները Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանված՝ խաղաղ հավաքների ազատության բուն իմաստը չեն (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 97): Ցույցի ընթացքում պատահաբար տեղադրումը պատին ուսումնասիրվել է միայն 11-րդ հոդվածի ներքո (*Akarsubaşı and Alçiçek v. Turkey*, 2018, §§ 31-33; ի համեմատություն՝ *Olga Kudrina v. Russia*, 2021, § 49, երբ նմանօրինակ գործողությունները քննության են առնվել 10-րդ հոդվածի ներքո, երբ դրանք համադրվել են պատուհանից քաղաքական թռուցիկներ նետելու հետ), ինչն արվել է նաև օրենսդրական արգելքի անտեսմամբ դատարանի շենքերի մոտ զանգվածային լրատվամիջոցների առջև արված հրապարակային հայտարարությունների պարագայում (*Öğrü v. Turkey*, 2017, § 13): Նմանապես, ողորքի մի շարք գործողություններ, ներառյալ՝ մամլո ասուլիս, երթ և նստացույց, որոնք առնչվում են մեկ քարոզարշավի, քննության են առնվել 11-րդ հոդվածով (*Hakim Aydın v. Turkey*, 2020, § 50): *Ekrem Can and Others v. Turkey*, 2022, գործով դատարանի շենքի մոտ բողոքի ակցիան, որի ընթացքում զանգատաբերները բացել էին պատառ, հնչեցրել կարգախոսներ և նետել թռուցիկներ, այդպիսով խոչընդոտելով կենսական նշանակության հանրային ծառայության՝ արդարադատության պատշաճ իրականացմանը (§ 91), քննության է առնվել 11-րդ հոդվածով, որը դիտարկվել է 10-րդ հոդվածի լույսի ներքո: Դատարանը նշել է, որ զանգատաբերների բողոքը վերաբերել է ոչ միայն այն փաստին, որ նրանց արգելել էին հայտարարություն անել, այլ հիմնականում ոստիկանության միջամտությանը, ինչի արդյունքում նրանց ուժի գործադրմամբ հեռացրել էին տարածքից (§ 68):

Ցույցի ընթացքում կարգախոսներ հնչեցնելու և պատատներ պարզելու համար պատժի սահմանումը՝ դրանց բովանդակությունից ելնելով, համարվում է միջամտություն 11-րդ հոդվածով պաշտպանված՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքին (*Kemal Çetin v. Turkey*, 2020, § 26):

11. Մյուս կողմից, որոշակի բնույթի գործունեությանը խոչընդոտող գործողությունները քննության են առնվում 10-րդ հոդվածով կամ 10-րդ և 11-րդ հոդվածներով միաժամանակ: Այսպես, բողոքի ակցիան, որի նպատակն էր ֆիզիկապես խանգարել որսին կամ մայրուղու կառուցմանը, հանդիսացել է 10-րդ հոդվածի իմաստով կարծիքի արտահայտման ձև (*Steel and Others v. the United Kingdom*, 1998, § 92): «Գրինփիս» (անգլ.՝ Greenpeace) կազմակերպության ակտիվիստների ներկայացրած գործում, ովքեր մասնաբերել էին իրենց նավակներով կետերի որսին խոչընդոտելու նպատակով, Դատարանը ելել է այն ենթադրությունից, որ զանգատաբերները կարող էին հիմնվել 10-րդ և (կամ) 11-րդ հոդվածների վրա, սակայն տվյալ հանգամանքներում անհրաժեշտ չի համարել վերագրել զանգատը հոդվածներից մեկին կամ միաժամանակ երկուսին (*Drieman and Others v. Norway* (dec.), 2000)³: Մյուս կողմից, Խորհրդարանի աշխատանքը խոչընդոտելու նպատակով որպես բողոքի ակցիա կազմակերպված ցույցը քննվել է միայն 11-րդ

3. Տե՛ս նաև *Guide on Mass Protests*, բաժին II.A

հոդվածի ներքո՝ հաշվի առնելով միջոցառման բնույթը և նպատակը (*Makarashvili and Others v. Georgia*, 2022, § 92):

Գ. Հավաքների ազատության իրավունքի շրջանակը

12. Նկատի առնելով խաղաղ հավաքների ազատության իրավունքը՝ այն չպետք է մեկնաբանվի սահմանափակ կերպով (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 91; *Taranenko v. Russia*, 2014, § 65): Սահմանափակ մեկնաբանության վտանգից խուսափելու նպատակով Դատարանը գերծ է մնացել հավաքի հասկացության ձևակերպումից կամ այն սահմանող չափորոշիչների սպառնչ ցանկ կազմելուց (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 98):

13. «Հավաքը» ինքնավար հասկացություն է: Այն, մասնավորապես, ընդգրկում է հավաքություններ, որոնք ներպետական իրավական կարգավորման առարկա չեն՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք պահանջում են իրագրվում կամ արտոնում կամ թե դուրս են մնան ընթացակարգերից: Այսպես, Դատարանը գտավ, որ 11-րդ հոդվածը կիրառելի է խաղաղ «գրոսանքի» հավաքության, երբ քաղաքական դիրքորոշում արտահայտելու նպատակով մի խումբ անձինք գործել են համակարգված և նպատակային կերպով, իսկ գանգատաբերն այն չի համարել կիրառելի ներպետական օրենսդրությամբ իրագրված ենթակա «երթ» կամ «հանրահավաք» (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 108): Նույն կերպ, Դատարանը գտավ, որ գանգատաբերի կողմից որպես «ֆլեշ մոր» նկարագրված հավաքությամբ կարող է հավաք համարվել՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այն համապատասխանում է ներպետական օրենսդրությամբ սահմանված «հանրային միջոցառում» կամ «ստատիկ ցույց» հասկացություններին, թե ոչ (*Obote v. Russia*, 2019, § 35)՝ հղում կատարելով Կոնվենցիայի ներքո «հավաքի» ինքնավար հասկացությանը:

14. Հավաքը, մասնավորապես, սահմանվում է մասնակիցների ընդհանուր նպատակով և պետք է տարբերակվի անհատների պատահական կուտակումից, օրինակ՝ հանրային շենք մուտք գործելու հերթից, որտեղ յուրաքանչյուր ոք հետապնդում է սեփական նպատակ: Այսպես, քաղաքական բնույթի քրեական գործով դատական նիստին մասնակցելու նպատակով դատարանի շենքի մոտ ներկա ակտիվիստների խումբը համապատասխանում է «հավաք» հասկացությանն այն հիմքով, որ իրենց ներկայությամբ այդ անձինք նպատակ են ունեցել արտահայտելու հանրային կարևորություն ունեցող հարցում անձնական ներգրավվածությունը: Դատարանը տարբերակեց այս չնախատեսված հավաքություն այն իրավիճակից, երբ որևէ անցողիկ պատահաբար խառնվում է ցույցի և սխալմամբ համարվում դրա մասնակից (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 110):

15. Տարածքների երկարատև գրավումը, որը կրում է խաղաղ բնույթ, անգամ եթե հստակորեն խախտում է ներպետական օրենքները, կարող է համարվել «խաղաղ հավաք» (*Cisse v. France*, 2002, §§ 39-40; *Tuskia and Others v. Georgia*, 2018, § 73; *Annenkov and Others v. Russia*, 2017, § 123):

16. Նույնիսկ այն դեպքերում, երբ հավաքի փաստը կասկածից վեր է, 11-րդ հոդվածի ներքո ներկայացված գանգատի ընդունելիությունն առանձին գանգատաբերի մասով կարող է հարցականի տակ դրվել, եթե վերջինս Դատարանի առջև ժխտում է այդ հավաքի մասնակից լինելու փաստը: Պետք է հստակ և հաստատված կապ լինի գանգատաբերների կողմից խաղաղ հավաքի ազատությունն իրացնելու և նրանց դեմ ձեռնարկված գործողությունների միջև (*Navalnyy and Yashin v. Russia*, 2014, § 52): Նման կապը հաստատելու հարցում Դատարանը հաշվի է առնում գանգատաբերի սկզբնական մտադրությունը, հավաքին փաստացի ներգրավվածության չափը և ներպետական ատյաններին ու Դատարանին ներկայացված հայցի բովանդակությունը (*Agit Demir v. Turkey*, 2018, § 68; *Navalnyy v. Russia* [GC], 2018, §§ 109-111; *Zulkuf Murat Kahraman v. Turkey*, 2019, § 45, *Obote v. Russia*, 2019, § 35; *Kazan v. Türkiye*, 2023, § 56): Հավաքին մասնակցելու համար գանգատաբերին պատժի ենթարկելու փաստն ինքնին բավարար չէ 11-րդ հոդվածի շրջանակներում գանգատ ներկայացնելու համար, եթե գանգատաբերը հետևողականորեն պնդել է, որ իրեն սխալմամբ են մասնակից համարել (*Kasparov and Others v. Russia*, 2013, § 72): Կոնվենցիայի 11-րդ հոդվածը կարող է կիրառելի լինել ցույցը պարզապես դիտարկող անձանց նկատմամբ (տե՛ս, օրինակ, *Galstyan v. Armenia*, 2007,

§ 100), թեև վերջիններս պետք է համոզիչ փաստարկ ներկայացնեն, որ իրադարձություններին հետևելու նպատակով հավաքին ներկայությունն ինքնին կարող է համարվել խաղաղ հավաքի իրենց իրավունքի իրացում (*Shmorgunov and Others v. Ukraine*, 2021, § 487):

17. Թեև մինչ այսօր հավաքների ազատության բացասական իրավունքի վերաբերյալ գործ չի եղել, հավաքին հարկադրաբար մասնակցելուց զերծ մնալու իրավունքը կարող է բխեցվել նախադեպային իրավունքից (*Sørensen and Rasmussen v. Denmark* [GC], 2006, § 54; *Novikova and Others v. Russia*, 2016, § 91):

1. Հավաքի ձևը և տեսակը

18. Այս իրավունքն ընդգրկում է թե՛ մասնավոր հանրահավաքները և թե՛ հանրային վայրերում հանրահավաքները՝ անկախ դրանց ստատիկ կամ երթի ձևով լինելուց, ավելին, այդ իրավունքը կարող է իրացվել անհատ մասնակիցների և հավաքի կազմակերպիչների կողմից (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 91; *Djavit An v. Turkey*, 2003, § 56):

19. Թեև 11-րդ հոդվածի գլխավոր նպատակն է պաշտպանել խաղաղ քաղաքական ցույցերին և ժողովրդավարական գործընթացին մասնակցելու իրավունքը, տվյալ հոդվածի անընդունելի նեղ մեկնաբանություն կլինի դրա սահմանափակումը հավաքի միայն այդ ձևով, ինչպես 10-րդ հոդվածի նեղ մեկնաբանություն կլինի միայն քաղաքական բնույթի կարծիքի արտահայտմամբ սահմանափակելը (*Friend, the Countryside Alliance and others v. the United Kingdom* (dec.), 2009, § 50): Հետևաբար, 11-րդ հոդվածը կիրառելի է համարվել ըստ էության սոցիալական բնույթ կրող հավաքներին նկատմամբ (*Emin Huseynov v. Azerbaijan*, 2015, § 91, վերաբերում է ոստիկանության միջամտությանը մասնավոր սրճարանում իրականացված հավաքույթին; *Djavit An v. Turkey*, 2003, § 60, վերաբերում է իշխանությունների մերժմանը՝ թույլատրելու զանգատարերին հատել «կանաչ գիծը» դեպի հարավային Կիպրոս՝ երկու համայնքների հանդիպումներին մասնակցելու համար), ինչպես նաև մշակութային հավաքույթներին (*The Gypsy Council and Others v. the United Kingdom* (dec.), 2002), կրոնական և հոգևոր ժողովներին (*Barankevich v. Russia*, 2007, § 15): Պաշտոնական հանդիպումները, մասնավորապես՝ խորհրդարանական նիստերը, ընկնում են 11-րդ հոդվածի կարգավորման շրջանակում (*Forcadell i lluis v. Spain* (dec.), 2019, § 24):

2. Հավաքի վայրի ազատությունը

20. Հավաքների ազատության իրավունքը ներառում է 11-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում հավաքն անցկացնելու ժամը, վայրը և ձևն ընտրելու իրավունքը (*Sáska v. Hungary*, 2012, § 21): Հետևաբար, երբ հավաքի վայրը կարևոր է մասնակիցների համար, այն փոփոխելու հրահանգը կարող է համարվել միջամտություն հավաքների ազատության նրանց իրավունքին՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի ներքո (*The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria*, 2005, § 103; *Lashmankin and Others v. Russia*, 2017, § 405; *Mustafa Hajili and Others v. Azerbaijan*, 2022, § 65):

21. Այդուհանդերձ, 10-րդ հոդվածը և հետևաբար, 11-րդ հոդվածը չեն տալիս այդ իրավունքի իրացման համար վայրի ընտրության ցանկացած ազատություն: Մասնավորապես, այդ դրույթն ինքնաբերաբար չի առաջացնում մասնավոր կամ նույնիսկ պետական սեփականություն հանդիսացող բոլոր տարածքներ, օրինակ՝ կառավարական շենքեր, համալսարանական մասնաշենքեր կամ դատարաններ մուտք գործելու իրավունքներ (*Appleby and Others v. the United Kingdom*, 2003, § 47; *Taranenko v. Russia*, 2014, § 78; *Tuskia and Others v. Georgia*, 2018, § 72; *Ekrem Can and Others v. Turkey*, 2022, § 91): Ոչ էլ 11-րդ հոդվածն է երաշխավորում որևէ անձի նախընտրած վայրում, օրինակ՝ հանրային այգում, բողոքի ճամբար տեղակայելու իրավունք, թեև նման ժամանակավոր կառույցները որոշ հանգամանքներում հանդիսանում են քաղաքական արտահայտման ձև, որոնց նկատմամբ սահմանափակումները պետք է համապատասխանեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին (*Frumkin v. Russia*, 2016, § 107):

22. Որոշ վայրերում հանրային միջոցառումներ անցկացնելու արգելքը չի հակասում 11-րդ հոդվածին, եթե այն կիրառվում է անվտանգության նկատառումներով (*Rai and Evans v. the*

United Kingdom (dec.), 2009) կամ, որոշ դեպքերում, դատարանների շենքերի անմիջական հարևանությամբ գտնվող վայրերի պարագայում՝ որոշակի գործի դատաքննությունն արտաքին ազդեցությունից զերծ պահելու նպատակով, այդպիսով պաշտպանելով այլոց, այսինքն՝ դատավարության կողմերի իրավունքները: Տվյալ արգելքը, այնուամենայնիվ, պետք է ձևակերպվի նեղ՝ ուղղված այդ նպատակի իրագործմանը (*Lashmankin and Others v. Russia*, 2017, § 440; *Öğrü v. Turkey*, 2017, § 26):

3. Խաղաղ հավաք

23. Կոնվենցիայի 11-րդ հոդվածը պաշտպանում է միայն «խաղաղ հավաքի» իրավունքը՝ հասկացություն, որը չի ընդգրկում որևէ ցույց, որի կազմակերպիչներն ու մասնակիցներն ունեն բռնի նպատակներ: Հետևաբար, 11-րդ հոդվածի երաշխիքները կիրառելի են բոլոր հավաքությունների նկատմամբ, բացառությամբ այն հավաքների, որոնց կազմակերպիչները և մասնակիցներն ունեն նման նպատակներ, հրահրում են բռնություն կամ այլ ձևերով մերժում ժողովրդավարական հասարակության հիմքերը (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 92):

24. Ելնելով հիմնական փաստերից և գանգատների բնույթից՝ հավաքի «խաղաղ» լինելու հարցը կարող է ուսումնասիրվել՝ որպես 11-րդ հոդվածի կիրառելիության (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, §§ 97-99) կամ միջամտության առկայության հարց (*Primov and Others v. Russia*, 2014, §§ 93-103), կամ երկու հարցերը կարող են գնահատվել ընդհանուր առմամբ (*Gülçü v. Turkey*, 2016, §§ 92-93 և 97; *Yaroslav Belousov v. Russia*, 2016, §§ 168-172): Վերոնշյալ բոլոր դեպքերում կիրառելիությունը գնահատվել է ըստ ելույթի քննության փուլում, բացառությամբ *Primov and Others v. Russia* գործի, երբ կիրառելիությանն անդրադարձ է կատարվել ընդունելիության փուլում (2014, §§ 99 և 156): Հավաքի խաղաղ լինելու հարցը տարբերվում է գանգատարների վարքագծի գնահատումից: Դա գնահատվում է որպես համապատասխան վերլուծության մաս, որը կատարվում է պարզելու համար, թե արդյո՞ք բողոքարկվող միջոցները «անհրաժեշտ էին ժողովրդավարական հասարակությունում»:

25. Հավաքի կազմակերպիչների բռնի նպատակների ապացուցման բեռն ընկնում է իշխանությունների վրա (*Christian Democratic People's Party v. Moldova (no. 2)*, 2010, § 23):

26. Անգամ երբ առկա է իրական վտանգ, որ կազմակերպիչների վերահսկողությունից դուրս գտնվող զարգացումների արդյունքում հավաքը կարող է հանգեցնել անկարգության, տվյալ հավաքը դուրս չի մնում 11-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման շրջանակից, և դրա նկատմամբ կիրառվող բոլոր սահմանափակումները պետք է համապատասխանեն տվյալ հոդվածի 2-րդ մասի պահանջներին (*Schwabe and M.G. v. Germany*, 2011, § 103):

27. Տրանսպորտային մայրուղիների արգելափակումը՝ որպես ցույցի մաս, գործելակերպ է, որն ինքնին համարվում է խաղաղ: Թեև ժամանակակից հասարակություններում հավաքների ազատության իրացման համատեքստում այն արտասովոր երևույթ չէ, այլոց գործունեությունը լրջորեն խաթարելուն ուղղված ֆիզիկական գործելակերպը, որը նպատակային խոչընդոտում է երթևեկությանը և կյանքի բնականոն ընթացքին, Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանվող ազատության բուն իմաստը չէ: Նման փաստական հանգամանքները հետևանքներ են առաջացնում 11-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո «անհրաժեշտության» գնահատման համար (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 97 լրացուցիչ հղումներով և օրինակներով): Նույն տրամաբանությամբ՝ հանրային շենքերի գրավումը, չնայած իր անօրինական բնույթի և առաջացրած խաթարումների, ընդհանուր առմամբ, համարվում է խաղաղ գործելակերպ (*Cisse v. France*, 2002, §§ 39-40; *Tuskia and Others v. Georgia*, 2018, § 73; *Annenkov and Others v. Russia*, 2017, § 126):

28. Խորհրդարանի շենքի շրջափակումը, որի նպատակն է խաթարել օրենսդրական գործընթացը, պարտադիր չէ համարել ժողովրդավարական հասարակության հիմքերի խարխուլում և կարող է տեղավորվել 11-րդ հոդվածի սահմաններում, ինչպես օրենսդրի կողմից ընտրական համակարգի բարեփոխումները ձախողելու դեմ բողոքի պարագայում էր (*Makarashvili and Others v. Georgia*, 2022, §§ 89-94):

29. Հավաքը, որը ստվերվել է առանձին բռնարարքների պատճառով, ինքնաբերաբար չի համարվում ոչ խաղաղ, որպեսզի գրկվի 11-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից: Ցույցի ընթացքում այլ անձանց գործած եզակի բռնարարքների կամ պատժելի այլ արարքների հետևանքով որևէ անհատ չի դադարում օգտվել խաղաղ հավաքների իրավունքից, եթե տվյալ անձի նպատակները կամ վարքագիծը մնում են խաղաղ (*Ezelin v. France*, 1991, § 53; *Frumkin v. Russia*, 2016, § 99; *Laguna Guzman v. Spain*, 2020, § 35): Կազմակերպող միավորման անդամ չհանդիսացող և բռնի նպատակներ ունեցող անձանց՝ ցույցին միանալու հնարավորությունը չի կարող վերացնել այդ իրավունքը (*Primov and Others v. Russia*, 2014, § 155):

30. Մի շարք դեպքերում, երբ ցուցարարները ներգրավվել են բռնարարքների կատարմանը, Դատարանը որոշել է, որ խնդրո առարկա ցույցերը եղել են 11-րդ հոդվածի կիրառության տիրույթում, սակայն հասարակական կարգի խախտումը կամ հանցագործությունները կանխելու, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու հիմքով միջամտությունը 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին արդարացված է եղել (*Osmani and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia”* (dec.), 2001; *Protopapa v. Turkey*, 2019, §§ 104-112, և այլ գործեր, որոնք ամփոփված են *Gülcü v. Turkey*, 2016, §§ 93-97-ում):

31. Պարզելու համար, թե արդյոք զանգատաբերը կարող է պահանջել 11-րդ հոդվածով պաշտպանություն, Դատարանը հաշվի է առնում (i) արդյո՞ք հավաքը նախատեսված էր լինել խաղաղ, թե՞ կազմակերպիչներն ունեցել են բռնի նպատակներ, (ii) արդյո՞ք հավաքին միանալիս զանգատաբերն արտահայտել է բռնի նպատակներ, (iii) արդյո՞ք զանգատաբերը մարմնական վնասվածք է հասցրել որևէ մեկին (*Gülcü v. Turkey*, 2016, § 97; և *Shmorgunov and Others v. Ukraine*, 2021, § 491): Եթե սկզբնապես խաղաղ հավաքը վերաճել է բռնության, և երկու կողմերը՝ ցուցարարներն ու ոստիկանությունը, ներքաշվել են բռնարարքների մեջ, ապա երբեմն անհրաժեշտ է պարզել՝ ով է սկսել բռնությունը (*Primov and Others v. Russia*, 2014, § 157; *Çiçek and Others v. Türkiye*, 2022, §§ 137-141): Այս չափորոշիչների հիման վրա Դատարանը որպես *ratione materiae* անհամատեղելի՝ մերժեց զանգատաբերի բողոքը, ում մեղավոր էին ճանաչել դիտավորությամբ կատարված արարքների համար, որոնք նպաստել էին սկզբնապես խաղաղ հավաքի ընթացքում բախումներ սկսվելուն (նա առաջնորդում էր մի խումբ անձանց՝ նպատակ ունենալով ճեղքել ոստիկանական պատնեշը)՝ նկատի առնելով տվյալ միջադեպի նշանակությունն այլ գործոնների շարքում, որոնք հանդիսացել էին հավաքի վայրում բռնության աճի պատճառ (*Razvozhayev v. Russia and Ukraine and Udaltsov v. Russia*, 2019, §§ 282-285):

32. Եթե վերոնշյալ չափորոշիչների հիման վրա Դատարանն ընդունում է, որ զանգատաբերը գտնվում էր 11-րդ հոդվածի պաշտպանության ներքո, ապա միջամտության վերաբերյալ վերլուծությունը կենտրոնանում է վճռի համաչափության շուրջ: Դատարանն ընդունում է, որ երբ անհատները մասնակցում են բռնի գործողություններին, պետության իշխանությունները, երբ դիտարկում են հավաքների ազատությանը միջամտելու անհրաժեշտությունը, օգտվում են ավելի լայն հայեցողության շրջանակից, և նմանօրինակ դատապարտելի արարքների համար պատժի կիրառումը կարող է համարվել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի երաշխիքներին համապատասխանող (*Gülcü v. Turkey*, 2016, § 116): Դրանով հանդերձ, երկարատև ազատազրկումը ոստիկանության հետ անգեղ ընդհարվելու կամ ոստիկանների վրա քարեր կամ այլ առարկաներ նետելու համար, որոնք չեն առաջացրել ծանր վնասվածքներ, մի շարք գործերով համարվել է անհամաչափ (*Gülcü v. Turkey*, 2016, § 115; *Yaroslav Belousov v. Russia*, 2016, § 180; և *Barabanov v. Russia*, 2018, §§ 74-75):

Դ. Պոզիտիվ պարտավորություններ

33. Խաղաղ հավաքների իրավունքը պայմանավորվող պետության համար առաջացնում է նեգատիվ և պոզիտիվ պարտավորություններ (*Öllinger v. Austria*, 2006, § 35):

34. Պետությունները ոչ միայն պարտավոր են զերծ մնալ խաղաղ հավաքվելու իրավունքի նկատմամբ ոչ ողջամիտ անուղղակի սահմանափակումներ կիրառելուց, այլև պետք է երաշխավորեն այդ իրավունքը: Թեև 11-րդ հոդվածի հիմնական առարկան պաշտպանված իրավունքներից օգտվող անհատի պաշտպանությունն է պետական իշխանությունների

կամայական միջամտությունից, կարող են հավելյալ առաջ գալ պոզիտիվ պարտավորություններ, որոնք կապահովեն այդ իրավունքների արդյունավետ իրագործումը (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 158; *Djavit An v. Turkey*, 2003, § 57)։

35. Հավաքների ազատության արդյունավետ իրագործումն ապահովելու պոզիտիվ պարտավորությունն առանձնակի կարևոր է ժողովրդականություն չվայելող տեսակետներ ունեցող կամ փոքրամասնություններին պատկանող անձանց համար, քանի որ նրանք ավելի խոցելի են գոհականացման հարցում (*Bączkowski and Others v. Poland*, 2007, § 64)։ Մեռական փոքրամասնություններին աջակցելու նպատակով կազմակերպված հանրային միջոցառումներին առնչվող գործերով Դատարանը գտել է, որ պոզիտիվ պարտավորությունը պահանջում էր իշխանություններից «կիրառել հնարավոր բոլոր միջոցները, օրինակ՝ ցույցին ընդառաջ հանդես գալ հանրային հայտարարություններով, որոնց նպատակն է աներկբա ջատագովել հանդուրժող, համերաշխ կեցվածքը և նախազգուշացնել օրինախախտներին հնարավոր պատժամիջոցների բնույթի մասին» (*Identoba and Others v. Georgia*, 2015, § 99), ինչպես նաև «պատշաճ ապահովել ծրագրված միջոցառման անցկացումը՝ զսպելով հակընդդեմ ցույցի մասնակիցների հոմոֆոբ բանավոր հարձակումները և ֆիզիկական ճնշումը» (*Berkman v. Russia*, 2020, § 55-57)։

1. Հավաքի խաղաղ անցկացումն ապահովելու պարտավորությունը

36. Օրինական ցույցերի դեպքում իշխանությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր պատշաճ միջոցները դրանց խաղաղ ընթացքը և քաղաքացիների անվտանգությունը երաշխավորելու համար։ Այդուհանդերձ, նրանք չեն կարող դա բացարձակ կերպով երաշխավորել և ունեն լայն հայեցողություն կիրառելի միջոցների ընտրության հարցում։ Այս հարցում Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն առնչվում է ձեռնարկվելիք միջոցներին, այլ ոչ թե ակնկալվող արդյունքներին (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 159; *Giuliani and Gaggio v. Italy* [GC], 2011, § 251)։

37. Դատարանը, մասնավորապես, շեշտել է կանխարգելիչ անվտանգային միջոցներ ձեռնարկելու կարևորությունը, ինչպիսին, օրինակ, ցույցերի վայրում առաջին բուժօգնության ծառայությունների ներկայության ապահովումն է, ինչը կերաշխավորի ցանկացած միջոցառման, հանրահավաքի կամ այլ հավաքույթի անցնցում անցկացումը՝ լինի դա քաղաքական, մշակութային կամ այլ բնույթի (*Oya Ataman v. Turkey*, 2006, § 39)։

38. Բողոքի ցույցի առաջնորդների հետ հաղորդակցվելու պարտականությունն իշխանություններին՝ հավաքի խաղաղ անցկացումն երաշխավորելու, անկարգությունները կանխելու և մասնակիցների անվտանգությունն ապահովելու պոզիտիվ պարտավորությունների կենսական մաս է (*Frumkin v. Russia*, 2016, §§ 128-129)։ Դատարանը հղում է կատարել խաղաղ հավաքների ազատության մասին Վենետիկի հանձնաժողովի ուղեցույցներին, որտեղ, որպես կոնֆլիկտի սրացումից խուսափելու ճանապարհ, առաջարկվում է դիմել բանակցությանը կամ միջնորդված երկխոսությանը, եթե հավաքի ընթացքում առաջանում է դիմակայություն կամ այլ վեճ (*Frumkin v. Russia*, 2016, § 129, հղում է կատարվում ուղեցույց 5.4-ին, որը մեջբերված է նույն վճռի § 80-ում)։

2. Հակընդդեմ ցույցեր

39. Ցույցը կարող է վրդովեցնել կամ վիրավորել այն անձանց, ովքեր հակադրվում են դրա առաջ քաշած գաղափարներին կամ պնդումներին։ Մասնակիցները, սակայն, պետք է կարողանան իրականացնել ցույցն առանց ընդդիմախոսների կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու վախի, քանի որ նման վախը կարող է հետ պահել ընդհանուր գաղափարներ կամ շահեր պաշտպանող միավորումներին կամ այլ խմբերին իրենց համայնքի վրա ազդեցություն ունեցող խիստ հակասական հարցերի վերաբերյալ իրենց կարծիքներն ազատ արտահայտելուց։ Ժողովրդավարության պայմաններում հակընդդեմ ցույցի իրավունքը չի կարող խոչընդոտել ցույց անելու իրավունքի իրագործմանը (*Plattform “Ärzte für das Leben” v. Austria*, 1988, § 32)։

40. Պայմանավորվող պետություններն այդպիսով պարտավոր են ձեռնարկել ողջամիտ և պատշաճ միջոցներ, որոնք հնարավորություն կտան ապահովել օրինական ցույցերի խաղաղ ընթացքը (*The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria*, 2005, § 115):

41. Պետությունը կրում է ցուցարար երկու խմբերի հավաքների ազատության իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորություն և պետք է գտնի ամենամեղմ միջամտող միջոցները, որոնք, սկզբունքորեն, հնարավորություն կտան անցկացնել երկու ցույցերն էլ (*Fáber v. Hungary*, 2012, § 43):

42. Դատարանը թույլատրել է ներպետական իշխանություններին կիրառել միջոցների ընտրության հարցում լայն հայեցողություն հավաքների անցնցում անցկացումն ապահովելու համար, երբ առկա է բռնի հակընդդեմ ցույցի լուրջ սպառնալիք (*Alekseyev v. Russia*, 2010, § 75): Իշխանությունները պետք է «պատշաճ հասցեագրեն» ատելության ցանկացած խոսք, ինչպիսիք են՝ հակընդդեմ ցույցի մասնակիցների հնչեցրած՝ հոմոֆոբ ենթատեքստով արտահայտությունները (*Berkman v. Russia*, 2020, § 56):

43. Ազգային իշխանություններին տրվում է լայն հայեցողություն ոչ միայն այն պատճառով, որ երկու մրցակցող իրավունքները սկզբունքորեն օգտվում են հավասար պաշտպանությունից, որը համապատասխանում է հակառակ տեսանկյունների բախման պարագայում պետության չեզոքության պարտավորության նր, այլև այն պատճառով, որ իշխանությունները լավագույնս կարող են գնահատել անվտանգային և անկարգության ռիսկերը, ինչպես նաև ենթադրյալ ռիսկերով թելադրված պատշաճ միջոցառումները (*Fáber v. Hungary*, 2012, § 42):

44. Պետության հայեցողության շրջանակը կիրառելիս, երբ դիտարկվում է երկու խմբերի միջև բռնի հակամարտության վտանգը, իշխանությունների համար կարևոր նկատառումներ են նախկինում նմանօրինակ միջոցառումների ընթացքում տեղ գտած բռնությունը և հակընդդեմ ցույցի ազդեցությունը թիրախ հանդիսացած ցույցի վրա (*Fáber v. Hungary*, 2012, § 44):

45. Այդուհանդերձ, ռիսկի առկայությունն ինքնին բավարար չէ միջոցառումն արգելելու համար. գնահատման ընթացքում իշխանությունները պետք է հստակ հաշվարկեն անկարգությունների հնարավոր ծավալները, որ գնահատեն բռնի ընդհարումների վտանգը չեզոքացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները (*Fáber v. Hungary*, 2012, § 40; *Barankevich v. Russia*, 2007, § 33):

46. Եթե ցույցի ընթացքում հակադրվող խմբերի միջև լարվածության և թեժ բանավեճի ցանկացած հավանականություն այն արգելելու հիմք հանդիսանա, ապա հասարակությունը կզրկվի մեծամասնության կարծիքին հակադրվող որևէ հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ լսելու հնարավորությունից (*Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, § 107):

47. Հակընդդեմ ցույցի անվերապահ արգելքը չափազանց հեռու գնացող միջոց է, որը կպահանջի հստակ հիմնավորում, հատկապես, երբ տվյալ ցույցն առնչվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող որևէ խնդրի (*Öllinger v. Austria*, 2006, § 44):

Ե. Հավաքների ազատության իրավունքի սահմանափակումները

1. Միջամտություն հավաքների ազատության իրավունքի իրացմանը

48. Հավաքների ազատության իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Պարտադիր չէ, որ միջամտությունն այդ իրավունքի իրացմանը լինի բացարձակ արգելքի տեսքով՝ իրավական կամ *դե ֆակտո*, այլ կարող է ենթադրել իշխանությունների ձեռնարկած զանազան այլ միջոցներ (*Kudrevičius and Others v. Lithuania [GC]*, 2015, § 100): Միջամտություն մաս կազմող գործողությունները պետք է ներառեն ցանկացած սահմանափակող միջոց, որը ձեռնարկվում է դիմողի նկատմամբ՝ կապված նրա արտահայտիչ վարքագծի հետ (*Pivkina and Others v. Russia* (dec.), 2023, § 76):

49. Հարցը, թե եղել է արդյոք միջամտություն կամ, 11-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպմամբ, արդյոք սահմանափակվել է այդ իրավունքի իրացումը, սերտորեն փոխկապակցված է 11-րդ

հոդվածի կիրառելիության հարցի հետ (տե՛ս «Հավաքների ազատության իրավունքի շրջանակը» բաժինը):

50. 11-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «սահմանափակումները» պետք է մեկնաբանել՝ որպես եզրույթ, որն ընդգրկում է թե՛ հավաքից առաջ կամ ընթացքում ձեռնարկված միջոցները, թե՛ հավաքից հետո կիրառվող պատժիչ միջոցները (*Ezelin v. France*, 1991, § 39): Օրինակ, նախապես կիրառվող արգելքը կարող է ունենալ զսպող ազդեցություն այն անձանց համար, ովքեր նպատակ ունեն մասնակցել հանրահավաքին, և հետևաբար, կարող է համարվել միջամտություն, եթե նույնիսկ հանրահավաքը հաջորդիվ անցկացվի առանց իշխանությունների կողմից խոչընդոտների (*Bączkowski and Others v. Poland*, 2007, § 66-68): Այն դեպքերում, երբ հավաքի ժամն ու վայրը չափազանց կարևոր են մասնակիցների համար, ժամը կամ վայրը փոխելու հրահանգը, ինչպես նաև ելույթների, կարգախոսների կամ պաստառների արգելքը, կարող է համարվել միջամտություն հավաքների ազատությանը (*Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, §§ 79-80 և 108-109):

51. Միջամտություն է համարվում նաև հանրահավաքի մասնակցելու նպատակով անհատին ճամփորդելու թույլտվության մերժումը (*Djavit An v. Turkey*, 2003, §§ 61-62; տե՛ս նաև *Kasparov v. Russia*, 2016, § 67, և *Alici and Others v. Türkiye*, 2022, § 48, երկու դեպքերն էլ առնչվում են ցույցերի գնալու ճանապարհին զանգատաբերներին ազատությունից անհիմն զրկելուն, ինչը կանխել է այդ միջոցառումներին վերջիններիս մասնակցությունը): Նույնը վերաբերում է հանրահավաքի ընթացքում մասնակիցներին ցրելու կամ ձերբակալելու նպատակով իշխանությունների ձեռնարկված միջոցառումներին և դրան մասնակցելու համար կիրառվող պատիժներին (*Kasparov and Others v. Russia*, 2013, § 84; *Gafgaz Mammadov v. Azerbaijan*, 2015, § 50): Հավաքը ցրելու ընթացքում խաղաղ ցուցարարների դեմ կամ հասարակական կարգը պահպանելու նպատակով ոստիկանության կողմից ուժի կիրառումը միջամտություն է խաղաղ հավաքների ազատությանը (*Laguna Guzman v. Spain*, 2020, § 42; *Zakharov and Varzhabetyan v. Russia*, 2020, § 88):

52. Երկու տեսակի սահմանափակումներ են առկա, որոնցից յուրաքանչյուրն առաջացնում է մի շարք իրավական հարցեր: Առաջին տեսակը ներառում է հավաքների ազատության իրավունքի իրացման պայմանները, մասնավորապես՝ հավաքի պլանավորման և անցկացման կանոնները՝ սահմանված պարտադիր իրազեկման և արտոնման ընթացակարգերի միջոցով: Այստեսակ սահմանափակումները հիմնականում ուղղված են հավաքի կազմակերպիչներին (տե՛ս «Նախնական իրազեկման և արտոնման ընթացակարգերը» բաժինը):

Սահմանափակումների երկրորդ տեսակն ընդգրկում է հարկադրական միջոցներ, ինչպիսիք են՝ ամբոխի կառավարումը, հավաքի ցրումը, մասնակիցների ձերբակալումը և (կամ) հաջորդող պատիժները: Նման սահմանափակումները հիմնականում ուղղված են հավաքի փաստացի, մասնակցելու ցանկություն ունեցող կամ նախկին մասնակիցներին: Հարկադրական միջոցները և պատիժները կարող են առնչվել հավաքների անցկացման կանոնների խախտմանը կամ դրանց ընթացքում կատարված կոնկրետ իրավախախտումներին (տե՛ս «Դատապարտելի վարքագիծ» բաժինը):

53. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման նկատմամբ սահմանափակումների երկու տեսակները կարող են ի հայտ գալ՝ կապված նույն միջոցառման հետ (*Lashmankin and Others v. Russia*, 2017, § 407):

2. Սահմանափակումների հիմնավորումը

54. Խաղաղ հավաքների ազատության իրավունքին միջամտությունը 11-րդ հոդվածի խախտում է, բացառությամբ, երբ այն «նախատեսված է օրենքով», հետապնդում է 2-րդ մասում նշված՝ մեկ կամ մեկից ավելի իրավաչափ նպատակներ, «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» տվյալ նպատակին կամ նպատակներին հասնելու համար (*Vyrentsov v. Ukraine*, 2013, § 51):

ա. Նախատեսված է օրենքով

55. «Նախատեսված է օրենքով» արտահայտությունը ոչ միայն պահանջում է, որ վիճարկվող միջոցը պետք է ունենա ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավական հիմք, այլև վերաբերում է տվյալ օրենքի որակին, որը պետք է լինի մատչելի շահագրգիռ անձին և կանխատեսելի՝ դրա հետևանքների առումով (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 108-110): Մասնավորապես, որևէ նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը հնարավորություն կտա քաղաքացուն, անհրաժեշտության դեպքում պատշաճ խորհրդատվությամբ, տվյալ հանգամանքներում ողջամիտ սահմաններում կանխատեսել այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել կոնկրետ արարքը (*Djavit An v. Turkey*, 2003, § 65): Փորձը, սակայն, ցույց է տալիս, որ օրենքների ձևակերպման հարցում հնարավոր չէ հասնել բացարձակ ճշգրտության, հատկապես այն ոլորտներում, ուր իրավիճակը փոփոխվում է հասարակության մեջ գերիշխող տեսակետներին համապատասխան (*Ezelin v. France*, 1991, § 45): Մասնավորապես, կարիք չկա, որ որոշակի արարքի հետևանքները կանխատեսելի լինեն բացարձակ որոշակիությամբ, քանի որ փորձը ցույց է տալիս, որ դա անիրագործելի է: Թեև որոշակիությունը շատ ցանկալի է, այն կարող է իր հետ բերել չսպից ավելի կարծրություն, իսկ օրենքը պետք է ունակ լինի համընթաց քայլեր փոփոխվող հանգամանքներին: Ըստ այդմ, բազմաթիվ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի եզրույթներով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունն ու կիրառությունը պրակտիկայի հարց են (*Galstyan v. Armenia*, 2007, § 106; *Primov and Others v. Russia*, 2014, § 125):

56. Ազգային դատարաններին վերապահված դատաքննության դերն է փարատել առկա մեկնաբանողական կասկածները, հետևաբար, Դատարանն ունի սահմանափակ լիազորություն՝ վերանայելու ներպետական օրենսդրությանը համապատասխանությունը, քանի որ ներպետական օրենսդրության մեկնաբանման և կիրառման հարցը հիմնականում ազգային իշխանությունների, հատկապես՝ դատարանների գործառնություն է: Ավելին, ներպետական օրենսդրությունից պահանջվող որոշակիության աստիճանը, որը, ամեն պարագայում, չի կարող նախատեսել բոլոր հնարավոր տարբերակները, մեծապես կախված է տվյալ իրավական ակտի բովանդակությունից, կիրառելիության ոլորտից և անձանց քանակից ու կարգավիճակից, ում այն հասցեագրված է (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 110):

57. Որակական պահանջները բավարարելու համար ներպետական օրենսդրությունը պետք է նախատեսի իշխանությունների կամայական միջամտություններից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները պաշտպանելու իրավական միջոց: Հիմնարար իրավունքների վրա ազդեցություն ունեցող հարցերում գործադիրին անսահմանափակ իշխանության հասնող իրավական հայեցողություն շնորհելը հակասում է իրավունքի գերակայությանը, որը Կոնվենցիայում ամրագրված ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 115):

58. Հետևաբար, *Lashmankin and Others v. Russia* (2017, § 430) գործով ներպետական օրենսդրական այն կարգավորումները, որոնք թույլ են տալիս գործադիրին առաջարկել հանրային միջոցառումների վայրի, ժամի կամ անցկացման ձևի փոփոխություն և չեն նախատեսում համարժեք ու արդյունավետ իրավական երաշխիքներ այդ լիազորությունների կամայական և խտրական կիրառման դեմ, համարվել են Կոնվենցիայի «օրենքի որակի» պահանջներին չհամապատասխանող: Նույն տրամաբանությամբ, գործադիր իշխանությունների լայն հայեցողությունը՝ որոշելու, թե որ վարքագիծն է պաշտոնական իրազեկման ենթակա «հանրային միջոցառման», երբ բացակայում են այն ոչ ֆորմալ հավաքությից տարբերակող չափորոշիչները, Դատարանի մոտ առաջացրել էին կասկածներ առ այն, որ իրազեկման ընթացակարգի պահանջները խախտելու համար կիրառված վարչական հարկադրական միջոցները «նախատեսված էին օրենքով» (*Navalnyy v. Russia* [GC], 2018, §§ 117-118):

59. Հարկադրական միջոցները, որոնք կիրառվում են՝ հղում կատարելով իրավական նորմերին, որոնք որևէ կապ չունեն տվյալ միջոցների հետապնդած նպատակի հետ, կարող են որակվել՝ որպես կամայական և անօրինական: Այսպես, ոստիկանության ներկայացուցչի օրինական պահանջին չենթարկվելու կամ խուլիգանության համար պատիժները, որոնք կիրառվում են

հավաքին մասնակցությունը կանխելու կամ մասնակցության համար պատժելու նպատակով, չեն համապատասխանում Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջին (*Hakobyan and Others v. Armenia*, 2012, § 107; *Huseynli and Others v. Azerbaijan*, 2016, § 98): Նույն կերպ, որոշումը, որով դիմումատուն պարտավորվում էր 45 այլ անձանց հետ միասին վճարել ցույցի ժամանակ տուժած ոստիկաններին վճարված բժշկական ծախսերի փոխհատուցման համար, չնայած քրեական դատավարության ընթացքում արդարացված լինելուն, ճանաչվել է կամայական՝ ներպետական օրենսդրության մեջ կանխատեսելի իրավական հիմքի բացակայության պատճառով (*Kazan v. Türkiye*, 2023, §§ 67-73):

բ. Իրավաչափ նպատակ

60. Հավաքների ազատության իրավունքից բացառությունների նեղ մեկնաբանության պահանջը կիրառելի է նաև 11-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված իրավաչափ նպատակների նկատմամբ: Մասնավորապես, հավաքների ազատության իրավունքի իրացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների՝ առավել հաճախ հիշատակվող թույլատրելի հիմքերից մեկը՝ «անկարգությունների կանխումը» հարկ է նեղ մեկնաբանել, և դա պետք է անել ֆրանսերեն տեքստում գործածված “*la défense de l'ordre*” արտահայտությանը համահունչ (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 122):

61. Անկարգությունները կանխելուց զատ, որպես իրավաչափ նպատակ՝ հաճախ հիշատակվում է նաև այլ անձանց իրավունքների պաշտպանությունը: Իրականում, այս երկու նպատակները սերտորեն փոխկապակցված են, քանի որ «հանրային վայրերում խաղաղ հավաքների ազատության սահմանափակումները կարող են պաշտպանել այլ անձանց իրավունքները՝ կանխելով անկարգությունները և ապահովելով երթևեկության բնականոն հոսքը» (*Eva Molnár v. Hungary*, 2008, § 34): Քանի որ հանրային միջոցառման ընթացքում մարդկանց կուտակումը հղի է վտանգներով, հազվադեպ երևույթ չէ, երբ տարբեր երկրներում պետական իշխանությունները կիրառում են ծրագրված հանրային հավաքույթի վայրի, օրվա, ժամի, անցկացման ձևի կամ կարգի սահմանափակումներ (*Primov and Others v. Russia*, 2014, § 130):

62. Դատարանը, սովորաբար, ընդունում է, որ վիճարկվող միջոցերը հետապնդել են «անկարգությունները կանխելու» կամ «այլ անձանց իրավունքները պաշտպանելու» նպատակ կամ երկու նպատակներն էլ միաժամանակ, թեև եթե նշված նպատակն ակնհայտորեն վերաբերելի չէ տվյալ հանգամանքներում, այն կարող է մերժվել: Մասնավորապես, Դատարանը չի ընդունել անկարգությունները կանխելու հիմնավորումն այն իրադարձությունների դեպքում, երբ հավաքները եղել են ինքնաբուխ և չեն առաջացրել որևէ անհարմարություն (*Navalnyy v. Russia* [GC], 2018, §§ 124-126): ԼԳԲՏ չտեղաշարժվող ցույցերի սահմանափակման համատեքստում Դատարանը մերժել է «բարոյականության պաշտպանության» հիմնավորումը և որակել այն խտրական (*Bayev and Others v. Russia*, 2017, §§ 66-69, քննվել է 10-րդ հոդվածի շրջանակում):

63. «Այլ անձանց կրոնական համոզմունքների հետ անհամատեղելի» լինելու հիմքով վիճարկվածություն քարոզող կրոնական միջոցառումն արգելելու գործով Դատարանը որոշել է, որ թեև հավաքների ազատության իրավունքը կարող է սահմանափակվել անկարգությունները կանխելու կամ այլ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակներով, որոնք երկուսն էլ, Կոնվենցիայի համաձայն, իրավաչափ նպատակներ են և ներպետական օրենսդրությամբ նախատեսված թույլատրելի հիմքեր, այլ անձանց կրոնական համոզմունքների հետ անհամատեղելիությունը, որպես այդպիսին, ինչը կառավարության հիմնավորումն էր այս գործում, չի բավարարում «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինելու պահանջը (*Centre of Societies for Krishna Consciousness in Russia*, 2021, § 55):

64. Անկախ այն հանգամանքից, թե Դատարանն ընդունում է, որ իշխանությունները հետապնդել են իրավաչափ նպատակ կամ մերժում է կառավարության ներկայացրած նպատակները, Դատարանը կարող է քննել 18-րդ հոդվածի ներքո ներկայացված զանգատն առ այն, որ խնդրո առարկա միջոցները հետապնդել են թաքնված նպատակ, ինչպիսին է քաղաքական հետապնդումը (որպես միակ նպատակ կամ ի հավելումն իրավաչափ նպատակի): Գործերի մեծամասնության պարագայում Դատարանը գտել է, որ 18-րդ հոդվածի ներքո

ներկայացված պնդումները չեն բարձրացրել 5-րդ և 11-րդ հոդվածների ներքո քննված գանգատներին առնչվող առանձին խնդիր (*Nemtsov v. Russia*, 2014, § 130; *Frumkin v. Russia*, 2016, § 173): Սակայն, եթե նման պնդումները ներկայացնում են գործի հիմնարար կողմը, Դատարանը կարող է դրանք առանձին քննել (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 164):⁴

65. *Dareskizb Ltd v. Armenia* գործով Դատարանը մերժեց կառավարության հղումը 15-րդ հոդվածին՝ որպես կոնվենցիոն որոշ իրավունքներից, մասնավորապես՝ 10-րդ և 11-րդ հոդվածներից (§§ 45-46) շեղվելու պատճառ այն հիմքով, որ ընդդիմության բողոքի ցույցերը ստեղծել էին «հասարակական կարգին սպառնացող լուրջ իրավիճակ», սակայն չէին հասել «ազգի կյանքին սպառնացող» արտակարգ դրության շեմը, որով կհիմնավորվեր շեղումը (§ 62): 10-րդ հոդվածի շրջանակներում գործի ըստ էության քննությանը Դատարանն ընդունել է, որ արտակարգ իրավիճակի պայմաններում իշխանություններին քննադատող նյութ հրատարակելու արգելքը դիմումատու օրաթերթի նկատմամբ հետապնդել է անկարգությունները և հանցագործությունները կանխելու «իրավաչափ նպատակ», սակայն գտել է, որ նման սահմանափակումները, որոնք ունեին քաղաքական բանավեճը ճնշող և չհամընկնող կարծիքները լռեցնող ազդեցություն, հակասել են 10-րդ հոդվածի բուն նպատակին և անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում (§ 78):

գ. Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում

66. Երբ դիտարկվում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակումները «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» համարելու հարցը, Պայմանավորվող կողմերն օգտվում են որոշակի, բայց ոչ անսահմանափակ հայեցողությունից (*Barraco v. France*, 2009, § 42): Ամեն դեպքում, սահմանափակման՝ Կոնվենցիային համապատասխանության վերաբերյալ վերջնական որոշում կայացնում է Դատարանը, և դա արվում է՝ գնահատելով կոնկրետ գործի հանգամանքները (*Galstyan v. Armenia*, 2007, § 114):

67. Խնդրո առարկա միջոցը պետք է համապատասխանի «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» և համաչափ լինի «իրավաչափ նպատակին», իսկ այն հիմնավորող պատճառները, որոնք ներկայացնում են ազգային իշխանությունները, պետք է լինեն «վերաբերելի և բավարար»: Ազգային իշխանությունները պետք է կիրառեն չափանիշներ, որոնք համապատասխանում են 11-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին և, ավելին, իրենց որոշումներում հիմնվեն վերաբերելի փաստերի ընդունելի գնահատման վրա: Համաչափության սկզբունքը պահանջում է հավասարակշռության ապահովում, մի կողմից, 2-րդ մասում թվարկված նպատակների, իսկ մյուս կողմից, փողոցներում կամ հանրային այլ վայրերում հավաքված անձանց կողմից խոսքով, շարժումով կամ նույնիսկ լռությամբ կարծիքների ազատ արտահայտման պահանջների միջև (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 142-144):

68. Կոնվենցիայի այլ դրույթների, ինչպիսիք են՝ 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների խախտումները, որոնք առնչվում են խաղաղ հավաքին գանգատների մասնակցությանը, որոշիչ դեր են ունեցել 11-րդ հոդվածով սահմանված իրավունքներին վերաբերելի միջամտության՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինելու վերաբերյալ Դատարանի եզրահանգման համար (*Navalnyy and Gunko v. Russia*, 2020, §§ 84-93; *Zakharov and Varzhabetyan v. Russia*, 2020, §§ 87-91):

ի. Հավաքի ընթացքում արտահայտված կարծիքների բովանդակության հիման վրա միջամտության հարցում հայեցողության նեղ շրջանակ

69. Հավաքների ազատությունը, որն ամրագրված է Կոնվենցիայի 11-րդ հոդվածում, պաշտպանում է այն ցույցերը, որոնք կարող են վրդովվեցնել կամ վիրավորել այն անձանց, ովքեր հակադրվում են դրա առաջ քաշած գաղափարներին կամ պնդումներին: Որքան էլ ցնցող և անընդունելի լինեն իշխանությունների համար արտահայտված որոշ տեսակետներ կամ օգտագործված բառեր, հավաքների և արտահայտման ազատությանը միջամտող բոլոր միջոցները, բացառությամբ այն դեպքերի, երբ արվում են բռնության կոչեր կամ մերժվում են

4. Տե՛ս *Guide on Article 18 – Limitation on use of restrictions on rights*.

ժողովրդավարական սկզբունքները, վնաս են հասցնում ժողովրդավարությանը և հաճախ նույնիսկ վտանգում այն (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 145; *Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, § 97): Փոքրամասնական խմբի կողմից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացումը մեծամասնության համար դրանց ընդունելի լինելու հանգամանքով պայմանավորելը համադրելի չէ Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքներին: Եթե այդպես լիներ, ապա փոքրամասնական խմբի կրոնի, արտահայտման և հավաքների ազատության իրավունքները կդառնային պարզապես տեսական, քան գործնական և արդյունավետ, ինչպես պահանջում է Կոնվենցիան (*Alekseyev v. Russia*, 2010, § 81; *Barankevich v. Russia*, 2007, § 31):

70. Հետևաբար, տարբերակում պետք է դրվի հավաքների ազատության բովանդակության հիմքով սահմանափակումների և տեխնիկական բնույթի սահմանափակումների միջև:

71. Երկրում կամ տեղական մակարդակում քաղաքական կյանքին առնչվող հանրային միջոցառումները պետք է ամուր պաշտպանված լինեն 11-րդ հոդվածով: Հազվադեպ են իրավիճակները, երբ հավաքը կարող է իրավաչափորեն արգելվել՝ մասնակիցների հնչեցվելիք ուղերձների բովանդակությունից ելնելով: Կառավարությունը չպետք է ունենա ցույցն արգելելու լիազորություն այն պատճառով, որ «սխալ» է համարում ցուցարարների ուղերձը: Դա առանձնահատուկ կարևորվում է այն դեպքերում, երբ քննադատության հիմնական թիրախն այն իշխանություններն են, որոնք լիազորված են արտոնել կամ արգելել հանրային հավաքը: Բովանդակության հիմքով հավաքների ազատության սահմանափակումները ենթակա են այս Դատարանի ամենից լուրջ քննությանը (*Navalnyy v. Russia*, [GC], 2018, § 136; *Primov and Others v. Russia*, 2014, §§ 134-135; *Centre of Societies for Krishna Consciousness in Russia*, 2021, § 52):

72. Իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում գաղափարները, որոնք վիճարկում են առկա կարգը, և որոնց իրագործումը խրախուսվում է խաղաղ միջոցներով, պետք է ապահովվեն հավաքների իրավունքի իրացման և օրինական այլ միջոցներով արտահայտման պատշաճ հնարավորությամբ (*Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, § 97; *Sergey Kuznetsov v. Russia*, 2008, § 45):

73. Այն հանգամանքը, որ մի խումբ անձինք ինքնավարության կոչեր են հնչեցնում կամ նույնիսկ պահանջում պետության տարածքի մի մասի անջատում՝ պահանջելով սահմանադրական և տարածքային հիմնարար փոփոխություններ, ինքնաբերաբար չի արդարացնում այդ խմբի հավաքների արգելքը: Ելույթներում և ցույցերին տարածքային փոփոխությունների պահանջներ հնչեցնելն ինքնին չի պարունակում երկրի տարածքային ամբողջականության կամ ազգային անվտանգության համար սպառնալիք (*Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria*, 2001, § 97):

74. Հավաքն արտոնելու պայմանը, որով ցուցարարներին արգելվել է կրել պետական գրանցում չունեցող կուսակցությունների, քաղաքական կազմակերպությունների կամ միավորումների խորհրդանիշները, չի համապատասխանել «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» այն գանգատարների դեպքում, ով կրել է չգրանցված կոմունիստական խորհրդանիշներ (*Solari v. the Republic of Moldova*, 2017, § 39): Նմանապես, Դատարանը գտել է, որ չարտոնված ուղիով երթի ընթացքում Ա. Օջալանի լուսանկարով փաստառ կրելու համար քրեական պատիժն արդարացված չէր, քանի որ պաստառը չէր կարող համարվել արտահայտման ձև, որով բռնության, զինված դիմադրության կամ ապստամբության կոչ է արվել կամ կատարվել է ահաբեկչական կազմակերպության գովազդ (*Silgir v. Turkey*, 2022, § 30): Հակասական շինարարական ծրագրի վերաբերյալ անպարկեշտ կարգախոսով փաստառներ կրելու համար գանգատարների ձերբակալությանը և դատապարտմանն առնչվող գործով Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել 11-րդ հոդվածի խախտում՝ մեկնաբանված 10-րդ հոդվածի լույսի ներքո, քանի որ վիճարկվող կարգախոսի անպարկեշտ բնույթն անհարկի կերպով առանձնացվել էր դրա քաղաքական համատեքստից (*Peradze and Others v. Georgia*, 2022, § 45):

ii. Հավաքների ընդհանուր արգելքի հարցում հայեցողության նեղ շրջանակ

75. Պետությունը կարող է ընդունել Կոնվենցիային համապատասխանող ընդհանուր միջոցներ, որոնք կիրառելի են նախապես սահմանված իրավիճակներում՝ յուրաքանչյուր դեպքի անհատական փաստերից անկախ, եթե նույնիսկ դա կարող է հանգեցնել առանձին դժվար

դեպքերի (*Animal Defenders International v. the United Kingdom* [GC], 2013, § 106): Այնուամենայնիվ, ցույցերի ընդհանուր արգելքը կարող է արդարացված լինել միայն այն պարագայում, երբ առկա է իրական վտանգ, որ դրանք կհանգեցնեն անկարգությունների, որոնք հնարավոր չէ կանխել այլ՝ նվազ խիստ միջոցներով: Մրա հետ կապված, իշխանությունները պետք է հաշվի առնեն հասարակական կարգի համար ինքնին վտանգ չներկայացնող ցույցերի վրա արգելքի ազդեցությունը: Արգելքը կարող է 11-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով համարվել անհրաժեշտ միայն այն պարագայում, երբ դա հիմնավորող անվտանգային նկատառումներն ակնհայտորեն ավելի ծանրակշիռ են, քան արգելքի տակ ընկնող ցույցերի անբարենպաստ հետևանքները, և չկա արգելքի շրջանակը նեղ՝ տարածքային կիրառելիության և տևողության սահմանման միջոցով դրա անցանկալի կողմնակի ազդեցություններից խուսափելու հնարավորություն (*Christians against Racism and Fascism v. the United Kingdom*, 1980):

iii. Բնականոն կյանքը և երթևեկությունը դիտավորությամբ խաթարելու համար պատժամիջոցներ կիրառելու հայեցողության առավել լայն շրջանակ

76. Կազմակերպիչների՝ այս կանոններին դիտավորյալ չհետևելը և ցույցի կամ դրա մի մասի այնպիսի կազմակերպումը, որը կխաթարի բնականոն կյանքը և գործունեության այլ ձևերն ավելի մեծ ծավալով, քան անխուսափելի է տվյալ հանգամանքներում, գործելակերպ է, որը չի կարող օգտվել Կոնվենցիայով նախատեսված այն նույն արտոնյալ պաշտպանությունից, ինչ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական խոսքը կամ բանավեճը կամ նման հարցերի վերաբերյալ կարծիքների խաղաղ արտահայտումը: Նման գործելակերպի սահմանփակմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը գնահատելիս Պայմանավորվող կողմերն օգտվում են հայեցողության լայն շրջանակից (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 156): Այս նկատառումները հավասարապես կիրառելի են համարվել այն արարքների դեպքում, որոնք, թեև ոչ բռնի, լրջորեն խոչընդոտում են արդարադատության պատշաճ իրականացմանը (*Ekrem Can and Others v. Turkey*, 2022, § 91):

77. Այդ հայեցողության շրջանակում գործելով՝ ազգային իշխանությունները, այդուհանդերձ, պետք է կիրառեն չափանիշներ, որոնք համապատասխանում են 11-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, և նրանց որոշումները պետք է հիմնվեն վերաբերելի փաստերի ընդունելի գնահատման վրա, որպիսի ճախողումը կարող է հանգեցնել 11-րդ հոդվածի խախտման (*Körtvélyessy v. Hungary*, 2016, §§ 26-29; տե՛ս «Անօրինական հավաք» բաժինը): Ինչ վերաբերում է ազգային իշխանությունների կիրառած պատժամիջոցներին, ապա Պայմանավորվող կողմերը չունեն անսահմանափակ հայեցողություն՝ կիրառելու իրենց կարծիքով նպատակահարմար ցանկացած միջոց, և Դատարանն է գնահատում հասարակական կարգի որոշակի խախտումների հանգեցրած վարքագծի համար կիրառված պատիժների բնույթը և խստությունը՝ նպատակ ունենալով ուսումնասիրել միջամտության համաչափությունը հետապնդած նպատակին (*Ekrem Can and Others v. Turkey*, 2022, § 91, լրացուցիչ հղումներով):

iv. Չսպող ազդեցություն

78. Միջոցի համաչափությունը դիտարկելու ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել դրա զսպող ազդեցությունը: Մասնավորապես, հավաքը նախօրոք արգելելը կարող է մասնակիցներին հետ պահել դրան մասնակցելուց (*Christian Democratic People's Party v. Moldova*, 2006, § 77): Նախօրոք կիրառվող արգելքը կարող է զսպող ազդեցություն ունենալ այն անձանց նկատմամբ, ովքեր նպատակ ունեն մասնակցելու հանրահավաքին, օրինակ, պայմանավորված նրանով, որ իրենք չեն ստացել պաշտոնական արտոնություն և, հետևաբար, իշխանությունները չեն երաշխավորել պաշտպանություն հնարավոր հակընդդեմ ցույցի՝ թշնամաբար տրամադրված մասնակիցներից, եթե նույնիսկ այդ հավաքը հաջորդիվ ընթանում է առանց իշխանությունների կողմից խոչընդոտներ առաջացնելու (*Bączkowski and Others v. Poland*, 2007, §§ 66-68): Չսպող ազդեցությունը կարող է նաև շարունակվել բողոքի մասնակիցներին արդարացնելուց կամ նրանց նկատմամբ մեղադրանքների հրաժարվելուց հետո, քանի որ հետապնդումն ինքնին կարող էր նրանց հետ պահել նման հանրահավաքներին մասնակցելուց (*Nurettin Aldemir and Others v. Turkey*, 2007, § 34):

79. Հաջորդող հարկադրական միջոցները, ինչպիսիք են՝ հավաքը ցրելու նպատակով ուժի գործադրումը, մասնակիցների ձերբակալումները, կալանավորումները և (կամ) հետագա

վարչական պատիժները, կարող են հուսահատեցնող ազդեցություն ունենալ նրանց և այլ անձանց համար՝ նմանօրինակ հավաքներին ապագայում մասնակցելու առումով: (*Balçık and Others v. Turkey*, 2007, § 41): Չսպող ազդեցությունն ինքնաբերաբար չի վերանում, եթե անգամ հարկադրական միջոցը բեկանվել է, օրինակ՝ դատարանները հետագայում չեղյալ են ճանաչել տուգանքները (*The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria*, 2005, § 135): Չսպող ազդեցությունը հաճախ առկա է քաղաքական հավաքների նկատմամբ կիրառվող միջոցներում այն իմաստով, որ դրանց ճնշումը, ընդհանուր առմամբ, կարող է հետ պահել կազմակերպիչներին և մասնակիցներին բողոքի ակցիաներ պլանավորելուց և դրանց մասնակցելուց կամ ընդդիմադիր քաղաքական գործունեությանն ակտիվորեն մասնակցելուց: Այս միջոցները կարող են ունենալ լուրջ զսպող ներուժ և հետ պահել ընդդիմության այլ աջակիցներին և հանրությանը ցույցերին, նաև ընդհանրապես, բաց քաղաքական բանավեճերին մասնակցելուց: Չսպող ազդեցությունը կարող է ավելի մեծանալ, եթե հարկադրական միջոցները թիրախավորում են հայտնի հանրային գործչի և արժանանում լրատվամիջոցների լայն լուսաբանման (*Nemtsov v. Russia*, 2014, §§ 77-78):

80. Հավաքի՝ որևէ բռնարար չկատարած մասնակիցներին ձերբակալելու նպատակով ոստիկանության կողմից ուժ գործադրելը կարող է զսպող ազդեցություն ունենալ զանգատարերի և այլ անձանց համար՝ հետ պահելով նրանց նման հանրահավաքներին մասնակցելուց (*Zakharov and Varzhabetyan v. Russia*, 2020, § 90; *Navalnyy and Gunko v. Russia*, 2020, § 88):

v. Պատժամիջոցներ՝ բնույթը և խստությունը

81. Կիրառված պատիժների բնույթը և խստությունը գործոններ են, որ հարկ է հաշվի առնել հետապնդած նպատակին միջամտության համաչափությունը գնահատելիս (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 146): Եթե ցույցի մասնակիցների նկատմամբ կիրառված պատժամիջոցները քրեական բնույթի են, ապա դրանք պահանջում են առանձնահատուկ հիմնավորում (*Rai and Evans v. the United Kingdom* (dec.), 2009): Սկզբունքորեն, խաղաղ ցույցը չպետք է դառնա քրեական պատժի (*Akgöl and Göl v. Turkey*, 2011, § 43) և հատկապես, ազատագրկման (*Gün and Others v. Turkey*, 2013, § 83) սպառնալիքի առարկա: Այսպիսով, Դատարանը հատուկ ուշադրությամբ է քննում այն գործերը, որտեղ ոչ բռնի վարքագծի համար ազգային իշխանությունների կիրառված պատժամիջոցները ներառում են ազատագրկումը (*Taranenko v. Russia*, 2014, § 87; *Ekrem Can and Others v. Turkey*, 2022, § 92):

82. Այսպես, չարտոնված ցույցի մասնակցելու համար 3 եվրո տուգանքը համարվել է համաչափ պատիժ (*Ziliberberg v. Moldova* (dec.), 2004): Նմանապես, սահմանված բարձր անվտանգային գոտում ապօրինի ցույց կազմակերպելու համար մոտ 500 եվրո տուգանքը նույնպես համարվել է համաչափ տվյալ հանգամանքներում (*Rai and Evans v. the United Kingdom* (dec.), 2009): Ի հակադրություն, ճանապարհը բացելու ոստիկանության հրահանգներին չենթարկվելու և խաղաղ ցույցի ժամանակ ոստիկանների վրա լոբի նետելու համար ութօրյա վարչական կալանքն անհամաչափ է համարվել ազատությունից զրկումը՝ որպես պատիժ հիմնավորելու համար դատարանների կողմից բավարար պատճառներ չբերելու պատճառով (*Chkhartishvili v. Georgia*, 2023, § 60):

83. Մյուս կողմից, եթե հավաքն ընդհատվել է արտոնված չլինելու հիմքով, համաչափության գնահատումը կենտրոնանալու է ոչ միայն հետագա վարույթներով դրա մասնակիցների նկատմամբ կիրառված պատժի, այլև հավաքի վայրում իշխանությունների գործելակերպի վրա: Դատարանը պետք է համոզվի, որ ներպետական օրենսդրությամբ իշխանություններին տրված հայեցողությունից օգտվելու ընթացքում դրանք գործել են հավաքների ազատության իրավունքի էությանը համահունչ և, եթե վերաբերելի է, պատշաճ գիտակցել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական խոսքի, բանավեճի և նման հարցերի վերաբերյալ կարծիքների խաղաղ արտահայտման համար Կոնվենցիայով նախատեսված արտոնյալ պաշտպանությունը: *Navalnyy v. Russia* [GC], 2018 թվականի գործով Դատարանը, եզրակացնելով, որ ոստիկանության կողմից ցուցարարներին ցրելու ձևը խախտել էր 11-րդ հոդվածը, գտել է, որ այդ հանգամանքներում էական չէր՝ 25 եվրո տուգանքը համապատասխանում էր հանրային միջոցառումներին վարքագծի կանոնների խախտմանը, թե ոչ (§ 133):

vi. Ֆրուն և ուժի գործադրում

84. Հավաքը ցրելու որոշումը պետք է հիմնավորվի վերաբերելի և բավարար պատճառաբանություններով (*Ibrahimov and Others v. Azerbaijan*, 2016, § 80; *Laguna Guzman v. Spain*, 2020, § 51): Հավաք անցկացնելու ձևական պահանջներին չհամապատասխանելը բավարար հիմք չէ այն ցրելու համար (տե՛ս բաժին 2 (2)). Անօրինական հավաք):

85. Միջամտությունը հավաքների ազատությանը, ներառյալ՝ դրա ընդհատումը, ցրումը կամ մասնակիցների ձերբակալումը կարող է հիմնավորվել միայն կոնկրետ և հստակ էական հիմքերով, ինչպիսիք են՝ օրենքով նախատեսված լուրջ վտանգները (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 137) և միայն այն բանից հետո, երբ մասնակիցներին բավարար հնարավորություն է տրվել արտահայտելու իրենց տեսակետները (*Éva Molnár v. Hungary*, 2008, §§ 42 և 43):

86. Անկախ այն հանգամանքից՝ ոստիկանությունը միջամտում է՝ արձագանքելով հավաքի հետևանքով բնականոն կյանքի խաթարմանը, օրինակ՝ երթևեկությանը խոչընդոտելուն, թե մասնակիցների բռնարարքները զսպելու նպատակով՝ ուժի գործադրումը պետք է համաչափ լինի անկարգությունները կանխելու և այլ անձանց իրավունքները պաշտպանելու իրավաչափ նպատակներին (*Oya Ataman v. Turkey*, 2006, §§ 41-43; *Laguna Guzman v. Spain*, 2020, § 54):

87. Գնահատականն առ այն, որ զանգառաբերների նկատմամբ ուժի գործադրումը եղել է ոչ անհրաժեշտ և անհամաչափ և այդպիսով հակասել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին, կարող է հանգեցնել եզրակացության, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այն «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» (*Zakharov and Varzhabetyan v. Russia*, 2020, § 90):

88. Հավաքը ցրելու այնպիսի միջոցների կիրառումը, ինչպիսիք են՝ ջրաշիթերի և արցունքաբեր գազի օգտագործումը ցույցի մասնակիցների դեմ կամ նրանց ուղղությամբ գրահապատ մեքենաներ վարելը, պահանջում է հատուկ հիմնավորում (*Eğitim ve Bilim Emekçileri Sendikası and Others v. Turkey*, 2016, § 108): Հատկապես դժվար է հիմնավորել հավաքը ցրելու համար միջոցների, ինչպիսին է՝ արցունքաբեր գազով նռնակների օգտագործումն այն պայմաններում, երբ հնարավոր չէ ցույցի մասնակիցներին տարբերել դրա հետ առնչություն չունեցող անցորդներից (*Süleyman Çelebi and Others v. Turkey (no. 2)*, 2017, § 111): Ավելին, հավաքը ցրելու համար ուժի գործադրումը որոշ հանգամանքներում կարող է համարվել անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, որը հակասում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին (*ibid.*, § 79): Մասնավորապես, արցունքաբեր գազի կիրառումը պետք է ենթարկվի հստակ սահմանված կանոնների, ինչպես նաև պետք է լինի իրավապահների համարժեք պատրաստությունը, ցույցերի ընթացքում անձնակազմի նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը, հավաքից հետո (*ex post facto*) ուժի գործադրման, հատկապես այն անձանց դեմ, ովքեր ցույց չեն տվել բռնի դիմադրություն, անհրաժեշտության, համաչափության և ողջամտության արդյունավետ վերանայումը երաշխավորող համակարգ (*İzci v. Turkey*, 2013, § 99):

89. Բողոքի ակցիայի մասնակիցների և իրավապահ մարմինների ծառայողների միջև խոշոր ընդհարման դեպքում, երբ երկու կողմերն էլ գործադրել են բռնություն, իշխանություններից պահանջվում է սեփական նախաձեռնությամբ կատարել քննություն և մանրամասն ուսումնասիրել ոչ միայն բռնարարքներ կատարած բողոքի ակցիայի մասնակիցների գործողությունները, այլև իրավապահ մարմինների ներկայացուցիչների բռնի գործողությունները (*Zakharov and Varzhabetyan v. Russia*, 2020, §§ 53-55)⁵:

2. Նախնական իրազեկման և արտոնման ընթացակարգերը

90. Սկզբունքորեն չի հակասում 11-րդ հոդվածի ոգուն, եթե Բարձր Պայմանավորվող կողմը հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության նկատառումներով սահմանի հավաքների կազմակերպումն արտոնելու պահանջ (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 147, լրացուցիչ հղումներով; *Oya Ataman v. Turkey*, 2006, § 37):

5. Տե՛ս *Guide on Mass Protests*, Sections IV.B և IV.C, որոնք առնչվում են 3-րդ հոդվածով սահմանված նյութական իրավունքին և վերաբերելի դատավարական պարտավորությանը:

1. Նախնական իրազեկման և արտոնման ընթացակարգերի նպատակը

91. Հանրային միջոցառման մասին իրազեկման և նույնիսկ դրա արտոնման ընթացակարգերը, սովորաբար, չեն ունենա հարում Կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված իրավունքի բուն էությունը, քանի դեռ այդ ընթացակարգերի նպատակն է հնարավորություն տալ իշխանություններին ողջամիտ և պատշաճ միջոցներ ձեռնարկել հավաքի, հանրահավաքի կամ որևէ այլ հավաքույթի սահուն ընթացքը երաշխավորելու համար (*Sergey Kuznetsov v. Russia*, 2008, § 42): Հանրային հավաքույթների կազմակերպիչները պետք է ենթարկվեն այդ գործընթացը կարգավորող կանոններին՝ հետևելով գործող կարգավորումներին (*Primov and Others v. Russia*, 2014, § 117):

92. Արտոնություն տալու ընթացակարգը համապատասխանում է 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին միայն այն դեպքում, երբ դրա նպատակն է՝ հնարավորություն տալ իշխանություններին ապահովելու հավաքի խաղաղ բնույթը, և հետևաբար, որպես այդպիսին, չի միջամտում իրավունքի իրացմանը (*Ziliberberg v. Moldova* (dec.), 2004):

93. Նախնական իրազեկման նպատակն է ոչ միայն հավասարակշռել հավաքների իրավունքն այլ անձանց իրավունքների և օրինական շահերի (ներառյալ՝ տեղաշարժի ազատության) հետ, այլև կանխել անկարգությունները և հանցագործությունները: Իրար հակասող այս շահերը հավասարակշռելու նպատակով նախնական վարչական ընթացակարգեր սահմանելը տարածված պրակտիկա է անդամ պետություններում, երբ կազմակերպվում է հանրային ցույց (*Éva Molnár v. Hungary*, 2008, § 37; *Berladir and Others v. Russia*, 2012, § 42): Կարևոր է, որ միավորումները և ցույցերի այլ կազմակերպիչները՝ որպես ժողովրդավարական գործընթացի դերակատարներ, ենթարկվեն այդ գործընթացը կարգավորող կանոններին՝ հետևելով գործող կարգավորումներին: Սակայն նման կարգավորումները չպետք է պարունակեն թաքնված խոչընդոտ Կոնվենցիայով պաշտպանված խաղաղ հավաքների ազատության համար (*Oya Ataman v. Turkey*, 2006, § 38; *Berladir and Others v. Russia*, 2012, § 39):

94. Պայմանավորվող կողմերը հասարակական անվտանգության նկատառումներով կարող են կիրառել կոնկրետ վայրում ցույցի անցկացման սահմանափակումներ (*Malofeyeva v. Russia*, 2013, § 136; *Disk and Kesk v. Turkey*, 2012, § 29; տե՛ս նաև «Հավաքի վայրի ազատությունը» բաժինը):

2. Անօրինական հավաք

95. Քանի որ պետություններն իրավունք ունեն սահմանել արտոնություն ստանալու պահանջ, դրանք պետք է ունենան պահանջին չհամապատասխանող ցույցերի մասնակիցների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու իրավասություն: Արտոնման համակարգը կդառնա պատրանքային, եթե 11-րդ հոդվածն արգելել պատժամիջոցները նշված արտոնությունները չստանալու համար: Հետևաբար, չարտոնված ցույցի մասնակցելու համար պատժամիջոց կիրառելը համապատասխանում է 11-րդ հոդվածի երաշխիքներին (*Ziliberberg v. Moldova* (dec.), 2004)՝ պայմանով, որ պատժամիջոցը նախատեսված է օրենքով և համաչափ է:

96. Իրազեկման կամ արտոնություն ստանալու պահանջը չկատարելը, հատկացված ժամանակից երկար մնալը կամ հատկացված տարածքից դուրս գալը կարող են հավաքն «անօրինական» համարելու հիմքեր լինեն: «Անօրինական» հավաքի սահմանումը, ի տարբերություն իշխանությունների կողմից «արգելված» հավաքի, հիմնվում է ձևական պահանջները չկատարելու վրա: «Ցույց, որը չի արգելվել» հասկացությունն օգտագործվել է, թեև այն չի նույնացվել «օրինական» կամ «արտոնված» ցույցին (*Kudreivičius and Others v. Lithuania* [GC], § 149):

97. Հակաօրինական իրավիճակը, օրինակ՝ ցույցի անցկացումն առանց նախօրոք ստացված արտոնության, անհրաժեշտաբար չի հիմնավորում միջամտությունը հավաքների ազատությանը: Թեև հանրային հավաքները կանոնակարգող կանոնները, օրինակ՝ նախնական իրազեկման համակարգը, կենսական նշանակություն ունեն հանրային միջոցառումների սահուն անցկացման համար, քանի որ դրանց շնորհիվ իշխանությունները նվազեցնում են երթևեկության խաթարումները և ձեռնարկում անվտանգային այլ միջոցներ, դրանց կիրառումը

չի կարող դառնալ ինքնանպատակ (*Cisse v. France*, 2002, § 50; *Oya Ataman v. Turkey*, 2006, §§ 37-39; *Gafgaz Mammadov v. Azerbaijan*, 2015, § 59):

98. Մասնավորապես, երբ կարգազանց ցուցարարները չեն ներգրավվում բռնարարների կատարմանը, Դատարանը պահանջել է պետական իշխանություններից՝ ցուցաբերել որոշակի հանդուրժողականություն խաղաղ հավաքների նկատմամբ, որպեսզի Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատությունն ամբողջությամբ չիմաստազրկվի (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 150; *Oya Ataman v. Turkey*, 2006, §§ 41-42; *Bukta and Others v. Hungary*, 2007, § 34; *Navalnyy and Yashin v. Russia*, 2014, § 63):

99. Հետևաբար, նախնական արտոնության բացակայությունը և գործողության՝ դրանից բխող «անօրինականությունը» չեն տալիս իշխանություններին *carte blanche*, քանի որ դրանք դեռևս սահմանափակված են 11-րդ հոդվածի համաչափության պահանջով (*Primov and Others v. Russia*, 2014, § 119): Այսպիսով, առաջին հերթին պետք է պարզել, թե ցույցն ինչու չի արտոնվել, ինչ հանրային շահ է եղել, և ինչ վտանգներ է ներկայացրել ցույցը: Բողոքի ցույցի մասնակիցներին զսպելու, նրանց որոշակի վայրում պահելու կամ ցույցը ցրելու համար ոստիկանության գործադրած մեթոդը նույնպես կարևոր գործոն է, երբ գնահատվում է միջամտության համաչափությունը (*ibid.*): Քաղաքական հանրահավաք ցրելու որոշումը պետք է հիմնված լինի պատշաճ գիտակցման վրա, որ Կոնվենցիան նախատեսում է արտոնյալ պաշտպանություն հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի վերաբերյալ քաղաքական խոսքի և բանավեճի, նաև նման հարցերի վերաբերյալ կարծիքների խաղաղ արտահայտման համար, իսկ իշխանություններն ունեն քաղաքական խոսքը սահմանափակելու հայեցողության նեղ շրջանակ (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 133):

100. Պահանջն առ այն, որ իշխանությունները պետք է ցուցաբերեն որոշակի աստիճանի հանդուրժողականություն «անօրինական» խաղաղ հավաքների նկատմամբ, պետք է տարածվի այն դեպքերի վրա, երբ ցույցն անցել է հանրային վայրում՝ անվտանգությանը սպառնացող կամ անկարգության վտանգի բացակայությամբ (*Fáber v. Hungary*, 2012, § 47), եթե բողոքի ակցիայի մասնակիցների պատճառած անհարմարությունները չեն գերազանցել հասարակական կարգի ոչ էական խախտումների այն մակարդակը, որն ի հայտ է գալիս հանրային վայրում հավաքների ազատության իրավունքի բնականոն իրացման արդյունքում (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 131-132): Ավելին, այն պետք է տարածվի այն հավաքների վրա, որոնք առաջացրել են բնականոն կյանքի, այդ թվում՝ երթևեկության որոշակի աստիճանի խաթարումներ (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 155; *Malofeyeva*, 2013, §§ 136-37): Չկանոնակարգված հավաքի նկատմամբ ակնկալվող հանդուրժողականության սահմանները կախված են կոնկրետ հանգամանքներից, այդ թվում՝ հասարակության համար դրա առաջացրած անհարմարությունների տևողությունից և աստիճանից, ինչպես նաև այն հանգամանքից, թե արդյոք դրա մասնակիցներին տրվել է բավարար ժամանակ սեփական տեսակետներն արտահայտելու և, համապատասխան հրահանգ ստանալուց հետո, հավաքի վայրը լքելու համար (*Frumkin v. Russia*, 2016, § 97):

101. Հավաքի առաջացրած փաստացի անհարմարության գնահատումն ավելի է կարևորվում անորոշ իրավիճակներում, ինչպիսիք են, օրինակ, հավաքները, որոնք հստակ չեն ընկնում ներպետական կարգավորումների ներքո: Եթե առկա է կասկած, թե արդյոք տվյալ միջոցառումը հավաքի որևէ տեսակ է, որը ներպետական օրենսդրությամբ պահանջում է իրազեկում կամ արտոնություն, ապա իշխանությունները պետք է որդեգրեն միջոցներ, որոնք հիմնված կլինեն խնդրո առարկա վարքագծի առաջացրած անհարմարության աստիճանի, այլ ոչ թե ձևական հիմքերի վրա, ինչպիսին է, օրինակ, իրազեկման ընթացակարգը չպահպանելը: Միջամտությունը հավաքների ազատությանը, ներառյալ՝ դրանց ընդհատումը, ցրումը կամ մասնակիցների ձերբակալումը, կարող է հիմնավորվել միայն կոնկրետ և հստակ էական հիմքերով, ինչպիսիք են՝ օրենքով նախատեսված լուրջ վտանգները (*Navalnyy v. Russia* [GC], 2018, § 136):

3. Ինքնարուխ հավաք

102. Առանձնահատուկ հանգամանքներում, երբ ինքնարուխ ցույցը կարող է արդարացված լինել, օրինակ, պայմանավորված քաղաքական որևէ իրադարձությանն արձագանքով, այդ

ցույցը ցրելը զուտ այն պատճառով, որ չի եղել պարտադիր նախնական իրազեկում, իսկ մասնակիցները չեն դրսևորել որևէ հակահրավակական վարքագիծ, կարող է համարվել խաղաղ հավաքների ազատության ոչ համաչափ սահմանափակում (*Bukta and Others v. Hungary*, 2007, § 36; *Laguna Guzman v. Spain*, 2020, § 51):

103. Դա չի նշանակում, որ ինքնաբուխ հավաքի մասին նախնական իրազեկման բացակայությունը երբևէ չի կարող լինել ամբողջ ցրելու իրավաչափ հիմք: Ինքնաբուխ ցույցեր անցկացնելու իրավունքը կարող է գերակայել նախնական իրազեկում ներկայացնելու պարտավորությանը միայն առանձնահատուկ հանգամանքերում, այսինքն՝ երբ ցույցի ձևով անհապաղ արձագանքն ընթացիկ իրադարձությանն ապահովված է: Մասնավորապես, նման շեղումն ընդհանուր կանոնից կարող է արդարացվել, եթե ուշացումը կարող էր տվյալ արձագանքը դարձնել ժամանակավրեպ (*Éva Molnár v. Hungary*, 2008, §§ 37-38; *Budaházy v. Hungary*, 2015, § 34):

104. Ներպետական օրենսդրական նորմերը և դատական հսկողությունը պետք է հաշվի առնեն առանձնահատուկ հանգամանքները, երբ ինքնաբուխ հավաքի ձևով անհապաղ արձագանքն ընթացիկ իրադարձությանըն ապահովված է և արդարացնում է շեղումն իրազեկման կամ արտոնման ժամկետների խիստ կիրառումից: Այն հանգամանքը, որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսել բացառություններ և 11-րդ հոդվածի շրջանակներում Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված չափանիշներին համապատասխան հավասարակշռման հնարավորություն չի ընձեռել, համարվել է չափից ավելի խիստ մոտեցում և սույն հոդվածի խախտում (*Lashmankin and Others v. Russia*, 2017, §§ 451-54):

Է. Դատապարտելի վարքագիծ

105. Խաղաղ հավաքների ազատության իրավունքի բուն էությունը խախտվում է, եթե պետությունը չի արգելել ցույցը, բայց դրա մասնակիցների նկատմամբ, որոնք չեն դրսևորել դատապարտելի վարքագիծ, կիրառել է պատժամիջոցներ զուտ մասնակցության համար (*Galstyan v. Armenia*, 2007, § 117; *Ashughyan v. Armenia*, 2008, § 93):

106. Իշխանությունները կարող են ձեռնարկել հարկադրական միջոցներ և կիրառել պատիժներ հավաքի ընթացքում կատարած առանձին իրավախախտումների համար: Սկզբունքորեն, միջամտությունները հավաքների ազատության իրավունքին հիմնավորված են անկարգությունները և հանցագործությունները կանխելու, այլ անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու անհրաժեշտությամբ, երբ ցույցի մասնակիցները կատարում են բռնի գործողություններ (*Giuliani and Gaggio v. Italy* [GC], 2011, § 251):

107. Քրեական դատապարտումը ցույցի ընթացքում բռնություն հրահրող գործողությունների համար որոշակի հանգամանքներում կարող է համարվել ընդունելի միջոց (*Osmani and Others v. the former Yugoslav Republic of Macedonia* (dec.), 2001):

108. Միջամտության անհրաժեշտությունն ուսումնասիրելիս իշխանություններն օգտվում են հայեցողության ավելի լայն շրջանակից, եթե բռնություն է հրահրվել անհատի, պետական պաշտոնատար անձի կամ բնակչության որևէ հատվածի դեմ (*Schwabe and M.G. v. Germany*, 2011, § 113):

109. Ցույցի մասնակիցների կողմից բնականոն կյանքի և այլ անձանց իրականացրած օրինական գործունեության դիտավորյալ և լուրջ խաթարումը, որը հասնում է ավելի նշանակալի չափերի, քան առաջացնում է հանրային վայրում խաղաղ հավաքի իրավունքի բնականոն իրացումը, կարող է համարվել «դատապարտելի արարք»: Նման վարքագիծը, հետևաբար, կարող է հիմնավորել պատիժների, անգամ քրեական բնույթի պատիժների կիրառումը: Մասնավորապես, ոստիկանության հրահանգների և ճանապարհներից օգտվողների կարիքների ու իրավունքների անտեսմամբ երեք հիմնական մայրուղիների գրեթե լիարժեք արգելափակումը, որը թեև նվազ վտանգավոր էր, քան ֆիզիկական բռնության դիմելը, համարվել էր «դատապարտելի» վարքագիծ (*Kudrevičius and Others v. Lithuania* [GC], 2015, § 173-174; տե՛ս նաև *Barraco v. France*, 2009, §§ 46-47; տե՛ս նաև «Բնականոն կյանքը և

երթևեկությունը դիտավորությամբ խաթարելու համար պատժամիջոցներ կիրառելու հայեցողության առավել լայն շրջանակ» բաժինը):

110. Խաղաղ մասնակիցները չեն կարող պատասխանատվության ենթարկվել այլ անձանց կատարած դատապարտելի արարքների համար: Խաղաղ հավաքի մասնակցելու ազատությունն այնքան կարևոր է, որ անձը չի կարող ենթարկվել պատժի, նույնիսկ կարգապահական տույժերի սանդղակի ամենամեղմ պատժամիջոցների՝ չարգելված ցույցի մասնակցելու համար, քանի դեռ տվյալ անձը չի կատարել դատապարտելի որևէ արարք (*Ezelin v. France*, 1991, § 53; *Galstyan v. Armenia*, 2007, § 115): Այս մոտեցումն անփոփոխ է մնում նույնիսկ այն դեպքում, երբ ցույցը հանգեցնում է վնաս պատճառելուն կամ այլ անկարգության (*Taranenko v. Russia*, 2014, § 88): Միջոցառման կազմակերպիչները չպետք է պատասխանատվության ենթարկվեն ներկաների վարքագծի համար (*Mesut Yildiz and Others v. Turkey*, 2017, § 34; *Kemal Çetin v. Turkey*, 2020, §§ 50-51):

111. Հավաքի մասնակիցը, ով ներգրավվել է եզակի բռնի գործողությունների, կարող է շարունակել օգտվել 11-րդ հոդվածի պաշտպանությունից, ինչը նշանակում է, որ անձի արարքների համար սահմանված պատիժը պետք է լինի համաչափ՝ հաշվի առնելով նրա մտադրությունները հավաքին միանալու պահին, արարքների բնույթը, հետևանքների ծանրությունը (մասնավորապես, արդյոք այլ անձանց վնասվածքներ է պատճառել) և հավաքի խաղաղ բնույթի խաթարման վրա վերջինիս ունեցած ազդեցությունը: Այսպես, ընդհարումների ամենաթեժ պահին ոստիկանության վրա քար կամ այլ փոքր առարկա նետելու համար երկարատև ազատազրկումը համարվել է ոչ համաչափ պատիժ և 11-րդ հոդվածի խախտում (*Gülcü v. Turkey*, 2016, §§ 110-117; *Yaroslav Belousov v. Russia*, 2016, §§ 177-182; տե՛ս նաև «Խաղաղ հավաք» բաժինը և *Guide on Mass Protests*, Բաժին I.E.2):

II. Միավորման ազատություն

Ա. Միավորման ազատության իրավունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում

112. Բազմաթիվ առիթներով Դատարանը վերահաստատել է ուղղակի կապը ժողովրդավարության, բազմակարծության և միավորման ազատության միջև: Իրականում, ներպետական օրենդրությունում այս ազատությունն ամրագրելու ձևը և իշխանությունների կողմից դրա գործնական կիրառումը բացահայտում են տվյալ երկրում ժողովրդավարության վիճակը (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 88; *Sidiropoulos and Others v. Greece*, 1998, § 40):

113. Թեև 11-րդ հոդվածի համատեքստում Դատարանը հաճախ է նշել բազմակարծության և ժողովրդավարության երաշխավորման գործում քաղաքական կուսակցությունների կենսական դերը (*United Communist Party of Turkey and Others v. Turkey*, 1998, § 25), այլ նպատակներով, այդ թվում՝ մշակութային կամ հոգևոր ժառանգության պաշտպանության, տարբեր սոցիալ-տնտեսական նպատակներ հետապնդող, կրոնի քարոզչության կամ ուսուցման, էթնիկական ինքնության բացահայտման կամ փոքրամասնության ինքնագիտակցության պաշտպանության համար ձևավորված միավորումները նույնպես կարևոր են ժողովրդավարության պատշաճ գործառնությունների համար (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 92; *Association Rhino and Others v. Switzerland*, 2011 § 61):

114. Քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական գործընթացին հիմնականում իրագործվում է միավորումներին անդամակցելու միջոցով, որտեղ նրանք կարող են ինտեգրվել միմյանց հետ և հավաքականորեն հետամուտ լինել ընդհանուր նպատակներին (*Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 61):

115. Միավորման ազատությունը հատկապես կարևոր է փոքրամասնությունների, այդ թվում՝ ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Անկասկած, սեփական

ինքնությունն արտահայտելու և խթանելու նպատակով միավորում ձևավորելը կարող է կարևոր դեր խաղալ փոքրամասնության իրավունքների պահպանման և պաշտպանության գործում (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 93):

116. Կոնվենցիայի արժեքներին հակասող գործունեությանը ներգրավված միավորումները չեն կարող օգտվել 11-րդ հոդվածի պաշտպանությունից՝ 17-րդ հոդվածի հիմքով, որն արգելում է օգտագործել Կոնվենցիան դրանով երաշխավորված իրավունքները վերացնելու կամ չափից ավելի սահմանափակելու համար (*Hizb ut-Tahrir and Others v. Germany* (dec.), 2012, §§ 73-74, առնչվում է բռնության գործադրումը ջատագովող իսլամիստական միավորման գործունեության արգելքին, *W.P. and Others v. Poland* (dec.), 2004, առնչվում է միավորում ձևավորելու արգելքին, որի միավորման հուշագիրն ուներ հակասեմական ենթատեքստ, *Ayoub and Others v. France*, 2020, առնչվում է երկու աջ ծայրահեղական միավորումների լուծարմանը: Տե՛ս նաև *Guide on Article 17 – Prohibition of abuse of rights*):

Բ. Կապը Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածների հետ

117. Թեև միավորման ազատության իրավունքի իրացումը կարող է ներառել կոնվենցիոն մի շարք իրավունքներ, 11-րդ հոդվածն առանձնահատուկ սերտ կապ ունի Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածների հետ:

118. 11-րդ հոդվածով երաշխավորված՝ միավորման ազատության նպատակներից ևս մեկն անձնական կարծիքների պաշտպանությունն է, որը մտքի, խղճի և կրոնի ազատության և արտահայտվելու ազատության ձևով նախատեսում են Կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածները (*Young, James and Webster v. the United Kingdom*, 1981, § 57, *Vörður Ólafsson v. Iceland*, 2010, § 46): Նման պաշտպանությունը կարող է արդյունավետ ապահովվել միայն միավորման ազատության պոզիտիվ և նեգատիվ իրավունքը երաշխավորելու միջոցով (*Sørensen and Rasmussen v. Denmark* [GC], 2006, § 54):

119. Այսպիսով, 11-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն այն անձանց կամ միավորումների նկատմամբ, որոնց տեսակետներն ընդունվում են բարյացակամորեն կամ համարվում են ոչ վիրավորական կամ անտարբերություն առաջացնող, այլև նրանց, ում տեսակետները վիրավորական են, շոկային կամ անհանգստացնող (*Redfearn v. the United Kingdom*, 2012, § 56; *Vona v. Hungary*, 2013, § 57):

120. Թեև 10-րդ հոդվածը երաշխավորում է, որ հանրային բանավեճում կարող են անգամ արտահայտվել գաղափարներ, որոնք տարբերվում են ժողովրդավարական հասարակության գաղափարներից՝ պայմանով, որ դրանք չեն հանգեցնում ատելության խոսքի կամ չեն հրահրում այլ անձանց կողմից բռնություն, 11-րդ հոդվածը չի արգելում պետություններին ձեռնարկել միջոցներ՝ երաշխավորելու, որ միավորումը չի հետապնդի բազմակարծիք ժողովրդավարության արժեքներին հակասող և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները ոտնահարող քաղաքականության նպատակներ (*Zehra Foundation and Others v. Turkey*, 2018, §§ 55-56, առնչվում է միավորման լուծարմանը, որի գործունեությունն ուղղված էր շարիաթական պետության ստեղծմանը):

121. Բազմակարծության սկզբունքը հնարավոր չէ իրագործել, եթե միավորումն անկարող է ազատորեն արտահայտել սեփական գաղափարները և կարծիքները (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 91; *Zhechev v. Bulgaria*, 2007, § 36): Կարծիքների պաշտպանությունը և դրանք արտահայտելու ազատությունն ավելի մեծ չափով կիրառելի են քաղաքական կուսակցությունների նկատմամբ՝ հաշվի առնելով բազմակարծության և ժողովրդավարության պատշաճ գործառնություններն ու դրանց կենսական դերը (*Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* [GC], 1999, § 37):

Գ. Միավորման ազատության իրավունքի շրջանակը և բովանդակությունը

1. Միավորման հասկացությունը

122. «Միավորում» եզրույթը ենթադրում է կամավոր խմբավորում՝ հանուն ընդհանուր նպատակի (*Young, James and Webster v. the United Kingdom*, 1981, Հանձնաժողովի զեկույց, § 167):

123. Միավորման ազատության հասկացությունն առնչվում է որոշակի նպատակներ հետապնդող խումբ կամ կազմակերպություն ձևավորելու կամ դրա հետ փոխկապակցված լինելու իրավունքին: Այն չի առնչվում այլոց ընկերակցելու կամ այլ անհատներին հետ սոցիալապես հարաբերվելու իրավունքին (*McFeeley v. the United Kingdom*, Հանձնաժողովի որոշում, 1980, § 114; *Bollan v. the United Kingdom* (dec.), 2000):

124. 11-րդ հոդվածի պաշտպանությունից օգտվելու համար միավորումը պետք է ունենա մասնավոր իրավական բնույթ: «Միավորում» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, իսկ ազգային օրենսդրության մեջ դրա դասակարգումն ունի հարաբերական արժեք և հանդես է գալիս ոչ ավելին, քան ընդամենը ելակետ (*Chassagnou and Others v. France* [GC], 1999, § 100; *Schneider v. Luxembourg*, 2007, § 70):

125. Եթե Պայմանավորվող կողմերը հնարավորություն ունենային սեփական հայեցողությամբ դասակարգելու միավորումը՝ որպես «հանրային» կամ «հարավարչական» և այդպիսով դուրս թողնելու այն 11-րդ հոդվածի շրջանակից, դա կարող էր հանգեցնել արդյունքների, որոնք չեն համապատասխանում Կոնվենցիայի առարկային և նպատակին, այն է՝ պաշտպանել ոչ թե տեսական կամ պատրանքային, այլ գործնական և արդյունավետ իրավունքները (*Chassagnou and Others v. France* [GC], 1999, § 100):

126. Դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում միավորման՝ մասնավոր կամ հանրային լինելը որոշվում է հետևյալ տարրերով. արդյո՞ք այն հիմնվել է անհատների կամ օրենսդրի կողմից, արդյո՞ք այն մնում է ինտեգրված պետության կառույցների կազմում, արդյո՞ք այն օժտված է վարչական, նորմատիվ և կարգապահական լիազորություններով, արդյո՞ք այն հետամուտ է նպատակի, որը բխում է ընդհանուր շահից (*Mytilinaios and Kostakis v. Greece*, 2015, § 35; *Herrmann v. Germany*, 2011, § 76; *Slavic University in Bulgaria and Others v. Bulgaria* (dec.), 2004):

2. Հանրային իրավունքի հաստատություններ, մասնագիտական մարմիններ և պարտադիր անդամակցություն

127. Հանրային իրավունքի հաստատությունը, որը հիմնադրել է օրենսդիրը, միավորում չէ 11-րդ հոդվածի իմաստով (տե՛ս, օրինակ, *Slavic University in Bulgaria and Others v. Bulgaria* (dec.), 2004, առնչվում է պետական համալսարանի, *Köll v. Austria* (dec.), 2002, առնչվում է զբոսաշրջության ֆեդերացիայի):

128. Մասնագիտական միավորումները և զբաղվածության մարմինները նույնպես դուրս են 11-րդ հոդվածի շրջանակից: Որպես կանոն, օրենսդրության հիման վրա ստեղծված այս մարմինների նպատակն է՝ կանոնակարգել և խթանել մասնագիտությունները՝ միաժամանակ կատարելով հասարակության պաշտպանությանն ուղղված հանրային իրավունքի կարևոր գործառույթներ: Հետևաբար, դրանք չեն կարող նույնացվել մասնավոր իրավունքի ընկերակցությունների կամ արհեստակցական միությունների հետ, այլ մնում են ինտեգրված պետության կառույցների կազմում (*Popov and Others v. Bulgaria* (dec.), 2003): Միավորումները, որոնք նկատմամբ կիրառելի չէ 11-րդ հոդվածը, ընդգրկում են.

- բժիշկների միություններ (*Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium*, 1981, §§ 64-65; *Vialas Simón v. Spain*, Հանձնաժողովի որոշում, 1992; *Popov and Others v. Bulgaria* (dec.), 2003),
- անասնաբույժ-վիրաբույժների խորհուրդ (*Barthold v. Germany*, 1985, § 61),

- ճարտարապետների միություն (*Revert and Legallais v. France*, Հանձնաժողովի որոշում, 1989),
- փաստաբանների միություններ (*A. and Others v. Spain*, Հանձնաժողովի որոշում, 1990; *Bota v. Romania* (dec.), 2004),
- նոտարական պալատներ (*O.V.R. v. Russia* (dec.), 2001; *National Notary Chamber v. Albania* (dec.), 2008),
- աշխատանքային խորհուրդներ (*Karakurt v. Austria* (dec.), 1999),
- առևտրային պալատ (*Weiss v. Austria*, Հանձնաժողովի որոշում, 1991):

129. Նման միավորումներին պարտադիր անդամակցությունը չի միջամտում միավորման ազատությանը (*Popov and Others v. Bulgaria* (dec.), 2003): Այդուհանդերձ, անհատները չպետք է զրկվեն սեփական մասնագիտական միավորումներ ձևավորելու կամ գոյություն ունեցող միավորումներին միանալու հնարավորությունից: Հետևաբար, պարտադիր անդամակցությամբ միավորման գոյությունը չի կարող ունենալ 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը սահմանափակելու կամ առավել ևս ճնշելու նպատակ կամ հանգեցնել նման արդյունքի (*Le Compte, Van Leuven and De Meyere*, 1981, § 65; *O.V.R. v. Russia* (dec.), 2001):

3. Միավորման ստեղծումը և դրա իրավական ճանաչումը

130. Միավորում ձևավորելու իրավունքը միավորման ազատության իրավունքի անբաժանելի մասն է, եթե նույնիսկ 11-րդ հոդվածը բացահայտ հղում է կատարում միայն արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքին (*Sidiropoulos and Others v. Greece*, 1998, § 40):

131. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտում համատեղ գործելու նպատակով իրավաբանական անձ ստեղծելու կարողությունը միավորման ազատության ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, առանց որի այդ իրավունքը կզրկվի որևէ իմաստից (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 91; *Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 78):

132. Ազգային իշխանությունների կողմից անհատների միավորման իրավաբանական անձի կարգավիճակի գրանցման մերժումը համարվում է միջամտություն միավորման ազատության նրանց իրավունքի իրացմանը (*Sidiropoulos and Others v. Greece*, 1998, § 31; *Koretsky and Others v. Ukraine*, 2008, § 39; *Özbek and Others v. Turkey*, 2009, § 35): Գրանցման ընթացակարգի զգալի ձգձգումները նույնպես համարվում են նման միջամտություն (*Ramazanov and Others v. Azerbaijan*, 2007, § 60; *Aliyev and Others v. Azerbaijan*, 2008, § 33):

133. Իշխանությունների կողմից խմբի գրանցման մերժումն անմիջականորեն ազդում է ինչպես խմբի, այնպես էլ դրա նախագահների, հիմնադիրների կամ անհատ անդամների վրա (*Kimlya and Others v. Russia*, 2009, § 84):

134. Միավորմանը չի կարող պարտադրվել իրավական ձև, որին այն չի ձգտում, քանի որ դա կսահմանափակի հիմնադիրների և անդամների միավորման ազատությունը՝ դարձնելով այն գոյություն կամ գործնական արժեք չունեցող (*Republican Party of Russia v. Russia*, 2011, § 105; *Zhechev v. Bulgaria*, 2007, § 56; *National Turkish Union Kungyun v. Bulgaria*, 2017, § 41): Ասվածով հանդերձ, 11-րդ հոդվածով միավորումների համար նախատեսված չէ որոշակի իրավական կարգավիճակ ունենալու իրավունք (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 91):

135. Թեև ոչ ֆորմալ միավորումները նույնպես օգտվում են 11-րդ հոդվածի պաշտպանությունից, իրավաբանական անձի կարգավիճակի բացակայությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ դրանց գործառնությունից և գործունեության վրա (*The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria*, 2006, § 53; *Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 73-74): Սակայն, եթե ոչ ֆորմալ միավորումն ընդունակ է իրականացնել իր հիմնական գործունեությունը, գրանցման մերժումը կարող է լինել 11-րդ հոդվածին համապատասխան (*Lavissee v. France*, Հանձնաժողովի որոշում, 1991; *Larmela v. Finland*, Հանձնաժողովի որոշում, 1997; *Movement for Democratic Kingdom v. Bulgaria*, Հանձնաժողովի որոշում, 1995):

136. 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը չի սահմանափակվում միավորման հիմնադրամբ, այլ պաշտպանում է միավորումը գոյության ամբողջ ընթացքում (*United Communist Party of Turkey and Others*, 1998, § 33):

4. Միավորումների ինքնավարությունը, ներքին կառավարումը և անդամակցությունը

137. Միավորումների կազմակերպչական ինքնավարությունը 11-րդ հոդվածով պաշտպանված՝ դրանց միավորման ազատության կարևոր մաս է (*Lovrić v. Croatia*, 2017, § 71): Միավորումներն ունեն սեփական կանոնները սահմանելու և սեփական գործերը վարելու իրավունք (*Cheall v. the United Kingdom*, Հանձնաժողովի որոշում, 1985):

138. Միավորման ազատությունը, սակայն, չի արգելում պետություններին սահմանել կորպորատիվ ղեկավարման և կառավարման կանոններ և պահանջներ, ինչպես նաև հետևել դրանց պահպանմանը: Թեև պետություններն իրավասու են սահմանել միավորման ղեկավար մարմինների դերի և կառուցվածքի որոշակի նվազագույն պահանջներ, իշխանությունների խնդիրը չէ ապահովել միավորման կանոնադրության մեջ սահմանված յուրաքանչյուր ձևականության պահպանումը (*Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan*, 2009, §§ 72 և 78):

139. 11-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես միավորումներին կամ կազմակերպություններին միանալու ցանկություն ունեցող յուրաքանչյուր անհատի ընդունելու պարտավորություն: Եթե միավորումները ստեղծել են մարդիկ, ովքեր, որդեգրելով որոշակի արժեքներ կամ իդեալներ, մտադիր են հետապնդել ընդհանուր նպատակներ, ապա անդամակցության նկատմամբ հսկողություն չունենալը կհակասի խնդրո առարկա ազատության արդյունավետ իրացմանը: Օրինակ, ընդունված է, որ կրոնական կառույցները և քաղաքական կուսակցությունները կարող են, ընդհանուր առմամբ, կանոնակարգել իրենց անդամակցությունը և ընդունել միայն անձանց, ովքեր կհստում են իրենց համոզմունքները և իդեալները (*Associated Society of Locomotive Engineers and Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 39):

140. Միավորման ազատության իրավունքը չի ներառում որոշակի միավորման անդամ դառնալու իրավունքը (տե՛ս *Cheall v. the United Kingdom*, Հանձնաժողովի որոշում, 1985), ոչ էլ միավորման կազմում որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքը (*Fedotov v. Russia* (dec.), 2004):

Սակայն, միավորումից վտարելը կարող է խախտել տվյալ անդամի միավորման ազատությունը, եթե դա արվում է միավորման կանոնների խախտմամբ, կամայական է կամ բացառիկ դժվարություններ է ստեղծում անհատի համար (*Lovrić v. Croatia*, 2017, §§ 54 և 72):

5. Միավորման նեգատիվ ազատությունը

141. Քանի որ միավորման ազատությունը ենթադրում է այն իրացնելու իմաստով ընտրության որոշակի ազատություն, 11-րդ հոդվածն ընդգրկում է նաև միավորման նեգատիվ ազատություն, այսինքն՝ միավորմանը չմիանալու կամ դրանից դուրս գալու իրավունք (*Sigurður A. Sigurjónsson v. Iceland*, 1993, § 35; *Vörður Ólafsson v. Iceland*, 2021, § 45):

142. Անձնական ինքնավարության գաղափարն անհատի՝ 11-րդ հոդվածով ենթադրվող՝ ընտրության ազատության կարևորագույն հետևանք է (*Sørensen and Rasmussen v. Denmark* [GC], 2006, § 54):

143. Անհատը չի օգտվում միավորման ազատության իրավունքից, եթե, իրականում, նրան հասանելի գործողության կամ ընտրության ազատությունը կա՛մ գոյություն չունի, կա՛մ այնքան սահմանափակ է, որ չունի գործնական արժեք (*Chassagnou and Others v. France* [GC], 1999, § 114):

144. Թեև որոշակի միավորման միանալու պարտավորությունը միշտ չէ, որ հակասում է Կոնվենցիային, սակայն նման պարտավորության ձևը, որը թիրախավորում է 11-րդ հոդվածով երաշխավորված միավորման ազատության բուն էությունը, կհանդիսանա միջամտություն այդ ազատությանը (*Young, James and Webster v. the United Kingdom*, 1981, § 55, և *Sørensen and*

Rasmussen [GC], 2006, § 56, առնչվում է «փակ ձեռնարկության» համաձայնություններին, որոնք աշխատանքի ընդունելը պայմանավորում են որոշակի արհեստակցական միության անդամությամբ, *Sigurður A. Sigurjónsson v. Iceland*, 1993, § 36, առնչվում է տաքսու վարորդների վրա՝ տաքսի ծառայության օպերատորների որոշակի կազմակերպության անդամ լինելու՝ օրենքով դրված պարտավորությանը; *Mytilinaios and Kostakis v. Greece*, 2015, առնչվում է միության անդամ լինելու գինեգործների պարտավորությանը, §§ 53 և 65):

145. Միավորմանը՝ առանց ֆորմալ անդամակցության, ֆինանսական հատկացումներ կատարելու պարտավորությունը կարող է ունենալ մի կարևոր հատկանիշ, որն ընդհանուր է միավորմանը միանալու պարտավորության հետ, և պարունակել միջամտություն միավորման ազատության նեգատիվ իրավունքին (*Vörður Ólafsson*, 2010, § 48, առնչվում է մասնավոր արդյունաբերական միության անդամ չհանդիսացող անձի կողմից ֆինանսական հատկացում կատարելու պարտավորությանը; *Geotech Kancev GmbH v. Germany*, 2016, § 53, առնչվում է մասնավոր միավորումների ստեղծած հիմնադրամին անդամ չհանդիսացող անձի կողմից ֆինանսական հատկացում կատարելու պարտավորությանը):

Գ. Միավորման ազատության սահմանափակումները

146. 11-րդ հոդվածը պաշտպանում է միավորումները պետության անհիմն միջամտությունից, որը, սովորաբար, կապված է գրանցման մերժման կամ միավորման լուծարման հետ, բայց կարող է նաև ստանալ միավորման գործունեությանը խոչընդոտելու այլ դրսևորումներ (օրինակ՝ ստուգումների կամ ֆինանսավորման սահմանափակումների միջոցով) (տե՛ս *Yordanovi v. Bulgaria*, 2020, §§ 62-63, և *Ecodefence and Others v. Russia*, 2022, §§ 81 և 87, սահմանափակումների զանազան ձևերի ընդհանուր վերլուծության համար):

147. Միջամտությունը միավորման ազատության իրավունքին հիմնավոր է, եթե այն բավարարում է 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, դրանք են՝ «նախատեսված է օրենքով», հետապնդում է իրավաչափ նպատակ կամ նպատակներ, «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

1. Նախատեսված է օրենքով

148. «Նախատեսված է օրենքով» արտահայտությունն, առաջին հերթին, պահանջում է, որ վիճարկվող միջոցը ունենա ներպետական օրենսդրությամբ սահմանված հիմք: Այն նաև վերաբերում է խնդրո առարկա օրենքի որակին, որը պետք է մատչելի լինի շահագրգիռ անձանց և կանխատեսելի՝ դրա հետևանքների առումով: Օրենքը «կանխատեսելի» է, եթե ձևակերպված է բավարար ճշգրտությամբ, որը հնարավորություն կտա անհատին, անհրաժեշտության դեպքում պատշաճ խորհրդատվությամբ, կարգավորել սեփական վարքագիծը (*N.F. v. Italy*, 2001, §§ 26 և 29): Այս պահանջները բավարարելու համար ներպետական օրենսդրությունը պետք է ապահովի իշխանությունների կամայական միջամտություններից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները պաշտպանելու իրավական միջոց: Օրենքը պետք է բավարար հստակությամբ նշի ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա կիրառման եղանակը (*Maestri v. Italy* [GC], 2004, § 30):

149. Դատարանը գտավ, որ կանխատեսելիության պայմանը չէր բավարարվել, երբ դատավորը չէր կարողացել գիտակցել, որ իր անդամությունը մատոնական օթյակին կարող էր հանգեցնել իր նկատմամբ կարգապահական պատժի կիրառման (*N.F. v. Italy*, 2001, §§ 30-32; *Maestri v. Italy* [GC], 2004, §§ 43-42):

150. *Koretsky and Others v. Ukraine*, 2008, գործով իշխանությունները մերժել էին գրանցել հասարակական (ոչ պետական) միավորում: Դատարանը գտավ, որ միավորումների գրանցումը կանոնակարգող ներպետական օրենսդրության նորմերը չափազանց անորոշ էին՝ բավարար «կանխատեսելի» լինելու համար, և միավորման գրանցման մասին որոշում ընդունելու հարցում իշխանություններին ընձեռում էին հայեցողության չափազանց լայն շրջանակ (§ 48):

151. «Օրենքի որակի» պահանջի հետ կապված խնդիր առաջացել էր նաև *Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan*, 2009, գործով, որում միավորումը լուծարվել էր

օրենսդրության հիման վրա, որի ձևակերպումները ընդհանրական էին և լայն հայեցողություն էին տալիս արդարադատության նախարարությանը՝ միջամտելու միավորման գոյության ցանկացած հարցի, այդ թվում՝ դրա ներքին կառավարմանը (§§ 61-64):

152. *Yefimov and Youth Human Rights Group v. Russia*, 2021, գործով Դատարանը գտավ, որ ազգային օրենսդրության նորմերը, որոնք անձի մասնակցությունը միավորմանը կախվածության մեջ էին դնում քննիչի՝ ծայրահեղական հանցագործության մեջ անձին կասկածյալ ճանաչելու որոշումից, չեն բավարարել «օրենքի որակի» չափորոշիչը, քանի որ դրանք անսահմանափակ հայեցողություն էին տվել քննչական մարմիններին և չէին տրամադրել պաշտպանություն չարաշահումից (§§ 59-64): Գանգատարերի միավորման լուծարումը ևս հիմնված չէր հստակ և կանխատեսելի իրավական հիմքի վրա (§§ 65-73):

153. *Taganrog LRO and Others v. Russia*, 2022, գործով Դատարանը համարեց, որ «ծայրահեղական գործունեության» անթույլատրելիորեն ընդհանրական սահմանումն ազգային օրենսդրության մեջ՝ գուցորդված դատական երաշխիքների բացակայությամբ, չեն ապահովել բավականաչափ կանխատեսելի իրավական հիմք Եհովայի վկաների կրոնական կազմակերպությունների հարկադիր լուծարման համար (§§ 159 և 242):

154. Միջամտության իրավաչափությունը և, մասնավորապես, խնդրո առարկա ներպետական օրենքի կանխատեսելիությունը գնահատելիս Դատարանը նկատի է առնում թե՛ օրենքի տեքստը, թե՛ ազգային իշխանությունների կողմից այն կիրառելու և մեկնաբանելու եղանակը (*Jafarov and Others v. Azerbaijan*, 2019, §§ 70 և 85, առնչվում է միավորման գրանցումը ոչ իրավաչափորեն մերժելուն):

155. *Ecodefence and Others v. Russia*, 2022, գործով Դատարանը գտավ, որ «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի երկու առանցքային հասկացությունների («քաղաքական գործունեություն», «օտարերկրյա ֆինանսավորում») կիրառումը հասարակական կազմակերպությունների և դրանց տնօրենների նկատմամբ չի բավարարել կանխատեսելիության պահանջը, իսկ դատական քննությունը չի ապահովել համարժեք և արդյունավետ պաշտպանության միջոցներ գործադիրին տրված լայն հայեցողության կամայական և խտրական կիրառումից (§ 118):

2. Իրավաչափ նպատակ

156. Ցանկացած միջամտություն միավորման ազատության իրավունքին պետք է հետապնդի 11-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված իրավաչափ նպատակներից առնվազն մեկը. պետական անվտանգություն կամ հասարակության անվտանգություն, անկարգությունների կամ հանցագործությունների կանխում, առողջությանը կամ բարոյականության պաշտպանություն, այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանություն: Միավորման ազատության բացառությունները պետք է ունենան նեղ մեկնաբանություն, որը խիստ սպառիչ է դարձնում դրանց թվարկումը և անհրաժեշտ չափով սահմանափակող՝ դրանց սահմանումը (*Sidiropoulos and Others v. Greece*, 1998, § 38):

3. Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում

157. Անհրաժեշտության հասկացությունը ներառում է երկու պայման. ա) ցանկացած միջամտություն պետք է համապատասխանի «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» և բ) միջամտությունը պետք է համաչափ լինի իր հետապնդած իրավաչափ նպատակին:

158. «Անհրաժեշտություն» եզրույթը չունի այնպիսի արտահայտությունների ճկունություն, ինչպիսիք են՝ «օգտակար»-ը կամ «ցանկալի»-ն: Բացառությունները միավորման ազատության կանոնից պետք է հստակ մեկնաբանվեն, և միայն համոզիչ ու անհերքելի պատճառաբանությունները կարող են հիմնավորել այդ ազատության սահմանափակումները: Առաջին հերթին, ազգային իշխանությունները պետք է գնահատեն «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտության» առկայությունը՝ կոնկրետ սահմանափակումներ կիրառելու համար: Դատարանի խնդիրն է՝ քննել ազգային իշխանությունների՝ սեփական հայեցողության կիրառմամբ ընդունած որոշումների համապատասխանությունը Կոնվենցիային, այլ ոչ թե փոխարինել ազգային իշխանությունների կարծիքը սեփականով:

159. Սա չի նշանակում, որ Դատարանի վերահսկողությունը սահմանափակվում է պատասխանող պետության կողմից իր հայեցողությունը ողջամտորեն, զգուշորեն և բարեխղճորեն օգտագործելու փաստը պարզելով: Դատարանը պարտավոր է ուսումնասիրել բողոքարկվող միջամտությունն ամբողջական գործի լույսի ներքո և պարզել՝ արդյոք այն եղել է «հետապնդած իրավաչափ նպատակին համաչափ», և արդյոք այն հիմնավորելու համար ազգային իշխանությունների ներկայացրած փաստարկները «վերաբերելի են և բավարար»: Այդ կերպ, Դատարանը պետք է համոզվի, որ ազգային իշխանությունները կիրառել են չափանիշներ, որոնք համապատասխանել են 11-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին և, ավելին, որ նրանք իրենց որոշումներում հիմնվել են վերաբերելի փաստերի ընդունելի գնահատման վրա (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, §§ 95-96; *Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v. Romania*, 2005, § 49; *Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, §§ 79-80):

ա. Դատարանի ուսումնասիրության սահմանները

160. Դատարանի հսկողության խորությունը կախված է միավորման տեսակից և դրա գործունեության բնույթից: Ժողովրդավարության համար քաղաքական կուսակցության և ոչ քաղաքական միավորման կարևորության միջև տարբերության հաշվառմամբ՝ միայն առաջինն է միավորվելու իրավունքի սահմանափակման անհրաժեշտության առավել մանրակրկիտ քննության առարկա (*Vona v. Hungary*, 2013, § 58; *Les Authentiks and Supras Auteuil 91 v. France*, 2016, §§ 74 և 84): Միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս ազգային իշխանություններն օգտվում են հայեցողության ավելի լայն շրջանակից նաև այն դեպքերում, երբ բռնություն է հրահրվել անհատի, պետության ներկայացուցչի կամ բնակչության որոշակի հատվածի դեմ (*Les Authentiks and Supras Auteuil 91 v. France*, 2016, § 84; *Ayoub and Others v. France*, 2020, § 121): Դատարանը գտել է նաև, որ միավորումը, որի առաջնորդները քարոզում են քաղաքականություն, որը չի հարգում ժողովրդավարության կանոնները կամ նպատակ ունի կազմաքանդել այն և ոտնահարել ժողովրդավարական հասարակությունում ընդունված իրավունքներն ու ազատությունները, կարող է ենթարկվել պատիժների (*Zehra Foundation and Others v. Turkey*, 2018, § 54): Պետության լիազորությունը՝ պաշտպանելու սեփական հաստատությունները և քաղաքացիներին դրանց սպառնացող միավորումներից, պետք է ամեն դեպքում գործադրվի զգուշությամբ (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others*, 2014, § 79):

բ. Միջամտության խստությունը և համաչափության պահանջը

161. Հնարավոր չէ վերացական դիտարկել միջամտության աստիճանը, և այն պետք է գնահատվի գործի կոնկրետ համատեքստում:

162. Միավորման ազատության իրավունքին, որի նպատակներից է կարծիքների պաշտպանությունը և դրանց արտահայտման ազատությունը, հատկապես, երբ խնդրո առարկա են քաղաքական կուսակցությունները, միջամտության ամենալուրջ ձևերից է *քրեական դատապարտումը* (*Yordanovi v. Bulgaria*, 2020, § 75, որտեղ Դատարանը գտավ, որ կրոնական հիմքերով քաղաքական կուսակցություն հիմնելու փորձի համար գանգատաբերի դեմ քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտություն չկար):

163. Թեև պետություններն իրավասու են պահանջել պաշտոնական գրանցման համար դիմող կազմակերպություններից համապատասխանություն ձևական-իրավական ողջամիտ պայմաններին, նման պահանջը պետք է միշտ բավարարի համաչափության պայմանը (*The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria* (no. 2), 2011, § 40):

164. Միավորումը *գրանցելու մերժումն* արմատական միջոց է, քանի որ թույլ չի տալիս միավորմանը նույնիսկ սկսել գործունեությունը (*Zhechev v. Bulgaria*, 2007, § 58; *The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria*, 2006, § 80; *Bozgan v. Romania*, 2007, § 27):

165. Միավորման՝ գրանցման համար նորից դիմելու հնարավորությունը գործոն է, որը կարող է հաշվի առնվել միջամտության համաչափությունը գնահատելիս (*The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria* (no. 2), 2011, § 30):

166. Միավորման գրանցման մերժումը՝ դրա անվանման մոլորեցնող կամ վարկաբեկող լինելու հիմքով, չի պարունակում առանձնակի լուրջ միջամտություն, քանի որ գանգատաբերներից առաջարկվող անվանման փոփոխություն պահանջելն անհամաչափ չէ (*APEH Üldözötteinek Szövetsége, Iványi, Róth and Szerdahelyi v. Hungary* (dec.), 1999; *W.P. and Others v. Poland* (dec.), 2004):

167. Պետություններն իրավունք ունեն համոզվելու, որ միավորման նպատակն ու գործունեությունը համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին (*Sidiropoulos and Others v. Greece*, 1998, § 40; *Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 59): Եթե միավորումը չի ապահովում համապատասխանությունն ձևական-իրավական ողջամիտ պայմաններին, որոնք առնչվում են դրա ստեղծմանը, գործունեությանը կամ ներքին կազմակերպչական կառուցվածքին, պետությունների հայեցողության շրջանակը կարող է ներառել միավորման ազատությանը միջամտելու իրավունք, որը պետք է բավարարի համաչափության պայմանը (*Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan*, 2009, § 72; *Savenko and Others v. Russia*, 2021, §§ 68-69; *Yeşiller ve Sol Gelecek Partisi v. Turkey*, 2022, § 49, որտեղ Դատարանը չգտավ կամայականություն բավարար թվով տեղական մասնաճյուղեր չունենալու հիմքով զանազան քաղաքներում տեղական համաժողովներ անցկացնելու՝ գանգատաբեր կուսակցության թույլտվության հայտը մերժելու մեջ, քանի որ մերժումը չէր խանգարում կուսակցությանն օգտվել միավորման գործունեությունն իրականացնելու իր ազատությունից):

168. Թեև պետություններն իրավասու են սահմանել միավորման ղեկավար մարմինների դերի և կառուցվածքի որոշակի նվազագույն պահանջներ, իշխանությունները չպետք է միջամտեն *միավորումների ներքին կազմակերպչական գործերին* այն չափով, որ ապահովեն միավորման կանոնադրության մեջ սահմանված յուրաքանչյուր ձևականության պահպանումը (*Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan*, 2009, § 78):

169. *Միավորման լուծարումը* ծանր հետևանքներ առաջացնող կոշտ միջոց է, որը կարող է կիրառվել միայն ամենալուրջ դեպքերում (*Association Rhino and Others v. Switzerland*, 2011, § 62; *Vona v. Hungary*, 2013, § 58; *Les Authentiks and Supras Auteuil 91 v. France*, 2016, § 84): Պետությունները կրում են նման միջոցի կիրառումը հիմնավորող պատճառներ ներկայացնելու ավելի բարձր պատասխանատվություն (*Adana TAYAD v. Turkey*, 2020, § 35): Լուծարման որոշումը, որը հիմնված չէ ընդունելի և համոզիչ պատճառների վրա, կարող է զսպող ազդեցություն ունենալ գանգատաբերի միավորման և դրա առանձին անդամների, նաև ընդհանուր առմամբ, իրավապաշտպան կազմակերպությունների վրա (*ibid.*, § 36):

Թեպետ թե՛ միավորման գրանցման մերժումը, թե՛ դրա լուծարումն ունեն արմատական հետևանքներ, սակայն լուծարումն առանձնահատուկ հեռահար միջոց է, որը կարող է արդարացվել միայն խիստ սահմանափակ հանգամանքներում: Մերժումն ունի ավելի սահմանափակ հետևանքներ, և դրանք ավելի հեշտ է հաղթահարել՝ գրանցման նոր դիմում ներկայացնելով (*The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria* (no. 2), 2011, § 94):

170. Երբ, անկախ խնդրո առարկա խախտման ծանրությունից, միավորման լուծարումը ներպետական օրենսդրությամբ հասանելի միակ պատժամիջոցն է, առավել համաչափ պատժամիջոցի ընտրության հարցում ավելի մեծ ճկունության հնարավոր է հասնել, եթե օրենքով նախատեսվեն նվազ արմատական, այլընտրանքային պատժամիջոցներ, ինչպիսիք են՝ նախագգուշացումը, տուգանքը կամ հարկային արտոնություններից զրկելը (*Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov*, 2009, § 82; *Jehovah's Witnesses of Moscow and Others v. Russia*, 2010, § 159):

171. Չուտ հասարակական կազմակերպությունների ներքին կառավարմանը ներկայացվող իրավական որոշակի պահանջները չպահպանելու հանգամանքը չի կարող համարվել այնպիսի լուրջ զանցանք, որը պահանջում է ամբողջական լուծարում (*Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan*, 2009, § 82): Սակայն, եթե հանրային շահեր հետապնդող միավորումը այլևս ընդունակ չէ գործել իր նպատակներին համահունչ՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, դրա լուծարումը կարող է լինել արդարացված (*MİHR Foundation v. Turkey*, 2019, §§ 41-43): Թեև սնանկության կամ երկարատև անգործության հիմքերով

միավորման լուծարումը կարող է համարվել որպես իրավաչափ նպատակ հետապնդող՝ 11-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո, ներպետական իշխանությունների որոշումները պետք է հիմնվեն վերաբերելի փաստերի ընդունելի գնահատման վրա (*Croatian Golf Federation v. Croatia*, 2020, §§ 96 և 100):

172. Լուծարման գործերով համաչափության պահանջը բավարարելու համար իշխանությունները պետք է ցույց տան, որ նույն նպատակներին հասնելու համար չեն եղել միավորման ազատության իրավունքին ավելի մեղմ միջամտող այլ միջոցներ: (*Adana TAYAD v. Turkey*, 2020, § 36; *Association Rhino and Others*, 2011, § 65; *Magyar Keresztény Mennonita Egyház and Others*, 2014, § 96): Դատարանն, այդուհանդերձ, ընդունել է, որ կարող են լինել դեպքեր, երբ միավորման գոյության կամ դրա գործունեության հետ ընկալվող վնասակար հետևանքների հետ կապված «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանն» արձագանքելու համար իշխանություններին հասանելի միջոցների ընտրությունն անխուսափելիորեն սահմանափակ է (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 105; *Ayoub and Others v. France*, 2020, §§ 119-120):

173. Պետություններն իրավասու են ձեռնարկել *կանխարգելիչ միջոցներ* քաղաքական կուսակցություններից և ոչ կուսակցական կազմակերպություններից ժողովրդավարությունը պաշտպանելու նպատակով: Չի կարելի պահանջել իշխանություններից՝ սպասել մինչև քաղաքական կուսակցությունը զավթի իշխանությունը և սկսի կոնկրետ քայլեր ձեռնարկել Կոնվենցիայի չափանիշների հետ անհամատեղելի քաղաքականության իրականացման ուղղությամբ: Երբ այդ քաղաքականության վտանգը բավականաչափ հիմնավոր է և անմիջական, պետությունը կարող է ողջամտորեն նախականիսել նման քաղաքականության իրականացումը, նախքան փորձ արվի իրականացնել այն կոնկրետ քայլերի միջոցով, որոնք կարող են վնաս հասցնել քաղաքացիական խաղաղությանը և երկրի ժողովրդավարական ռեժիմին (*Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey*, 2003, § 102; *Herri Batasuna and Batasuna v. Spain*, 2009, § 81): Նմանապես, կանխարգելիչ միջոցներ կարող են կիրառվել ոչ կուսակցական կազմակերպությունների նկատմամբ, եթե այլ անձանց իրավունքների համար բավականաչափ վերահաս վտանգը սպառնում է խարխիլել ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքները (*Vona v. Hungary*, 2013, § 57):

174. Օրինակ, Դատարանը գտել է, որ կուսակցության կամ այլ միավորման լուծարումը հիմնավոր էր, երբ այն՝

- ձգտում էր ստեղծել շարիաթի վրա հիմնված պետություն (*Refah Partisi (The Welfare Party) and others v. Turkey*, 2003; *Zehra Foundation and Others v. Turkey*, 2018, ; *Kalifatstaat v. Germany* (dec.), 2006).
- կապեր ուներ ահաբեկչական կազմակերպության հետ (*Herri Batasuna and Batasuna v. Spain*, 2009).
- մասնակցում էր հակազնչուական ցույցերի և ռազմականացված շքերթների (*Vona v. Hungary*, 2013,).
- ներգրավված էր ֆուտբոլային խաղերի հետ կապված կրկնվող բռնարարներում (*Les Authentiks and Supras Auteuil 91 v. France*, 2016).
- ուներ մասնավոր միլիցիայի հատկանիշներ և մասնակցում էր բռնության և հասարակական անկարգության դեպքերի (*Ayoub and Others v. France*, 2020):

Ե. Միավորումների առանձին տեսակներ

175. Թեև 11-րդ հոդվածը չի բացառում իր պաշտպանությունը միավորման որևէ տեսակի համար, Դատարանի նախադեպային իրավունքում որպես ժողովրդավարական հասարակությունում առանցքային դերակատարներ՝ առավել հաճախ են հանդիպում քաղաքական կուսակցությունները, փոքրամասնական միավորումները և կրոնական միավորումները: Արհեստակցական միությունները՝ որպես 11-րդ հոդվածում բացահայտ նշված միավորման միակ տեսակ, դիտարկվելու են առանձին՝ Մաս 3-ում՝ ելնելով դրանց առանձնահատկություններից և դերից:

1. Քաղաքական կուսակցություններ

176. Հաշվի առնելով բազմակարծության և ժողովրդավարության պատշաճ գործառնությունները երաշխավորման գործում քաղաքական կուսակցությունների կենսական դերը՝ դրանց դեմ ձեռնարկված ցանկացած միջոց ազդում է թե՛ միավորումների ազատության և թե՛ այդպիսով, տվյալ պետությունում ժողովրդավարության վրա (*Republican Party of Russia v. Russia*, 2011, § 78): Հետևաբար, 11-րդ հոդվածում ամրագրված բացառությունները պետք է հստակ մեկնաբանվեն, և միայն համոզիչ ու անհերքելի փաստարկները կարող են հիմնավորել նման կուսակցությունների միավորման ազատության սահմանափակումները (*United Communist Party of Turkey and Others v. Turkey*, 1998, § 46): Այդուհանդերձ, պետությունը կարող է արդարացիվել Կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված իր պոզիտիվ պարտավորությունների հիմքով՝ քաղաքական կուսակցությունների վրա Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները հարգելու և երաշխավորելու պարտականություն, ինչպես նաև ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին հակասող քաղաքական ծրագիր չառաջադրելու պարտավորություն սահմանելու համար (*Refah Partisi (The Welfare Party) and others v. Turkey*, 2003, § 103):

ա. Գրանցման մերժում և լուծարում

177. Կտրուկ միջոցներ, ինչպիսիք են՝ քաղաքական ամբողջ կուսակցության լուծարումը կամ կուսակցության գրանցման մերժումը, կարող են ձեռնարկվել միայն ամենալուրջ դեպքերում (*Herri Batasuna and Batasuna v. Spain*, 2009, § 78; *Linkov v. the Czech Republic*, 2006, § 45): Դրանք այն դեպքերն են, որոնք վտանգում են քաղաքական բազմակարծությունը կամ ժողովրդավարության հիմնարար սկզբունքները (*Party for a Democratic Society (DTP) and Others v. Turkey*, 2016, § 101):

178. Դատարանը սահմանել է երկու պայման, որոնց դեպքում քաղաքական կուսակցությունը կարող է առաջ քաշել օրենքում կամ պետության իրավական և սահմանադրական կարգերում փոփոխության հարց: Առաջին, այդ նպատակով գործադրվող միջոցները պետք է լինեն իրավական և ժողովրդավարական, երկրորդ՝ առաջարկվող փոփոխությունն ինքնին պետք է համահունչ լինի հիմնարար ժողովրդավարական սկզբունքներին: Հետևաբար, քաղաքական կուսակցությունը, որի առաջնորդները դրդում են բռնության կամ առաջադրում են քաղաքականություն, որը չի հարգում ժողովրդավարությունը կամ նպատակ ունի կազմաքանդել ժողովրդավարությունն ու ոտնահարել ժողովրդավարական հասարակությունում ընդունված իրավունքներն ու ազատությունները, չի կարող հայցել Կոնվենցիայի պաշտպանություն՝ այս հիմքերով սահմանված պատիժներից (*Yazar and Others v. Turkey*, 2002, § 49):

179. Հարկ է հաշվի առնել մի կարևոր գործոն՝ արդյո՞ք կուսակցության ծրագիրը պարունակում է բռնություն գործադրելու, ապստամբելու կամ ժողովրդավարական սկզբունքներն այլ կերպ մերժելու կոչ (*Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v. Romania*, 2005, § 54; *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey*, 1999, § 40): Քաղաքական կուսակցության ծրագիրը, սակայն, դրա նպատակները և մտադրությունները որոշելու միակ չափորոշիչը չէ, քանի որ ծրագրի բովանդակությունը պետք է համեմատել կուսակցության առաջնորդների գործողությունների և նրանց պաշտպանած դիրքորոշումների հետ: Համակցությամբ, այս գործողությունները և դիրքորոշումները կարող են կարևոր լինել քաղաքական կուսակցության լուծարման վարույթի համար, քանի որ կարող են բացահայտել դրա նպատակներն ու մտադրությունները (*Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey*, 2003, § 101; *Herri Batasuna and Batasuna v. Spain*, 2009, § 80):

180. Դատարանը, «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» ժողովրդավարական սկզբունքները խարխլելու վտանգի հիմքով քաղաքական կուսակցության գրանցման մերժման կամ դրա լուծարման համապատասխանության հարցը քննելիս, հաշվի է առնում հետևյալ կետերը. (i) արդյո՞ք եղել է արժանահավատ ապացույց, որ ժողովրդավարության համար վտանգը եղել է բավականաչափ վերահաս, (ii) արդյո՞ք առաջնորդների գործողությունները և ելույթները, որոնք դիտարկվում են քննվող գործի շրջանակում, վերագրելի էին խնդրո առարկա կուսակցությանը, (iii) արդյո՞ք քաղաքական կուսակցությանը վերագրվող գործողությունները

և ելույթները ձևավորել են մի ամբողջականություն, որը տվել է կուսակցության պատկերացրած և ջատագոված հասարակության մոդելի հստակ պատկեր, որը հակասում է «ժողովրդավարական հասարակության» գաղափարին (*Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey*, 2003, § 104; *Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v. Romania*, 2005, § 46):

181. *Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey*, 2003, գործում Սահմանադրական դատարանը լուծարել էր կուսակցությունն այն հիմքով, որ վերջինս դարձել էր «Աշխարհիկության սկզբունքի դեմ ուղղված գործունեության կենտրոն»: Դատարանը, չգտնելով 11-րդ հոդվածի խախտում, համարել էր, որ Ռեֆահի (անգլ.՝ Refah, Բարեկեցության կուսակցություն) անդամների և առաջնորդների գործողությունները և ելույթները բացահայտել են իրավական համակարգերի բազմաքանակության շրջանակում կուսակցության՝ շարիաթի վրա հիմնված հասարակարգ ձևավորելու հեռահար քաղաքականությունը, նաև որ Ռեֆահը չի բացառել իր քաղաքականությունն իրականացնելու նպատակով ուժի գործադրումը: Հաշվի առնելով, որ այս պլանները հակասում են «ժողովրդավարական հասարակության» գաղափարին և այն, որ կուսակցությունն ունեցել է դրանք իրագործելու իրական հնարավորություններ, կարելի է ողջամտորեն համարել, որ Սահմանադրական դատարանի որոշումը համապատասխանել է «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը»:

182. Դատարանը 11-րդ հոդվածի խախտում չի գտել նաև *Herri Batasuna and Batasuna v. Spain*, 2009, գործում, որտեղ զանգատաբեր կուսակցությունները լուծարվել էին *սահբեկչության միջոցով* «մարտավարական անջատման» ռազմավարություն իրականացնելու, ինչպես նաև նրանց և ԷՏԱ ահաբեկչական կազմակերպության միջև զգալի նմանությունների հիմքով: Դատարանը չգտավ իսպանական դատարանների վճիռներից շեղվելու պատճառներ: Հաշվի առնելով իրավիճակը, որն ահաբեկչական հարձակումների հետ կապված երկար տարիներ գոյություն էր ունեցել Իսպանիայում, զանգատաբեր կուսակցությունների և ԷՏԱ-ի միջև կապերը կարող էին օբյեկտիվորեն համարվել ժողովրդավարության համար սպառնալիք: Ավելին, զանգատաբեր կուսակցություններին վերագրվող գործողությունները և ելույթները ստեղծել էին այդ կուսակցությունների պատկերացրած և ջատագոված սոցիալական մոդելի հստակ պատկեր, որը հակասում էր «ժողովրդավարական հասարակության» գաղափարին և զգալի սպառնալիք էր իսպանական ժողովրդավարության համար: Հետևաբար, զանգատաբերների նկատմամբ կիրառված պատժամիջոցները համահունչ էին «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» և համաչափ հետապնդած իրավաչափ նպատակին:

183. Կուսակցության ծրագրում կամ գործողություններում ոչ ժողովրդավարական մտադրությունների ապացույցների բացակայության պայմաններում քաղաքական կուսակցությունների նկատմամբ կտրուկ միջոցներ կիրառելը հանգեցրել են Դատարանին այն եզրակացության, որ եղել է 11-րդ հոդվածի խախտում:

184. *Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v. Romania*, 2005, գործով, որտեղ իշխանությունները մերժել էին *կոմունիստների* կուսակցության գրանցումը, Դատարանը չընդունեց կառավարության փաստարկը, որ Ռումինիան չէր կարող թույլատրել, որ կոմունիստական նոր կուսակցության ի հայտ գալը դառնար ժողովրդավարական բանավեճի թեմա: Թեև Դատարանը պատրաստ էր հաշվի առնել Ռումինիայի՝ մինչև 1989 թվականն ունեցած տոտալիտար կոմունիզմի փորձը, այն համարեց, որ այդ համատեքստն ինքնին չի կարող հիմնավորել միջամտության անհրաժեշտությունը, հատկապես, երբ մի շարք երկրներում գոյություն ունեն մարքսիստական գաղափարախոսության հետևորդ կոմունիստական կուսակցություններ: Քանի որ կուսակցության ծրագրում չկար ոչինչ, ինչը կարելի էր համարել բռնություն գործադրելու կամ ժողովրդավարական սկզբունքներն այլ կերպ մերժելու կամ «պրոլետարիատի դիկտատուրա» հաստատելու որևէ կոչ, ծրագիրը չէր հակասում «ժողովրդավարական հասարակությանը»:

185. Դատարանը նման եզրահանգման եկավ *Tsonev v. Bulgaria*, 2006, գործով, որտեղ իշխանությունները մերժել էին գրանցել Բուլղարիայի կոմունիստական կուսակցությունը՝ հղում կատարելով գրանցման փաստաթղթերում տեղ գտած ձևական թերություններին և ենթադրյալ վտանգներին, որոնք բխում էին կուսակցության նպատակներից և հայտարարություններից: Դատարանը չգտավ որևէ նշան, որ կուսակցությունը, չնայած անվանմանը, ձգտում է հաստատել

սոցիալական մի դասակարգի գերիշխանությունը մյուսների նկատմամբ: Նաև չկային ապացույցներ, որ ներառելով «հեղափոխական» բառը կուսակցության կանոնադրության նախաբանում՝ այն նախապատվություն է տվել քաղաքականության, որն իրական սպառնալիք էր ներկայացնում բուլղարական պետության համար: Ավելին, կուսակցության հայտարարություններում չկար ոչինչ, որ վկայում էր դրա նպատակների ոչ ժողովրդավարական լինելու կամ դրանց հասնելու համար բռնություն գործադրելու մտադրության մասին:

186. Ի հակառակ, *Ignatencu and the Romanian Communist Party v. Romania*, 2020, գործով զանգատարեր կուսակցության գրանցման մերժումը համարվեց հիմնավոր: Զանի որ կուսակցությունը կոչում էր իրեն տոտալիտար կոմունիզմի ժամանակաշրջանում երկրում իշխած կոմունիստական կուսակցության իրավահաջորդ, իշխանությունները ձգտել են կանխել կուսակցության կողմից իր դիրքի հնարավոր չարաշահումը, պաշտպանել իրավունքի գերակայությունը և ժողովրդավարության հիմնարար սկզբունքները: Դատարանը համարել է, որ տվյալ գործի առանձնահատուկ համատեքստում իշխանությունների բերած՝ կուսակցության գրանցումը մերժելու պատճառները վերաբերելի էին և բավարար, իսկ միջոցը համաչափ է եղել պետական անվտանգությունը և այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու հետապնդած իրավաչափ նպատակին:

187. Ազգային օրենսդրության մեջ քաղաքական կուսակցության էթնիկ պատկանելության արգելքն ինքնին չի հակասում Կոնվենցիային: Հետևաբար, այն կարող է հանդիսանալ քաղաքական կուսակցության գրանցումը մերժելու իրավաչափ հիմք՝ պայմանով որ ազգային իշխանությունների ներկայացրած պատճառները բավարար են նման խիստ միջոցը հիմնավորելու համար (*Savenko and Others v. Russia*, §§ 92-93, որտեղ «Ազգային բոլշևիկյան կուսակցության», որի արտաքին քաղաքականության ծրագիրը հռչակում էր էթնիկ ռուսների և ռուսախոս բնակչության պաշտպանությունը, գրանցման մերժումը բավարար չափով հիմնավոր չէր):

188. Հարկ է նշել, որ քաղաքական կուսակցության անվանման ընտրությունը սկզբունքորեն չի կարող հիմնավորել լուծարման պես ծայրահեղ միջոցը, եթե չկան այլ վերաբերելի և բավարար հանգամանքներ (*United Communist Party of Turkey and Other v. Turkey*, 1998, § 54, որտեղ կուսակցության լուծարման հիմքերից մեկը «կոմունիստ» բառի գործածությունն էր անվանման մեջ):

189. Մի շարք գործերով Դատարանը գտավ 11-րդ հոդվածի խախտում, երբ իշխանությունները համարել էին, որ կուսակցության ծրագիրը վնաս է հասցնում պետության տարածքային ամբողջականությանը և խրախուսում է բնակչության որոշակի խմբի *անջատողականությունը*: Դատարանի կարծիքով՝ ժողովրդավարական հիմնարար սկզբունքներին համապատասխանող քաղաքական խմբի գործունեության խոչընդոտումը միայն այն պատճառաբանությամբ, որ վերջինս քննադատել է երկրի սահմանադրական և իրավական կարգը, նաև ձգտել քաղաքական ասպարեզում հանրային բանավեճի, հիմնավոր չէ (*United Communist Party of Turkey and Other v. Turkey*, 1998, § 57): Ժողովրդավարության էությունն է՝ հնարավորություն տալ առաջարկել և քննարկել բազմազան քաղաքական ծրագրեր, նույնիսկ այնպիսիք, որոնք կասկածի տակ են դնում պետության ընթացիկ կազմակերպման եղանակը՝ պայմանով որ դրանք վնաս չեն հասցնում բուն ժողովրդավարությանը (*Socialist Party and Others v. Turkey*, 1998, § 47; *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* [GC], 1999, § 41):

190. Չուտ փաստը, որ քաղաքական կուսակցությունը հնչեցնում է ինքնավարության կամ նույնիսկ երկրի տարածքի մի մասի անջատման կոչեր, բավարար չէ պետական անվտանգության հիմքով դրա լուծարումը հիմնավորելու համար: Իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում քաղաքական գաղափարները, որոնք հարցականի տակ են դնում գոյություն ունեցող հասարակարգը՝ կասկածի տակ չդնելով ժողովրդավարության նորմերը, և որոնց իրագործումը քարոզվում է խաղաղ միջոցներով, պետք է ստանան քաղաքական գործընթացին մասնակցելու միջոցով արտահայտման պատշաճ հնարավորություն (*The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria*, 2005, § 61):

191. Պետություններն իրավասու են, պահպանելով համաչափության պայմանը, պահանջել քաղաքական կուսակցություններից բավարարել *ձևական-իրավական ողջամիտ պայմաններ*,

որոնք առնչվում են դրանց ձևավորմանը (*The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria (no. 2)*, 2011, § 83; *Republican Party of Russia v. Russia*, 2011, գործով Դատարանը գտավ, որ նվազագույն անդամության և տարածքային ներկայացվածության պահանջները չկատարելու հիմքով գանգատաբեր կուսակցության լուծարումը համաչափ չէր կառավարության ներկայացրած իրավաչափ նպատակներին: Թեև քաղաքական կուսակցություններին ներկայացվող անդամների նվազագույն քանակ ունենալու պահանջն արտասովոր երևույթ չէր Եվրոպայի խորհուրդի անդամ պետություններում, Ռուսաստանի օրենսդրությամբ սահմանված շեմը, որը 2001 թվականին 10,000 անդամից հասավ 50,000-ի, ամենաբարձրն էր Եվրոպայում: Դատարանը գտավ, որ վաղուց կայացած, օրինապահ քաղաքական կուսակցության նկատմամբ ֆորմալ հիմքով լուծարման կարգի արմատական միջոց կիրառելը չէր կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Նվազագույն անդամության պահանջը կարող է արդարացված լինել միայն այն դեպքում, երբ այն չի խոչընդոտել բնակչության զանազան, այդ թվում՝ փոքր խմբերի շահերը ներկայացնող բազմակարծիք քաղաքական կուսակցությունների հիմնադրմանը և գործունեությանը, նաև ապահովել է դրանց մուտքը քաղաքական ասպարեզ (§§ 119-120):

192. Ինչ վերաբերում է տարածքային ներկայացվածության պահանջին, ապա դրա նպատակն էր կանխել տարածաշրջանային կուսակցությունների հիմնադրումը և դրանց մասնակցությունն ընտրություններին, որոնք սպառնալիք էին երկրի տարածքային ամբողջականության համար: Դատարանի կարծիքով գոյություն ունեին Ռուսաստանի օրենքները, հաստատությունները և պետական անվտանգությունը պաշտպանելու այլ միջոցներ, քան տարածքային կուսակցություններ ստեղծելու բացարձակ արգելքն էր, որը ներդրվել էր միայն 2001 թվականին: Ժամանակի ընթացքում ավելի դժվար է դարձել քաղաքական կուսակցությունների նկատմամբ ընդհանուր բնույթի սահմանափակումների կիրառումը հիմնավորելու խնդիրը: Անհրաժեշտ է հաշվի առնել ոչ թե որոշակի խմբի կամ տեսակի կուսակցությունների առաջացրած ենթադրյալ սպառնալիքը, այլ յուրաքանչյուր քաղաքական կուսակցության փաստացի ծրագիրը և գործելակերպը (§§ 122 և 130):

բ. Ֆինանսավորում և ստուգումներ

193. Դատարանն ընդունել է, որ քաղաքական կուսակցությունների ֆինանսական գործունեությունն անհրաժեշտ է վերահսկել հաշվետվողականության և թափանցիկության նպատակներով, որոնք ծառայում են քաղաքական գործընթացի նկատմամբ հասարակության վստահությունը երաշխավորելուն: Հաշվի առնելով ժողովրդավարությունների պատշաճ գործառնությունները հարցում քաղաքական կուսակցությունների ունեցած վաղեմի դերը՝ կարելի է համարել, որ լայն հասարակությունը շահագրգռված է, որ դրանք լինեն մշտադիտարկման առարկա, իսկ անկանոն ծախսերի համար ենթարկվեն պատժի, հատկապես, երբ խոսքը վերաբերում է պետական ֆինանսավորում ստացող քաղաքական կուսակցություններին (*Cumhuriyet Halk Partisi v. Turkey*, 2016, § 69):

194. Անդամ պետություններն օժտված են հայեցողության հարաբերական լայն շրջանակով՝ քաղաքական կուսակցությունների ֆինանսները ստուգելու և անկանոն ֆինանսական գործարքների համար պաժամիջոցներ սահմանելու հարցում (*Cumhuriyet Halk Partisi v. Turkey*, 2016, § 70):

195. Այդուհանդերձ, քաղաքական կուսակցությունների ծախսերի ստուգումը կանոնակարգող իրավական նորմերը պետք է ձևակերպվեն այնպիսի եզրույթներով, որոնք կտրամադրեն ողջամիտ ցուցում՝ ինչպես պետք է մեկնաբանվեն և կիրառվեն այս նորմերը (*Cumhuriyet Halk Partisi v. Turkey*, 2016, § 106):

196. Ֆինանսական ստուգումը երբեք չպետք է օգտագործվի որպես կուսակցությունների հսկողության քաղաքական գործիք, հատկապես այն պատրվակով, որ կուսակցությունն ունի հանրային ֆինանսավորում: Քաղաքական նպատակներով ֆինանսական ստուգումների կարգի չարաշահումները կանխելու նպատակով քաղաքական կուսակցությունների ֆինանսական դրության ստուգումը կարգավորող օրենքների նկատմամբ պետք է կիրառվի «կանխատեսելիության» բարձր չափանիշ՝ թե՛ սահմանվող հատուկ պահանջների, թե՛

պահանջների խախտման հետևանքով առաջացող պատիժների իմաստով (*Cumhuriyet Halk Partisi v. Turkey*, 2016, § 88):

197. Քաղաքական կուսակցություններին օտարերկրյա աղբյուրներից ֆինանսական միջոցների ստացումն արգելելն ինքնին չի հակասում Կոնվենցիայի 11-րդ հոդվածին: Այս խնդիրը պետությունների հայեցողության շրջանակում է, որոնք ազատ են որոշելու՝ օտարերկրյա ֆինանսավորման որ աղբյուրներից կարող են միջոցներ ստանալ քաղաքական կուսակցությունները: Օտարերկրյա պետությունների կողմից քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման արգելքը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ազգային ինքնիշխանությունը պահպանելու համար (*Parti nationaliste basque – Organisation régionale d’Iparralde v. France*, 2007, § 47):

198. Պետությունների հայեցողության շրջանակը կարող է ընդգրկել կուսակցության ներքին կազմակերպման և գործունեության հարցերին միջամտելու իրավունք՝ ձևական-իրավական ողջամիտ պայմաններին չհամապատասխանելու դեպքերում: Ասվածով հանդերձ, իշխանությունների միջամտությունը չպետք է հասնի այնպիսի չափերի, որ ապահովի կուսակցության կողմից սեփական կանոնադրության մեջ նշված յուրաքանչյուր ձևականության կատարումը: Առաջին հերթին, դա ոչ թե իշխանությունների, այլ կուսակցության և դրա անդամների խնդիրն է՝ ապահովել սահմանված պայմանների կատարումը միավորման կանոնադրության մեջ նշված եղանակով (*Republican Party of Russia v. Russia*, 2011, §§ 87-88, որտեղ իշխանությունների՝ կուսակցության ներքին ընթացակարգը խախտելու հիմքով պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու մերժումը Դատարանը համարեց բավարար իրավական հիմնավորում չունեցող և ժողովրդավարական հասարակությունում ոչ անհրաժեշտ):

199. Դատարանը արդարացված չհամարեց քաղաքական կուսակցությունների անդամության հարցերի հաճախակի և համակողմանի ստուգումները և ձևական հիմքերով լուծարելու մշտական սպառնալիքը (§§ 115-116):

2. Փոքրամասնությունների միավորումներ

200. Դատարանը գտել է, որ միավորման ազատությունն առանձնակի կարևոր է փոքրամասնություններին, ներառյալ՝ ազգային և էթնիկ փոքրամասնություններին պատկանող անձանց համար: Անկասկած, սեփական ինքնությունն արտահայտելու և խթանելու նպատակով միավորում ստեղծելը կարող է կարևոր դեր խաղալ տվյալ փոքրամասնության իրավունքների պահպանմանն ու պաշտպանությանը (*Gorzelik and Others v. Poland* [GC], 2004, § 93):

201. Երկրում փոքրամասնությունների և տարբեր մշակույթների գոյությունը պատմական փաստ է, որը ժողովրդավարական հասարակությունը պետք է հանդուրժի, նույնիսկ պաշտպանի և խրախուսի՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համաձայն (*Eğitim ve Bilim Emekçileri Sendikası v. Turkey*, 2012, § 59):

202. Փոքրամասնության մշակույթի պահպանումը և զարգացումը, փոքրամասնության պատկանելու գիտակցության հիշատակումը չեն կարող պարունակել սպառնալիք «ժողովրդավարական հասարակության» համար, եթե անգամ կարող է սադրել լարվածություն (*Ouranio Toxo and Others v. Greece*, 2005, § 40): Լարվածության առաջացումը բազմազանության հանդեպ անկեղծ հարգանքի, էթնիկ և մշակութային ինքնությունների դիմամիկ զարգացման վրա հիմնված բազմակարծության անխուսափելի հետևանք է (*ibid.*, § 35): Նման հանգամանքներում իշխանությունների դերը ոչ թե բազմակարծության վերացման միջոցով լարվածության պատճառն արմատախիլ անելն է, այլ մրցակցող խմբերի՝ միմյանց նկատմամբ հանդուրժողականությունն ապահովելը (*Zhdanov and Others v. Russia*, 2019, § 163):

203. Միավորման գործունեությունը, որի նպատակն է՝ խթանել տարածաշրջանի մշակույթը, նույնիսկ ենթադրելով, որ այն նաև նպատակ ունի մասամբ խրախուսելու փոքրամասնության մշակույթը, չի սպառնում տարածքային ամբողջականությանը, պետական անվտանգությանը և հասարակական կարգին (*Tourkiki Enosi Xanthis and Others v. Greece*, 2008, § 51):

204. Դատարանը գտել է, որ փոքրամասնության գիտակցությունը քարոզող միավորման գրանցման մերժումն այն հիմքով, որ առկա է գուտ կասկած, որ միավորման հիմնադրները

մտադրություններ ունեն խարխալելու երկրի տարածքային ամբողջականությունը, համաչափ չէ պետական անվտանգությունը պաշտպանելու նպատակին:

205. *Sidiropoulos and Others v. Greece*, 1998, գործով ներպետական դատարանները մերժել էին Մակեդոնական մշակութային միության գրանցումն այն հիմքով, որ վերջինս նպատակ ուներ խարխալելու երկրի տարածքային ամբողջականությունը: Դատարանը գտավ, որ միավորման նպատակները՝ մակեդոնական փոքրամասնության ավանդույթների և մշակույթի պահպանումն ու զարգացումը, լիովին իրավաչափ են: Դատարանի կարծիքով՝ երկրի որևէ տարածաշրջանի բնակիչներն իրավունք ունեն ձևավորել միավորումներ տվյալ տարածաշրջանի առանձնահատկությունները խթանելու նպատակով: Ազգային դատարանների պնդումը, որ միավորումը սպառնում էր Հունաստանի տարածքային ամբողջականությանը հիմնված էր գուտ կասկածի վրա: Եթե գրանցումից հետո միավորումն իրականացներ գործունեություն, որը կհակասեր իր հռչակած նպատակներին կամ օրենքին, իշխանությունները կարող էին լուծարել այն: Հետևաբար, գանգատաբերների միավորումը գրանցելու մերժումը համաչափ չէր հետապնդած նպատակներին (§§ 44-47):

206. Նմանատիպ նկատառումներից ելնելով՝ Դատարանը գտավ 11-րդ հոդվածի խախտում, երբ իշխանությունները մերժել էին գրանցել մահմեդական փոքրամասնության միավորում (*Bekir-Ousta and Others v. Greece*, 2007, § 42-44; *National Turkish Union Kungyun v. Bulgaria*, 2017, §§ 44- 45): Ոչինչ չէր հուշում, որ միավորումները քարոզում էին բռնության գործադրում կամ հակաժողովրդավարական միջոցներ:

207. Բոլոր դեպքերում, անջատողական տեսակետների արտահայտումը և ինքնավարության կամ տարածքային փոփոխությունների կոչերն ինքնին սպառնալիք չեն երկրի տարածքային ամբողջականությանը և պետական անվտանգությանը (*The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria*, 2006, § 76): Ոչ էլ միավորման անվանման մեջ որոշակի բառերի օգտագործումը չի կարող ենթադրել նման սպառնալիք (*National Turkish Union Kungyun v. Bulgaria*, 2017, § 45):

208. Համեմատության համար՝ պետություններն ունեն ընտրություններին մասնակցելու չափորոշիչներ սահմանելու զգալի ազատություն: Օրինակ, իրավաբանական անձ ստեղծելու մերժումը, որն իրավունք կունենար մասնակցելու ընտրություններին, կարող էր անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում, որտեղ անհատների համար չկային փոքրամասնության առանձնահատկություններն արտահայտելու և պաշտպանելու նպատակով միավորում ստեղծելու այլ արգելքներ:

209. *Gozelik and Others v. Poland* [GC], 2004, գործով իշխանությունները մերժել էին գրանցել միավորում, որն ինքն իրեն բնութագրում էր՝ որպես սիլեզյան ազգային փոքրամասնության կազմակերպություն: Իշխանությունները համարել էին, որ սիլեզիացիներն ազգային փոքրամասնություն չեն, և միավորման գրանցումը որպես «ազգային փոքրամասնության կազմակերպություն» կօժտեր վերջինիս ընտրական արտոնություններով, որոնք առավելություն կտային մյուս էթնիկ կազմակերպությունների նկատմամբ: Դատարանն ընդունեց, որ ազգային իշխանությունները դուրս չէին եկել իրենց հայեցողության սահմաններից, երբ համարել էին, որ գրանցման պահին առկա էր միավորման՝ «ազգային փոքրամասնության կազմակերպություն» ինքնանվանվելու ազատ ընտրությունը կանոնակարգելու ծայրահեղ սոցիալական անհրաժեշտություն՝ Լեհաստանում գործող ժողովրդավարական հաստատությունները և ընտրական ընթացակարգերը պաշտպանելու համար: Մերժումը համաչափ էր հետապնդած իրավաչափ նպատակներին, քանի որ հիմնականում առնչվում էր ոչ թե ընդհանուր շահերի ոլորտում կոլեկտիվ գործելու ունակությանը, այլ անվանմանը, որը միավորումը կարող էր օգտագործել օրենքով (§§ 103-106):

210. *Artyomov v. Russia* (dec.), 2006, գործով Դատարանը հիմնավոր համարեց քաղաքական կուսակցությունը, որը բացահայտ հայտարարում էր որոշակի էթնիկ խմբի հետ կապի մասին, որպես միավորում գրանցելու մերժումը («Ռուսական համազգային միություն», անգլ.՝ “Russian All-Nation Union”): Իշխանությունները չեն արգելել գանգատաբերին ստեղծել միավորում, որը կարտահայտի և կխթանի դրա որդեգրած կոնկրետ նպատակները, բայց թույլ չեն տվել հիմնադրել իրավաբանական անձ, որը գրանցումից հետո իրավունք կունենար մասնակցել ընտրություններին: Հաշվի առնելով ընտրական հարցերում ազգային առանձնահատկության

նկատմամբ հարգանքի սկզբունքը՝ Դատարանը չգտավ թերություններ ազգային դատարանների այն եզրահանգումներում, որ ժամանակակից Ռուսաստանում վտանգավոր կլինեին խրախուսել ընտրական մրցակցությունն էթնիկ կամ կրոնական պատկանելության վրա հիմնված քաղաքական կուսակցությունների միջև:

211. Միավորման անվանումը չի կարող ինքնին հիմնավորել դրա լուծարումը, նույնիսկ երբ անվանման հետևանքով բնակչության մեծ մասի մոտ առաջանում են շոշափական զգացմունքներ, բայց չկան հասարակական կարգին իրական սպառնալիքի կոնկրետ ապացույցներ (*Association of Citizens “Radko” and Paunkovski v. the former Yugoslav Republic of Macedonia*, 2009, § 75, առնչվում էր միավորման լուծարմանը, որը ժխտում էր մակեդոնական էթնիկության գոյությունը):

212. *Eğitim ve Bilim Emekçileri Sendikası v. Turkey*, 2012, գործով Դատարանը գտավ, որ պետական լեզվից տարբեր մայրենի լեզվով կրթության իրավունքին աջակցելու համար գանգատաբեր միավորման լուծարումը 11-րդ հոդվածի խախտում էր: Թեև խնդիրը կարող էր վիրավորել բնակչության մեծ մասի որոշակի համոզմունքները, պատշաճ գործող ժողովրդավարությունը պահանջում էր հանրային քննարկում, որը կօգներ գտնել քաղաքական կամ հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի լուծումներ: Դատարանի կարծիքով՝ թուրքերենից տարբեր մայրենի լեզու ունեցող ազգությունների մշակույթը՝ այդ մայրենի լեզվով կրթության միջոցով զարգացնելու նպատակն ինքնին չէր հակասում պետական անվտանգությանը և սպառնալիք չէր հասարակական կարգի համար (§§ 55-59):

213. Միավորման ազատությունն ընդգրկում է սեփական էթնիկ ինքնության մասին ունեցած համոզմունքներն իրավաչափ համատեքստում արտահայտելու յուրաքանչյուր անձի իրավունքը: Որքան էլ տհաճ և անընդունելի լինեն որոշակի տեսակետներ կամ օգտագործած բառերն իշխանությունների համար, դրանց տարածումը չի կարող ինքնաբերաբար համարվել սպառնալիք հանրային քաղաքականության կամ երկրի տարածքային ամբողջականության համար (*Tourkiki Enosi Xanthis and Others v. Greece*, 2008, § 51, որտեղ առաջին գանգատաբեր միավորումը լուծարվել էր՝ ի թիվս այլ պատճառների, փոքրամասնությունների մասին ունեցած տեսակետների համար):

3. Կրոնական միավորումներ

214. Հավատացյալների՝ կրոնի ազատության իրավունքը, որն ընդգրկում է անձի՝ այլ անձանց հետ միասին իր կրոնը դավանելու իրավունքը, ներառում է այն ակնկալիքը, որ հավատացյալներին հնարավորություն կտրվի ազատ միավորվելու՝ առանց պետության կամայական միջամտության: Իրապես, կրոնական համայնքների ինքնավար գոյությունն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության բազմակարծության համար: Պետության չեզոքության և անկողմնակալության պարտականությունը բացառում է պետության՝ կրոնական համոզմունքների կամ դրանց արտահայտման համար օգտագործվող միջոցների իրավաչափությունը որոշելու հայեցողությունը (*Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, §§ 58 և 92):

215. Երբ քննարկման առարկա է կրոնական համայնքի կազմակերպությունը, դրա ճանաչման մերժումը նույնպես պարունակում է միջամտություն գանգատաբերների՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածում ամրագրված կրոնի ազատության իրավունքին (*Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 71):⁶

216. Սակայն, 11-րդ հոդվածով՝ 9-րդ հոդվածի հետ համակցությամբ, կրոնական կազմակերպություններին տրված չէ որոշակի իրավական կարգավիճակ ունենալու իրավունք: Կոնվենցիայի 9-րդ և 11-րդ հոդվածներն ընդամենը պահանջում են պետությունից երաշխավորել, որ կրոնական համայնքները հնարավորություն ունենան, որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ, ձեռք բերել իրավունակություն, բայց չեն

6. Կրոնական միավորումների ճանաչման, գրանցման և լուծարման մանրամասն վերլուծության համար տե՛ս *Guide on Article 9 of the Convention*:

պահանջում, որ դրանց տրվի հանրային իրավունքի կոնկրետ կարգավիճակ (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 91):

217. Տարիներ շարունակ գոյություն ունեցած կրոնական համայնքի վերագրանցումը մերժելու համար պահանջվում են առանձնակի ծանրակշիռ և համոզիչ պատճառներ (*Church of Scientology Moscow v. Russia*, 2007, § 96; *Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 96; *Jehovah's Witnesses of Moscow v. Russia*, 2010, § 180):

218. Երբ գրանցումը մերժելու պատճառները չեն ունեցել իրավական կամ փաստական հիմքեր, Դատարանը գտել է, որ իշխանությունները բարեխղճորեն չեն գործել և անտեսել են զանգատարերի կրոնական համայնքի նկատմամբ ունեցած չեզոքության և անկողմնակալության իրենց պարտականությունը (*Moscow Branch of the Salvation Army v. Russia*, 2006, § 97; *Jehovah's Witnesses of Moscow v. Russia*, 2010, § 181; *Church of Scientology Moscow v. Russia*, 2007, § 97):

219. Պետության իշխանությունները պարտավոր են ողջամտորեն կրճատել ժամանակը, որի ընթացքում կրոնական համայնքը սպասում է իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելուն (*Religionsgemeinschaft der Zeugen Jehovas and Others v. Austria*, 2008, § 79): Սակայն նոր ստեղծված և անհայտ կրոնական խմբերի դեպքում կարող է առաջանալ ողջամիտ նվազագույն ժամանակահատված սահմանելու անհրաժեշտություն (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 111):

220. Գրանցման մերժումն այն իրավական դրույթների հիմքով, որոնք արգելում են իրավաբանական անձի կարգավիճակ շնորհել տվյալ տարածքում առնվազն տասնհինգ տարուց քիչ գոյություն ունեցող կրոնական բոլոր խմբերին, հիմնավոր չէ (*Kimlya and Others v. Russia*, 2009, § 98-101):

221. Կրոնի հիմնարար սկզբունքների մասին տեղեկություններ չներկայացնելու հիմքով գրանցման մերժումը, գործի առանձնահատուկ հանգամանքներից ելնելով, կարող է հիմնավորված լինել ժողովրդավարական հասարակության համար գրանցման դիմած հարանվանության վտանգավորությունը պարզելու անհրաժեշտությամբ (*Cârnuirea Spirituală a Musulmanilor din Republica Moldova v. Moldova* (dec.), 2005):

222. Իրավաչափ է պահանջելը գրանցման դիմող կազմակերպությունից տարբերակել իրեն արդեն իսկ գոյություն ունեցող միավորումներից՝ հանրության աչքերում շփոթությունը կանխելու համար (*Metodiev and Others v. Bulgaria*, 2017, § 43; *“Orthodox Ohrid Archdiocese (Greek-Orthodox Ohrid Archdiocese of the Peć Patriarchy)” v. the former Yugoslav Republic of Macedonia*, 2017, § 111; *Bektashi Community and Others v. the former Yugoslav Republic of Macedonia*, 2018, § 71): Դատարանը, սակայն, գտել է, որ կրոնական միավորման կանոնադրության մեջ սեփական համոզմունքների և ծեսերի նկարագրության ենթադրյալ անորոշությունը չի կարող հիմնավորել միավորման գրանցման մերժումը (*Metodiev and Others v. Bulgaria*, 2017, §§ 44-46):

223. Բարձր պայմանավորվող կողմերն ունեն զանազան կրոնական համայնքների հետ համագործակցության ձևերն ընտրելու հայեցողության շրջանակ (*İzzettin Doğan and Others v. Turkey* [GC], 2016, § 112): Եկեղեցիների հետ հարաբերությունները կանոնակարգելու հարցում պետություններին տրված ազատությունը ներառում է նաև շնորհված արտոնություններն օրենսդրական միջոցներով փոփոխելու հնարավորությունը: Այս ազատությունը, սակայն, չի կարող հասնել այնպիսի աստիճանի, որ խախտի այս ոլորտում պետությունից պահանջվող չեզոքությունը և անկողմնակալությունը (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 111):

224. Բոլոր դեպքերում, երբ պետությունը, 9-րդ և 11-րդ հոդվածներին համապատասխան, որոշում է ունենալ համակարգ, որում սահմանադրորեն պարտավորված է դավանել որոշակի կրոն, ինչպես եվրոպական որոշ երկրներում, և այն պետական արտոնություններ է տալիս կրոնական որոշ կազմակերպությունների, բայց ոչ բոլորին, դա պետք է արվի հանրային շահեր հետապնդելու ողջամիտ չափորոշիչների հիման վրա (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary*, 2014, § 113):

2. Պոզիտիվ պարտավորություններ

225. Միավորման ազատության իրական և արդյունավետ ապահովումը չի կարող սահմանափակվել պետության՝ զուտ չմիջամտելու պարտավորությամբ (*Ouranio Toxo and Others v. Greece*, 2005, § 37): Որոշակի հանգամանքներում ազգային իշխանությունները կարող են ստիպված լինեն միջամտել մասնավոր անհատների միջև հարաբերություններին՝ ձեռնարկելով ողջամիտ և պատշաճ միջոցներ՝ միավորման ազատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու համար (*Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom*, 2002, § 41):

226. Անկախ նրանից՝ գործն ուսումնասիրվում է պետության պոզիտիվ պարտավորության կամ իշխանության՝ հիմնավորում պահանջող միջամտության տեսանկյունից՝ կիրառելի չափորոշիչների էությունը չի տարբերվում: Երկու համատեքստում էլ կարևորությունը տրվում է անհատի և ողջ համայնքի մրցակցող շահերի արդար հավասարակշռմանը (*Sørensen and Rasmussen v. Denmark* [GC], 2006, § 58):

227. Պետական իշխանությունների վրա է դրված միավորման կամ քաղաքական կուսակցության բնականոն գործունեությունը երաշխավորելու պարտավորությունը, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք զայրացնում կամ վիրավորում են անձանց, ովքեր հակադրվում են իրավաչափ գաղափարներին կամ պնդումներին, որոնք դրանք ցանկանում են առաջ մղել: Դրանց անդամները պետք է կարողանան կազմակերպել հավաքներ՝ չվախենալով, որ կենթարկվեն ֆիզիկական բռնության իրենց ընդդիմադիրների կողմից: Նման վախը կարող է հետ պահել այլ միավորումներին կամ քաղաքական կուսակցություններին համայնքի վրա ազդեցություն ունեցող խիստ հակասական խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքներն ազատ արտահայտելուց: Ժողովրդավարության պայմաններում հակընդդեմ ցույցի իրավունքը չի կարող խոչընդոտել միավորման իրավունքի իրացմանը (*Ouranio Toxo and Others v. Greece*, 2005, § 37; *Zhdanov and Others v. Russia*, 2019, § 162):

228. Միավորման ազատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու պոզիտիվ պարտավորությունն առանձնակի կարևորություն ունի ժողովրդականությունն չվայելող տեսակետներ ունեցող կամ փոքրամասնություններին պատկանող անձանց համար, քանի որ նրանք ավելի խոցելի են զոհականացման հարցում (*Bączkowski and Others v. Poland*, 2007, § 64):

229. *Ouranio Toxo and Others v. Greece*, 2005, գործով եղել է 11-րդ հոդվածի խախտում, ի թիվս այլ հանգամանքների, Հունաստանի իշխանությունների անգործության հիմքով: Մասնավորապես, պետությունը չէր ձեռնարկել համարժեք միջոցներ բռնությունը կանխելու կամ զսպելու ուղղությամբ, որը սկսվել էր այն բանից հետո, երբ մակեդոնական փոքրամասնության շահերը պաշտպանող կուսակցությունն իր գլխավոր գրասենյակից կախել էր կուսակցության անվանումով մակեդոներեն գրված նշան: Ոստիկանությունը կարող էր ողջամտորեն կանխատեսել կուսակցության անդամների նկատմամբ բռնության վտանգը և միավորման ազատության ակնհայտ խախտումները, սակայն չէր միջամտել: Ավելին, դատախազն անհրաժեշտ չէր համարել միջադեպերի փաստով սկսել քննություն՝ պատասխանատուներին պարզելու համար: Դատարանը շեշտեց, որ մասնավոր անձանց գործողությունների արդյունքում միավորման ազատությանը միջամտելու դեպքերում լիազոր մարմինները կրում են արդյունավետ քննություն իրականացնելու լրացուցիչ պարտավորություն (*§ 43*):

230. *Zhdanov and Others v. Russia*, 2019, գործով ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների իրավունքները պաշտպանելու նպատակով ստեղծված միավորումների գրանցումը մերժելը, մասնավորապես, այն հիմքով, որ միավորումները կարող են դառնալ նույնասեռականությունը դատապարտող անձի ագրեսիայի հնարավոր զոհ, համարվեց 11-րդ հոդվածի խախտում: Դատարանը գտավ, որ Ռուսաստանի իշխանությունների պարտականությունն էր ձեռնարկել ողջամիտ և պատշաճ միջոցներ, որոնք հնարավորություն կտային միավորումներին իրականացնել իրենց գործունեությունը զերծ լինելով ֆիզիկական բռնության վախից: Թեև իշխանություններն ունեին միավորումներին անխափան գործելու հնարավորություն ընձեռող միջոցների ընտրության լայն հայեցողություն, նրանք դրա փոխարեն որոշեցին վերացնել լարվածության պատճառը և կանխել անկարգությունների վտանգը միավորումների

ազատությունը սահմանափակելու միջոցով (§ 164): Միավորումների գրանցման մերժումը համարվեց նաև սեռական կողմնորոշման հիմքով խտրականություն, ինչը 14-րդ հոդվածի խախտում էր:

231. Իշխանություններն ունեն դատական վերահսկողություն և մասնավոր գործատուների կողմից աշխատանքից ազատելու դեմ երաշխիքներ ապահովելու պոզիտիվ պարտավորություն, եթե ազատումը պայմանավորված է բացառապես այն փաստով, որ աշխատողը պատկանում է որոշակի քաղաքական կուսակցության (*Redfearn v. the United Kingdom*, 2012, § 43, երբ աշխատողին արգելվեց դատական հայց ներկայացնել քաղաքական պատկանելության հիմքով մեկամյա փորձաշրջանի ընթացքում աշխատանքից անարդար ազատման դեմ):

232. Կոնվենցիայի 11-րդ և 14-րդ հոդվածները պահանջում են պետություններից ստեղծել դատական համակարգ, որը երաշխավորում է իրական և արդյունավետ պաշտպանություն միավորման անդամության հիմքով խտրականությունից (*Danilenkov and Others v. Russia*, 2009, § 124, որտեղ ներպետական դատարանները հրաժարվել էին քննել գանգատաբերների բողոքներն այն հիմքով, որ խտրականության փաստը հնարավոր է պարզել միայն քրեական վարույթով; *Zakharova and Others v. Russia*, 2022, § 36, որտեղ գանգատաբերների *umterleniye* (*prima facie*) խտրականության գործը կարճվել էր՝ իբրև չհիմնավորված):

233. Պետություններն ունեն ճանաչման այնպիսի համակարգ ստեղծելու պոզիտիվ պարտավորություն, որը դիտարկում է կրոնական համայնքների կողմից իրավաբանական անձի կարգավիճակ ստանալը: Կրոնի և կրոնական գործունեության սահմանումն ուղղակի ազդեցություն ունի անհատի՝ կրոնի ազատության իրավունքի իրացման վրա (*Magyar Keresztény Mennonita Egyház and Others*, 2014, § 90):

234. Պայմանավորվող կողմի պարտականությունն է՝ ստեղծել պետական գրանցման ներպետական համակարգ և ձեռնարկել իրավական պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, որոնք հնարավորություն կտան համապատասխան իշխանություններին պահպանել իր իսկ օրենքով սահմանված ժամկետները և այս հարցում խուսափել անհարկի ուշացումներից (*Ramazanova and Others v. Azerbaijan*, 2007, § 65, որտեղ Արդարադատության նախարարությունը խախտել էր միավորման գրանցման համար օրենքով սահմանված ժամկետները, իսկ ներպետական օրենսդրությունը չէն տրամադրել բավարար պաշտպանություն նման ուշացումներից):

III. Արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց միանալու ազատություն

Ա. Արհեստակցական միության իրավունքների շրջանակը

235. 11-րդ հոդվածը ներկայացնում է արհեստակցական միությունների ազատությունը՝ որպես միավորման ազատության ձևերից կամ հատուկ դրսևորումներից մեկը, այլ ոչ թե իբրև անկախ իրավունք (*National Union of Belgian Police v. Belgium*, 1975, § 38; *Manole and “Romanian Farmers Direct” v. Romania*, 2015, § 57): Հետևաբար, միավորման ազատության վերոնշյալ տարրերը, նաև 11-րդ հոդվածի 2-րդ մասով, այդ ազատությանը միջամտելու պայմանները հավասարապես կիրառելի են արհեստակցական միություններ նկատմամբ՝ տվյալ հարցին վերաբերելի մասով:

236. Արհեստակցական միությունների ազատությունն աշխատողների և գործատուների միջև սոցիալական երկխոսության կենսական տարր է, հետևաբար, կարևոր գործիք է սոցիալական արդարության և համերաշխության հասնելու գործում (*Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, § 130):

237. 11-րդ հոդվածը երաշխավորում է արհեստակցական միության անդամների մասնագիտական շահերի պաշտպանությունը արհեստակցական միության գործողությունների միջոցով, որի գործունեությունը և զարգացումը պարտավոր են թույլատրել և հնարավոր դարձնել Պայմանավորվող կողմերը (*Swedish Engine Drivers’ Union v. Sweden*, 1976, § 40; *Tüm*

Haber Sen and Çınar v. Turkey, 2006, § 28): Սակայն, դա չի երաշխավորում պետության որևէ հատուկ վերաբերմունք արհեստակցական միությունների կամ դրանց անդամների համար: Ներպետական օրենսդրությամբ արհեստակցական միություններին պետք է տրվի իրենց անդամների շահերը պաշտպանելու իրավասություն՝ 11-րդ հոդվածին չհակասող պայմաններով (*Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, § 134): «Իր շահերի պաշտպանության համար» բառերը չեն կարող մեկնաբանվել այն իմաստով, որ այս դրույթի համաձայն՝ միայն անհատները, այլ ոչ թե արհեստակցական միություններն ունեն բողոք ներկայացնելու իրավունք (*Federation of Offshore Workers’ Trade Unions and Others v. Norway* (dec.), 2002): 11-րդ հոդվածը պաշտպանում է թե՛ աշխատողներին, թե՛ միությունները (*Yakut Republican Trade-Union Federation v. Russia*, 2021, § 30): Արհեստակցական միությունը կարող է պնդել, որ տուժել է գործատուի կողմից իր անդամներից մեկին աշխատանքից ազատելու հետևանքով, եթե ազատումն ակնհայտորեն պայմանավորված է եղել անհատի՝ միությանն անդամակցությամբ կամ միության ներսում նրա գործունեությամբ (*Hoppen and trade union of AB Amber Grid employees v. Lithuania*, 2023, § 153):

238. Սեփական շահերը պաշտպանելու նպատակով արհեստակցական միության անդամներն իրավունք ունեն, որ իրենց արհեստակցական միությունը լավամիտ լինի: Նրանք պետք է կարողանան ներկայացնել իրենց գործատուին պահանջներ, որոնց միջոցով ձգտում են բարելավել իրենց ընկերության աշխատողների վիճակը: Արհեստակցական միությունը, որը չունի սեփական գաղափարներն ազատ արտահայտելու հնարավորություն, այս իմաստով զրկված է գործողության կենսական միջոցներից (*Straume v. Latvia*, 2022, §§ 91-92): Արհեստակցական միության ներկայացուցչի արտահայտման ազատության համատեքստում Դատարանը վերաբերելի է համարում հետևյալ տարրերը. արված հայտարարությունների համատեքստը (այդ թվում՝ արդյո՞ք դրանք արհեստակցական միության օրինական գործունեության մաս են եղել), հայտարարությունների բնույթը (այդ թվում՝ արդյո՞ք հասել են ընդունելի քննադատության սահմանները), գործատուի կամ այլ անձանց կրած վնասը, պատժամիջոցների և այլ հետևանքների բնույթն ու խստությունը (§ 103):

239. Աշխատողների ներկայացուցիչները պետք է, որպես կանոն և որոշակի սահմաններում, օգտվեն արհեստակցական միության գործառույթներն արագ ու արդյունավետ կատարելու պատշաճ հնարավորություններից (*Sanchez Navajas v. Spain* (dec.), 2001):

240. Քաղաքականությունը, որը սահմանափակում է կազմակերպությունների թիվը, որոնց հետ պետք է խորհրդակցի կառավարությունը, չի հակասում արհեստակցական միությունների ազատությանը (*National Union of Belgian Police v. Belgium*, 1975, §§ 40-41, երբ իր անդամների շահերի պաշտպանության համար գանգատաբեր միությունը կարողացել է այլ ձևաչափի հարաբերություններ հաստատել կառավարության հետ):

241. 11-րդ հոդվածի 2-րդ մասը չի զրկում մասնագիտական որևէ խմբի տվյալ հոդվածի կարգավորումից: Ազգային իշխանություններն առավելագույնս իրավասու են, 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «օրինական սահմանափակումներ» կիրառել իրենց որոշ աշխատողների նկատմամբ (*Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, § 145). Հետևաբար, 11-րդ հոդվածը կիրառելի է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ ներգրավված բոլոր անձանց նկատմամբ (տե՛ս *Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, §§ 141 և 148, առնչվում է հոգևոր դասի անդամներին; *Manole and “Romanian Farmers Direct” v. Romania*, 2015, § 62, առնչվում է ինքնազբաղված ֆերմերներին): Աշխատանքը բանտում չի կարող հավասարեցվել սովորական զբաղվածության: Հետևաբար, արհեստակցական միություններին աշխատող դատապարտյալների անդամակցելու՝ օրենքով սահմանված արգելքը կարող է լինել հիմնավորված՝ նկատի առնելով, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց միանալու՝ ազատագրված անձանց իրավունքի հարցում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև չկա բավարար փոխհամաձայնություն (*Yakut Republican Trade-Union Federation v. Russia*, 2021, §§ 44-47):

242. Կոնվենցիան տարբերություն չի դնում Պայմանավորվող կողմի՝ որպես պետական իշխանության կրողի գործառույթների և դրա պարտականությունների միջև՝ որպես գործատու: Համապատասխանաբար, 11-րդ հոդվածն պարտադիր է «պետության՝ որպես գործատուի» համար՝ անկախ այն հանգամանքից՝ վերջինիս իրավահարաբերություններն իր աշխատողների

հետ կարգավորվում են հանրային, թե մասնավոր իրավունքով (*Schmidt and Dahlström v. Sweden*, 1976, § 33; *Tüm Haber Sen and Çinar v. Turkey*, 2006, § 29):

Բ. Էական տարրերը և Դատարանի մոտեցումը

243. Միավորման իրավունքը ներառում է հետևյալ էական տարրերը՝ արհեստակցական միություն ստեղծելու կամ դրան միանալու իրավունքը, «փակ ձեռնարկության» համաձայնությունների արգելքը, արհեստակցական միության իրավունքը՝ համոզելու գործատուին լսել իր անդամների անունից ասվածը և, սկզբունքորեն, գործատուի հետ կոլեկտիվ բանակցելու իրավունքը (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, §§ 145 and 154; *Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, § 135):

244. Այս ցանկը սպառնիչ չէ և կարող է փոփոխվել՝ աշխատանքային իրավահարաբերությունների կոնկրետ զարգացումներից ելնելով: Դատարանը, բացի Կոնվենցիայից, հաշվի կառնի միջազգային իրավունքի տարրերը, նման տարրերի մեկնաբանությունը իրավասու մարմինների կողմից, եվրոպական պետությունների պրակտիկան, որն արտացոլում է նրանց ընդհանուր արժեքները (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, §§ 85 և 146; *Manole and “Romanian Farmers Direct” v. Romania*, 2015, § 67): Դատարանի կողմից արհեստակցական միությունների միավորման ազատության 11-րդ հոդվածով սահմանված շրջանակի էապես ավելի նեղ մեկնաբանությունը, քան այն, որը գերակայում է միջազգային իրավունքում, կհակասի այս մեթոդին (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 76):

245. Դատարանի մոտեցումը միավորման իրավունքի բովանդակության առումով առաջնորդվում է երկու սկզբունքով: Նախ, Դատարանը հաշվի է առնում արհեստակցական միությունների ազատությունն ապահովելու նպատակով իր հայեցողության սահմաններում պետության ձեռնարկած միջոցների ամբողջությունը, երկրորդ՝ Դատարանը չի ընդունում սահմանափակումները, որոնք ազդում են արհեստակցական միությունների ազատության էական տարրերի վրա, որոնց բացակայությամբ այդ ազատությունը զրկվում է բովանդակությունից: Թեև պետությունները սկզբունքորեն ազատ են որոշելու, թե ինչ միջոցներ են ցանկանում ձեռնարկել, որ ապահովեն համապատասխանությունը 11-րդ հոդվածին, դրանք նաև պարտավոր են հաշվի առնել այն տարրերը, որոնք Դատարանի նախադեպային իրավունքում համարվել են էական (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 144):

246. ԵՄ և ԵՏԳ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունները կատարելու ընթացքում Պայմանավորվող կողմերը պետք է երաշխավորեն, որ 11-րդ հոդվածում ամրագրված իրավունքների նկատմամբ կիրառվող սահմանափակումները չազդեն արհեստակցական միությունների ազատության էական տարրերի վրա, որոնց բացակայությամբ այդ ազատությունը կզրկվի բովանդակությունից (*Norwegian Confederation of Trade Unions (LO) and Norwegian Transport Workers’ Union (NTF) v. Norway*, 2021, § 117): ԵՏԳ հաստատման ազատությունը միավորման ազատությանը հակակշռող հիմնարար իրավունք չէ, այլ, թեև շատ կարևոր, մի տարր է, որը հարկ է հաշվի առնել, երբ 11-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակում գնահատվում է համաչափությունը (*ibid.*, § 118):

Գ. Գրանցման մերժումը

247. Թեև յուրաքանչյուր աշխատող անձ իրավունք ունի հիմնել արհեստակցական միություն, որոշ իրավիճակներում Դատարանը հիմնավոր է համարել արհեստակցական միություն գրանցելու պետության մերժումը:

248. *Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania* [GC], 2013, գործում ազգային իշխանությունները մերժել էին Ռումինական ուղղափառ եկեղեցու քահանաների ստեղծած արհեստակցական միության գրանցման դիմումն արքեպիսկոպոսի թույլտվությունը ստանալու պահանջը չբավարարելու հիմքով: Չգտնելով 11-րդ հոդվածի խախտում՝ Դատարանը նկատի էր առել, որ իշխանությունները պարզապես կիրառել էին կրոնական համայնքների ինքնավարության սկզբունքը և հրաժարվել էին միջամտել Ռումինական ուղղափառ եկեղեցու կազմակերպմանը և

գործունեությանը՝ դրանով իսկ կատարելով հարանվանական չեզոքության իրենց պարտականությունը, որը սահմանված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով: Ազգային իշխանությունները պարտավոր էին հարգել կրոնական համայնքների կարծիքը դրանց անդամների այն կոլեկտիվ գործողությունների վերաբերյալ, որոնք կարող էին խարխլել համայնքների ինքնավարությունը (§§ 159, 164-166):

249. *Manole and “Romanian Farmers Direct” v. Romania*, 2015, գործով մերժվել էր մի խումբ ինքնազբաղված ֆերմերների՝ որպես արհեստակցական միություն գրանցվելու դիմումը, քանի որ գյուղատնտեսության ոլորտում իրավակազմակերպչական այդ ձևը վերապահված էր բացառապես կոոպերատիվների աշխատողներին և անդամներին: Դատարանը, հաշվի առնելով վերաբերելի միջազգային գործիքները, գտավ, որ ինքնազբաղ ֆերմերներին արհեստակցական միություն ստեղծելու իրավունքից զրկելը չի խախտել Կոնվենցիայի 11-րդ հոդվածը: Ներպետական օրենսդրությամբ գանգատարներն իրավունք ունեին ստեղծել կենսական այնպիսի իրավունքներով օժտված մասնագիտական միավորումներ, որոնք հնարավորություն էին տալիս պաշտպանել իրենց անդամների շահերն իշխանությունների հետ հարաբերություններում առանց արհեստակցական միություն ստեղծելու անհրաժեշտության:

Գ. Պատժամիջոցներ և զսպող միջոցներ

250. Յուրաքանչյուր աշխատող կամ ծառայող պետք է ունենա արհեստակցական միությանը միանալու կամ չմիանալու ազատություն՝ չենթարկվելով պատժի կամ զսպող միջոցների (*Associated Society of Locomotive Engineers and Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 39):

251. Արհեստակցական միության միանալու իրավունքի էությունն այն է, որ աշխատողները պետք է ազատորեն հանձնարարեն միությանը հանդես գալ իրենց գործատուին ուղղված հայտարարություններով կամ ձեռնարկել իրենց շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ: Պետության դերն է երաշխավորել, որ արհեստակցական միության անդամներին չխոչընդոտեն կամ չարգելեն օգտվել միությունից որպես իրենց ներկայացուցիչ (*Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom*, 2002, § 46, որտեղ գործատուներն օգտագործել են ֆինանսական խթաններ, որ համոզեն աշխատողներին հրաժարվել արհմիութենական կարևոր իրավունքներից՝ այդպիսով խարխլելով իր անդամների շահերի պաշտպանության համար արհեստակցական միության պայքարելու կարողությունը):

252. Արդյունավետ և իմաստալից արհմիութենական իրավունքներ ապահովելու նպատակով ազգային իշխանությունները պետք է երաշխավորեն, որ ոչ համաչափ պատիժները հետ չպահեն արհեստակցական միության ներկայացուցիչներին իրենց անդամների շահերը բարձրաձայնելուց և պաշտպանելուց (*Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia*, 2012, § 55): Երբ հայտարարություններն ակնհայտորեն կապված են արհեստակցական միության գործունեության հետ, դրանց համար պատժի կիրառումը դժվար է համադրել արհեստակցական միության ղեկավարի իրավունքների հետ:

253. Իրենց գործունեության համար արհեստակցական միության անդամների նկատմամբ կիրառված քրեական կամ կարգապահական պատիժները կարող են խոչընդոտել նրանց իրավաչափ մասնակցությունը գործադուլներին կամ այլ գործողություններին, որոնք ուղղված են մասնագիտական շահերի պաշտպանությանը, և դրանք համարվել են չիմնավորված (*Ognevenko v. Russia*, 2018, § 84; *Karaçay v. Turkey*, 2007, § 37; *Urcan and Others v. Turkey*, 2008, § 34; *Doğan Altun v. Turkey*, 2015, § 50; *Straume v. Latvia*, 2022, § 112): Նույնիսկ նվազագույն պատժամիջոցները խոչընդոտում են արհեստակցական միության անդամներին ազատորեն զբաղվել իրենց գործունեությամբ (*Kaymak and Others v. Türkiye*, 2023, § 56 «ոչ պատժիչ նախազգուշացման» վերաբերյալ):

254. Կոնվենցիայի 11-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետություններին ներկայացված պահանջ, որի համաձայն վերջիններս պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ երաշխավորել, որ արհեստակցական միության որևէ անդամի կամ ղեկավարի հնարավոր չէ ազատել աշխատանքից, եթե չկա արհեստակցական միության համաձայնությունը (*Hoppen and trade union of AB Amber Grid employees v. Lithuania*, 2023, § 215):

Ե. Արհեստակցական միությանը չմիանալու իրավունքը

255. Թեև որոշակի արհեստակցական միության միանալու՝ օրենքով կամ համաձայնագրով հարկադրված պարտավորությունը միշտ չէ, որ հակասում է Կոնվենցիային, նման պարտավորության ձևը, որը գործի հանգամանքներից ելնելով, հարվածում է 11-րդ հոդվածով երաշխավորված միավորման ազատության բուն էությունը, հանդիսանում է միջամտություն այդ ազատությանը (տե՛ս *Young, James and Webster v. the United Kingdom*, 1981, § 55, հարկադրանք աշխատանքից ազատելու սպառնալիքի ձևով, որի հետևանքով կզրկվեին ապրուստի միջոցներից; *Sigurður A. Sigurjónsson v. Iceland*, 1993, § 36, ներառում էր մասնագիտական լիցենզիան կորցնելու վտանգը):

256. 11-րդ հոդվածով տրված պաշտպանությունը տարածվում է ոչ միայն այն իրավիճակների նկատմամբ, երբ արհեստակցական միությանը միանալու պահանջը ներկայացվում է անհատին աշխատանքի ընդունելուց կամ մասնագիտական լիցենզիա տրամադրելուց հետո: Չի կարելի համարել, որ անհատը հրաժարվել է միավորման ազատության նեգատիվ իրավունքից այն դեպքերում, երբ իմանալով, որ արհեստակցական միության անդամությունն աշխատատեղն ապահովելու նախապայման է, նա ընդունում է աշխատանքի առաջարկը՝ չնայած առաջադրված պայմանի հետ իր անհամաձայնությանը (*Sørensen and Rasmussen v. Denmark*, 2006, § 56): Որպես աշխատանքային պայմանագրի պայման՝ արհեստակցական միության անդամությունն ընդունելն էսպես չի փոխում հարկադրանքի տարրը, որը ներհատուկ է սեփական կամքին հակառակ արհեստակցական միությանը միանալուն (*ibid.*, § 59):

257. Որոշակի արհեստակցական միության անդամ դառնալու պահանջը մերժելու արդյունքում անձին աշխատանքից ազատելը հարկադրանքի խիստ ձև է, որը խարխալում է ընտրության ազատության բուն էությունը, ինչը ներհատուկ է Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանված միավորման ազատության նեգատիվ իրավունքին (*Sørensen and Rasmussen v. Denmark*, 2006, § 61):

258. Աշխատաշուկայում «փակ ձեռնարկության» համաձայնությունների կիրառումը արհմիութենական ազատություններից արդյունավետ օգտվելու անբաժանելի գործիք չէ (*Sørensen and Rasmussen v. Denmark*, 2006, § 75):

Զ. Ներքին հարաբերությունները կարգավորելու և անդամներին ընտրելու արհեստակցական միությունների իրավունքը

259. Արհեստակցական միություն ստեղծելու իրավունքն ընդգրկում է սեփական կանոններ սահմանելու, գործերը վարելու և արհեստակցական միությունների դաշինքներ ստեղծելու և դրանց միանալու արհեստակցական միությունների իրավունքը (*Cheall v. the United Kingdom* (Հանձնաժողովի որոշում), 1985): Ինչպես ցանկացած միություն կարող է ազատորեն միանալ դաշինքի, այնպես էլ դաշինքն ազատ է իր կազմում ընդունելու միությանը (*Yakut Republican Trade-Union Federation v. Russia*, 2021, § 30): Արհեստակցական միություններն ազատ են սահմանել անդամության պայմանների սեփական կանոններ, այդ թվում՝ վարչարարական պահանջներ և վճարներ, ինչպես նաև ավելի բովանդակային չափորոշիչներ, օրինակ՝ հնարավոր անդամի մասնագիտական կամ արհեստակցական զբաղմունքը (*Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 38):

260. Արհեստակցական միությունը պետք է ազատ ընտրի իր անդամներին, քանի որ 11-րդ հոդվածը չի պահանջում միավորումներից կամ կազմակերպություններից ընդունել բոլոր ցանկացողներին: Երբ միավորումները ստեղծում են մարդիկ, ովքեր կրում են որոշակի արժեքներ կամ իդեալներ, մտադրված են հետապնդել ընդհանուր նպատակներ, ապա սեփական անդամության նկատմամբ հսկողություն չունենալը կհակասի տվյալ ազատության բուն արդյունավետությանը (*Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 39): Արհեստակցական միությունները հանձնառու են ոչ միայն իրենց անդամների բարեկեցության քաղաքականապես չեզոք, այլև հաճախ գաղափարական հարցերի

համար և ունեն սոցիալական ու քաղաքական խնդիրների վերաբերյալ հստակ տեսակետներ (*ibid.*, § 50):

261. «Իր շահերի պաշտպանության համար» միությանը միանալու իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես սեփական ընտրությամբ միությանը միանալու ընդհանուր իրավունք, որն անտեսում է միության կանոնները, քանի որ 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրենց իրավունքներն իրացնելիս միությունները պետք է ազատ լինեն որոշելու միություն ընդունելու և միությունից հեռացնելու հարցերը՝ միության կանոններին համապատասխան (*Cheall v. the United Kingdom*, Հանձնաժողովի որոշում, 1985; *Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 39, որտեղ արհեստակցական միությանն արգելվել էր հեռացնել անդամի, քանի որ վերջինս քաղաքական կուսակցության անդամ էր, որը քարոզում էր միության տեսակետներին հակառակ գաղափարներ, ինչը 11-րդ հոդվածի խախտում էր; *Vlahov v. Croatia*, 2022, § 60, վերաբերում է անդամության հարցերը վերահսկելու արհեստակցական միությունների իրավունքին՝ ընդդեմ անդամության թեկնածուների միավորման ազատության իրավունքի):

262. Այդուհանդերձ, նկատառումները կարող են տարբերվել, երբ միավորումը կամ արհեստակցական միությունն ունի իր վրա դրված հանրային պարտականություններ կամ ստանում է պետական ֆինանսավորում, որի հետևանքով այն կարող է ողջամտորեն պարտադրվել ընդունելու անդամներ՝ սեփական խնդիրների իրականացումից բացի ավելի լայն նպատակների հասնելու համար (*Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 40):

263. Այնուամենայնիվ, որպեսզի միությանը միանալու իրավունքը լինի արդյունավետ, պետությունը պետք է պաշտպանի անհատին արհեստակցական միությունների կողմից գերիշխող դիրքի ցանկացած չարաշահումից: Նման չարաշահում կարող է ի հայտ գալ, օրինակ, երբ բացառումը կամ հեռացումը չի համապատասխանել միության կանոններին, կամ կանոնները եղել են ամբողջությամբ անհիմն կամ կամայական, կամ բացառումը կամ հեռացումն առաջացրել են բացառիկ դժվարություններ (*Cheall v. the United Kingdom* (Commission decision), 1985; *Johansson v. Sweden*, Հանձնաժողովի որոշում, 1990; *Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 43): Չարաշահման ձև կարող է լինել նաև խտրական վերաբերմունքը, որի դեմ պետությունը պարտավոր է ձեռնարկել պաշտպանության իրական և արդյունավետ միջոցներ (*Vlahov v. Croatia*, 2022, § 61):

Է. Կոլեկտիվ բանակցության իրավունքը

264. *Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, գործով Դատարանը վերանայեց իր նախադեպային իրավունքն այն իմաստով, որ կոլեկտիվ բանակցությունների վարումը և կոլեկտիվ համաձայնագրերի կնքումը 11-րդ հոդվածի անբաժանելի մաս չէ և պարտադիր չէ արհեստակցական միությունների ազատության արդյունավետ իրացման համար: Հաշվի առնելով նման հարցերում Պայմանավորվող կողմերի աշխատանքային իրավունքի և պրակտիկայի զարգացումները՝ Դատարանը գտավ, որ գործատուի հետ կոլեկտիվ բանակցություններ վարելը սկզբունքորեն դարձել էր Կոնվենցիայի 11-րդ հոդվածում սահմանված «իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի» էական տարրերից մեկը, դրա հետ մեկտեղ պետությունները ազատ էին կազմակերպել իրենց համակարգերն այնպես, որ ըստ անհրաժեշտության, հատուկ կարգավիճակ շնորհեին ներկայացուցչական արհեստակցական միություններին (§§ 153-154):

265. Կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը չէր մեկնաբանվում որպես կոլեկտիվ համաձայնության «իրավունք» ընդգրկող (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 85) կամ անորոշ ժամկետով որոշակի հարցի վերաբերյալ կոլեկտիվ համաձայնագիր պահպանելու արհեստակցական միության իրավունք (*Swedish Transport Workers Union v. Sweden* (dec.), 2004):

266. Կոնվենցիան չի պահանջում, որ գործատուն կնքի կոլեկտիվ համաձայնագիր կամ մնա այդ համաձայնագրում կամ բավարարի արհեստակցական միության՝ իր անդամների անունից ներկայացված խնդրանքները (*UNISON v. the United Kingdom* (dec.), 2002):

267. 11-րդ հոդվածով սահմանված պետության պոզիտիվ պարտավորությունները չեն ենթադրում կոլեկտիվ բանակցությունների պարտադիր օրենսդրական կառուցակարգի նախատեսում (*Unite the Union v. the United Kingdom* (dec.), 2016, § 65 *in fine*; *Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom*, 2002, § 44):

268. Կոլեկտիվ բանակցությունների կամավոր համակարգի էությունն այն է, որ գործատուի կողմից չճանաչված արհեստակցական միությունը պետք է հնարավորություն ունենա ձեռնարկել քայլեր, այդ թվում, եթե անհրաժեշտ է, կազմակերպել գործադուլ՝ նպատակ ունենալով համոզել գործատուին կնքել իր հետ կոլեկտիվ համաձայնագիր այն հարցերի շուրջ, որոնք, միության կարծիքով, կարևոր են իր անդամների շահերի համար (*Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom*, 2002, § 46):

269. *Association of Civil Servants and Union for Collective Bargaining and Others v. Germany*, 2022, գործով Դատարանը գտավ, որ ազգային օրենսդրությունը, որն ոչ կիրառելի էր համարում փոքրամասնական արհեստակցական միությունների կնքած իրար հակասող կոլեկտիվ համաձայնագրերը, չէր խախտել 11-րդ հոդվածը՝ հաշվի առնելով այս ոլորտում պատասխանող պետության հայեցողության շրջանակը, սահմանափակման նեղ շրջանակը և, աշխատողների և գործատուների շահերից ելնելով, կոլեկտիվ բանակցությունների համակարգի պատշաճ գործառնությունն ապահովելու ծանրակշիռ նպատակը:

Ը. Գործադուլի իրավունքը

270. Գործադուլի իրավունք շնորհելն ամենակարևոր միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը կարող է երաշխավորել արհեստակցական միության՝ իր անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու ազատությունը (*Schmidt and Dahlström v. Sweden*, 1976, § 36; *Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom*, 2002, § 45): Իրավունքը բացարձակ չէ և կարող է կարգավորվել ներպետական օրենսդրությամբ (*ibid.*; *Enerji Yayı-Yol Sen v. Turkey*, 2009, § 32): Գործադուլի իրավունքի նկատմամբ Պայմանավորվող պետության կիրառած սահմանափակումներն ինքնին չեն առաջացնում Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հետ կապված խնդիր (*Federation of Offshore Workers' Trade Unions and Others v. Norway* (dec.), 2002):

271. Թեև գործադուլ իրականացնելու իրավունքը դեռևս չի համարվել արհեստակցական միության ազատության էական տարր, սակայն գործադուլն ակնհայտորեն պաշտպանված է 11-րդ հոդվածով (*Association of Academics v. Iceland* (dec), 2018, §§ 24-27, ներկայացվում է Դատարանի նախադեպային իրավունքի ընդհանուր ակնարկը; *National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 84): Դատարանը նշել է, որ իր անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու համար գործադուլն արհեստակցական միությանը հասանելի ամենահզոր գործիքն է (*Hrvatski liječnički sindikat v. Croatia*, 2014, § 59):

Գործադուլը, սկզբունքորեն, պաշտպանված է 11-րդ հոդվածով միայն այն չափով, որ կազմակերպվում է արհեստակցական միությունների կողմից և համարվում է արհեստակցական միության գործունեության ոչ թե ենթադրյալ, այլ արդյունավետ մաս (*Bariş and Others v. Turkey* (dec.), 2021, § 45):

272. Գործադուլի արգելքը պետք է համարվի արհեստակցական միության՝ իր անդամների շահերը պաշտպանելու լիազորության սահմանափակում և, հետևաբար, միավորման ազատության սահմանափակում (*UNISON v. the United Kingdom* (dec.), 2002; *Hrvatski liječnički sindikat v. Croatia*, 2014, § 49; *Veniamin Tymoshenko and Others v. Ukraine*, 2014, § 77):

273. Համերաշխության գործադուլը (այլ գործատուի դեմ ուղղված գործադուլ, որի նպատակն է՝ անուղղակի ճնշում գործադրել աշխատանքային վեճի մեջ ներգրավված գործատուի վրա) նույնպես արհեստակցական միության գործունեության մաս է, և նման գործողության օրենսդրական արգելքը միջամտում է 11-րդ հոդվածով նախատեսված արհեստակցական միության իրավունքին (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, §§ 77-78):

274. Թեև սահմանափակումներ կարող են կիրառվել բնակչությանը կենսական ծառայություններ մատուցող աշխատողների գործադուլի իրավունքի նկատմամբ, ամբողջական արգելքը պահանջում է պետությունից դրա անհրաժեշտությունը հիմնավորող լուրջ պատճառներ (*Ognevenko v. Russia*, 2018, §§ 72-73, առնչվում է երկաթուղու աշխատողների որոշ խմբերի համար օրենքով սահմանված գործադուլի արգելքին; *Federation of Offshore Workers' Trade Unions and Others v. Norway* (dec.), 2002, որտեղ Դատարանն ընդունեց նավթի հորատման հենահարթակների աշխատողների գործադուլը դադարեցնելու կառավարության պատճառաբանությունները):

275. Գործադուլի իրավունքը չի ենթադրում գերիշխելու իրավունքը (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 85):

276. Գործադուլ իրականացնելու միությունների իրավասության որևէ սահմանափակման ազդեցությունը չպետք է ենթարկի դրանց անդամներին վնասներ կրելու կամ աշխատավարձի իջեցման կամ աշխատանքային այլ պայմանների վատթարացման ապագա փորձերի դեպքում անպաշտպան մնալու իրական կամ անմիջական վտանգի (*UNISON v. the United Kingdom* (dec.), 2002):

Թ. Պոզիտիվ պարտավորություններ և հայեցողության շրջանակ

277. Արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը նախևառաջ պաշտպանում է պետության գործողություններից (*Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, § 37): Թեև 11-րդ հոդվածի կարևորագույն նպատակն է՝ պաշտպանել անհատի՝ տվյալ հոդվածով պաշտպանված իրավունքներն իշխանությունների կամայական միջամտությունից, պետությունը կարող է ունենալ նաև այդ իրավունքների արդյունավետ իրականացումը երաշխավորելու այլ պոզիտիվ պարտավորություններ (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 110):

278. Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված՝ պետության պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների միջև սահմանները չեն ենթարկվում հստակ սահմանման, բայց կիրառելի սկզբունքները նույնն են: Երկու համատեքստում էլ կարևորություն պետք է տրվի անհատի և ընդհանուր համայնքի մրցակցող շահերի արդարացի հավասարակշռմանը (*Sindicatul "Păstorul cel Bun" v. Romania* [GC], 2013, § 132; *Tek Gıda İş Sendikası v. Turkey*, 2017, § 50):

279. Արհեստակցական միության ազատության ոլորտում, հաշվի առնելով աշխատավորների և ղեկավարության համապատասխան շահերի միջև պատշաճ հավասարակշռության հասնելու հարցում առկա սոցիալական և քաղաքական խնդիրների զգայուն բնույթը, ինչպես նաև այս բնագավառում ներպետական համակարգերի միջև մեծ տարբերությունները, Պայմանավորվող կողմերն ունեն լայն հայեցողություն առ այն, թե ինչպես կարող է երաշխավորվել արհեստակցական միության ազատությունը և միության անդամների մասնագիտական շահերի պաշտպանությունը (*Norwegian Confederation of Trade Unions (LO) and Norwegian Transport Workers' Union (NTF) v. Norway*, 2021, §§ 97 և 114; *Vörður Ólafsson v. Iceland*, 2010, § 75; *Sindicatul "Păstorul cel Bun" v. Romania* [GC], 2013, § 133):

280. Հայեցողության շրջանակը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է արհեստակցական միության խնդրո առարկա իրավունքի սահմանափակման բնույթով և ծավալով, վիճարկվող սահմանափակման հետապնդած նպատակով, հասարակության այլ ներկայացուցիչների մրցակցող իրավունքներով և շահերով, ովքեր կարող են տուժել այդ իրավունքի անսահմանափակ իրականացման արդյունքում, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև համաձայնության աստիճանով և միջազգային կոնսենսուսով, որն արտացոլված է վերաբերելի միջազգային գործիքներում (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 86):

281. Եթե օրենսդրական սահմանափակումը խաթարում է արհեստակցական միության գործունեության հիմքերը, ազգային օրենսդրին պետք է տրվի հայեցողության ավելի նեղ

շրջանակ և, ընդհանուր շահերից ելնելով, պետք է դրվի արհեստակցական միության ազատության իրացմանն այդ միջամտության համաչափությունը հիմնավորելու ավելի բարձր պահանջ: Մյուս կողմից, եթե ազդակիր է արհեստակցական միության գործունեության երկրորդային կամ օժանդակ բաղկացուցիչը, հայեցողությունն ավելի լայն է, և առավել հավանական է, որ միջամտությունն իր բնույթով կլինի համաչափ, երբ խնդրո առարկան արհեստակցական միության ազատության իրացման վրա ունեցած հետևանքներն են (*National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 87; որտեղ համերաշխության գործադուլի օրենսդրական արգելքը խարխուլում էր արհեստակցական միության ազատության բուն էությունը; տե՛ս նաև *Tek Gıda İş Sendikası v. Turkey*, 2017, §§ 54-55, որտեղ արհեստակցական միության անդամների՝ աշխատանքից զանգվածային ազատումները հարվածում էին միության գործունեության բուն հիմքերին):

282. Նկատի առնելով Եվրոպայում պետությունների և կրոնական հարանվանությունների միջև հարաբերությունները կարգավորող սահմանադրական մոդելների մեծ զանազանությունը՝ այս ոլորտում պետությունն օգտվում է լայն հայեցողությունից, որն ընդգրկում է կրոնական համայնքներում գործող և այդ համայնքների ինքնավարությանը հնարավոր խոչընդոտող նպատակներ հետապնդող արհեստակցական միությունները ճանաչելու կամ չճանաչելու մասին որոշում ընդունելու իրավունքը (*Sindicatul "Păstorul cel Bun" v. Romania* [GC], 2013, § 171):

283. Հայեցողության շրջանակը համարվել է նեղացված, երբ Պայմանավորվող կողմի ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս 11-րդ հոդվածով սահմանված՝ անհատի ընտրության ազատությանը հակասող «փակ ձեռնարկության» համաձայնագրերի կնքումը միությունների և գործատուների միջև (*Sørensen and Rasmussen v. Denmark*, 2006, § 58) կամ երբ միջամտությունը միավորման ազատությանն առաջացնում է լուրջ հետևանքներ, օրինակ՝ արհեստակցական միության լուծարումը (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 119; see also *National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom*, 2014, § 86):

284. Պետությունն ունի արհեստակցական միության կողմից լիազորությունների չարաշահումից անհատին պաշտպանելու պոզիտիվ պարտավորություն (*Cheall v. the United Kingdom*, 1985; *Johansson v. Sweden*, 1990 (երկուսն էլ Հանձնաժողովի որոշումներ)): Թեև պետությունը կարող է միջամտել և պաշտպանել արհեստակցական միության անդամին իր դեմ միության կողմից ձեռնարկած միջոցներից, այն պետք է պահպանի արդարացի հավասարակշռություն մրցակցող շահերի միջև, և պետության հայեցողությունն ունի սահմանափակ դեր (*Associated Society of Locomotive Engineers & Firemen (ASLEF) v. the United Kingdom*, 2007, §§ 45-49):

285. Պետություններն ունեն նաև արհեստակցական միության անդամության հիմքով խտրականությունից արդյունավետ դատական պաշտպանություն ապահովելու պոզիտիվ պարտավորություն (*Danilenkov and Others v. Russia*, 2009, §§ 124 և 136; *Hoppen and trade union of AB Amber Grid employees v. Lithuania*, 2023, §§ 202-203):

IV. Զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի անդամների նկատմամբ կիրառվող սահմանափակումներ

286. Թեև պետությունը պարտավոր է հարգել իր ծառայողների հավաքների և միավորման ազատությունը, 11-րդ հոդվածի 2-րդ մասն ի վերջո (*in fine*) թույլատրում է օրինական սահմանափակումներ կիրառել զինված ուժերի, ոստիկանության կամ պետական վարչակազմի անդամների կողմից այս իրավունքների իրականացման մասով (տե՛ս *Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 96; *Tim Haber Sen and Çınar v. Turkey*, 2006, § 29): Մինչ այժմ Դատարանի նախադեպային իրավունքն ըստ էության անդրադարձել է ավելի շատ պետական ծառայողների միավորման ազատության, քան հավաքների ազատության սահմանափակումներին:

287. 11-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական» եզրույթն ակնարկում է օրինականության նույն հասկացությանը, որին, օգտագործելով նույն կամ նման արտահայտություններ, այլ մասերում

հղում է կատարում Կոնվենցիան, մասնավորապես՝ «նախատեսված է օրենքով» արտահայտությունը 9-րդ և 11-րդ հոդվածների երկրորդ մասերում: Կոնվենցիայում օգտագործված «օրինականության» հասկացությունը ներպետական օրենսդրությանը համապատասխանությունից զատ նաև ենթադրում է ներպետական օրենսդրության մեջ որակական պահանջներ, օրինակ՝ կանխատեսելիություն և, ընդհանուր առմամբ, կամայականության բացակայություն (*Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani v. Italy*, 2001, § 30; *Rekvenyi v. Hungary* [GC], 1999, § 59):

288. 11-րդ հոդվածում նշված երեք խմբերի նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է ունենան հստակ մեկնաբանություն և, հետևաբար, սահմանափակվեն խնդրո առարկա իրավունքների «իրականացմամբ»: Այս սահմանափակումները չպետք է վնաս հասցնեն կազմակերպվելու իրավունքի բուն էությանը (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, §§ 97 և 119):

289. Թեև 11-րդ հոդվածի 2-րդ մասը բացահայտ չի ակնարկում անհրաժեշտության պահանջին, Դատարանը գտել է, որ զինված ուժերի, ոստիկանության կամ պետական վարչակազմի անդամների նկատմամբ կիրառվող օրինական սահմանափակումները նույնպես պետք է բավարարեն ծայրահեղ սոցիալական անհրաժեշտության պայմանը և լինեն «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» (*Tüm Haber Sen and Çınar v. Turkey*, 2006, §§ 35-35; *Adefdromil v. France*, 2014, §§ 42-45; և *Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia*, 2012, §§ 62 et seq.; համեմատել և համադրել հետևյալ ավելի վաղ գործերի հետ՝ *Council of Civil Service Unions v. the United Kingdom*, Հանձնաժողովի որոշում, 1987, որտեղ համարվել է, որ 11-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական» եզրույթը չի ներկայացնում համաչափության որևէ պահանջ, և *Rekvenyi v. Hungary* [GC], 1999, § 61, որտեղ հարցը բաց է մնացել):

Ա. Պետական վարչակազմ

290. «Պետական վարչակազմ» հասկացությունը հարկ է մեկնաբանել նեղ՝ հաշվի առնելով խնդրո առարկա պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը (*Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani v. Italy*, 2001, § 31, որտեղ խնդրո առարկա պաշտոնները դուրս էին այդ հասկացությունից, քանի որ դրանք չէին հանդիսանում տարածքային իշխանության կազմակերպչական կառուցվածքի մաս; *Vogt v. Germany*, 1995, § 67, որտեղ Դատարանը գտավ, որ անհրաժեշտություն չկա քննության առնել այն հարցը, թե արդյոք քաղաքացիական ծառայության մշտական պաշտոնում ուսուցչի նշանակումն այդ հասկացության շրջանակում էր, քանի որ աշխատանքից նրա ազատումն այն հիմքով, որ վերջինս հետևողականորեն հրաժարվել էր սահմանազատվել Գերմանական կոմունիստական կուսակցությունից, անհամաչափ էր հետապնդած իրավաչափ նպատակին):

291. Համայնքային քաղաքացիական ծառայողներին, ովքեր չեն մասնակցում պետական կառավարմանը, սկզբունքորեն չի կարելի վերաբերվել՝ որպես «պետական վարչակազմի անդամներ» և, համապատասխանաբար, չի կարելի այդ հիմքով սահմանափակել արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու նրանց իրավունքը (*Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 97):

292. Քանի որ ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիական ծառայողների դերն է օգնել կառավարությանն իրականացնել իր գործառույթները, նրանց պարագայում հատուկ կարևորություն է ստանում լոյալության և զսպվածության պարտականությունը: Նման նկատառումները հավասարապես կիրառելի են զինվորական անձնակազմին և ոստիկանության աշխատակիցներին (*Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia*, 2012, § 57):

Ավելին, քաղաքացիական ծառայողների միավորման ազատությունը կարող է սահմանափակվել, եթե անհրաժեշտ է համարվում պահպանել նրանց քաղաքական չեզոքությունը (տե՛ս *Ahmed and Others v. the United Kingdom*, 1998, §§ 53 և 63, որտեղ Դատարանը գտավ, որ իրենց անդամակցած քաղաքական կուսակցությունների կազմում

տեղական իշխանության ավագ պաշտոնատար անձանց քաղաքական գործունեության սահմանափակումները հիմնավոր էին):

293. Քաղաքացիական ծառայողներին արհեստակցական միություններ ստեղծելու բացարձակ արգելքն անհամատեղելի է 11-րդ հոդվածի հետ (*Tüm Haber Sen and Çınar v. Turkey*, 2006, §§ 36 և 40; *Demir and Baykara v. Turkey* [GC], 2008, § 120):

294. Թեև արհմիութենական ազատության սկզբունքը կարող է համատեղվել պետական ծառայողների որոշ խմբերի գործադուլի իրավունքի արգելքի հետ, այս սահմանափակումը, այդուհանդերձ, չի կարող տարածվել բոլոր պետական ծառայողների կամ պետական առևտրային կամ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների վրա (*Enerji Yapı-Yol Sen v. Turkey*, 2009, § 32; *Junta Rectora Del Ertzainen Nazional Elkartasuna (E.R.N.E.) v. Spain*, 2015, § 33):

295. Պետության սահմանադրական կառույցների խարխյվման մեջ չկասկածվող օրինական միավորման անդամների՝ պետական պաշտոններ զբաղեցնելու արգելքը չի հիմնավորվում 11-րդ հոդվածի 2-րդ մասով (*Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani v. Italy*, 2001, որտեղ ֆրանկմասոններին պարտադրում էին ընտրություն կատարել մասոնական օթյակում իրենց անդամության և պետական պաշտոնի դիմելու միջև): Անհատներին պետք չէ հետ պահել նման հանգամանքներում միավորման իրենց իրավունքի իրականացումից՝ պաշտոնի իրենց դիմումների մերժման վախով պայմանավորված: Միավորման ազատությունն այնքան կարևոր է, որ այն չի կարող սահմանափակվել նույնիսկ պետական պաշտոնի հավակնորդի դեպքում, քանի դեռ տվյալ անձը չի կատարել դատապարտելի որևէ արարք՝ միավորմանն իր անդամակցությամբ պայմանավորված (§§ 25-26):

296. Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, թափանցիկության շահերից ելնելով, միավորման անդամության մասին հայտարարագիր ներկայացնելու պահանջը, երբ նպատակն է տեղեկացնել հանրությանը պետական ծառայողների վրա ազդեցություն ունեցող շահերի հնարավոր բախման մասին, համատեղելի է 11-րդ հոդվածի հետ (*Siveri and Chiellini v. Italy* (dec.), 2008, որտեղ պահանջվող հայտարարագիրը չներկայացնելու հիմքով զանգատարերի աշխատանքից ազատումը համարվել էր հիմնավոր):

297. Արհեստակցական միությանն անդամակցելու հիմքով քաղաքացիական ծառայողի հարկադիր փոխադրումն այլ քաղաք չի ընկնում պետական ծառայության պատշաճ գործունեության և կառավարման շրջանակի մեջ և չի հիմնավորվում միջամտություն է արհմիութենական գործունեությանը մասնակցելու՝ քաղաքացիական ծառայողի իրավունքին (*Metin Turan v. Turkey*, 2006, §§ 30-31):

Բ. Ոստիկանություն

298. Հասարակության անդամներն իրավունք ունեն ակնկալել, որ ոստիկանության հետ շփումներում իրենք առերեսվում են քաղաքանապես չեզոք ոստիկանների հետ, ովքեր անկողմնապահ են քաղաքական պայքարում: Հասարակությունում ոստիկանության կարևորագույն դերը ծառայողների քաղաքական չեզոքության խախտման հետևանքով վարկաբեկումից զերծ պահելու ցանկությունը համադրելի է ժողովրդավարական սկզբունքներին (*Rekvényi v. Hungary* [GC], 1999, § 41): Այսպիսով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով հնարավոր է հիմնավորել ոստիկանության ծառայողների՝ *քաղաքական կուսակցությանն անդամակցելու արգելքը* (*ibid.*, § 61):

299. Հաշվի առնելով նրանց առաջնահերթ դերը ներքին կարգուկանոնը և անվտանգությունն ապահովելու, հանցավորության դեմ պայքարելու գործում՝ ոստիկանության ծառայողների պաշտոնին և դերին ներհատուկ պարտականությունները և գործառնություններն արդարացնում են հատուկ պայմանները, որոնք կիրառելի են նրանց *արհմիութենական իրավունքների* իրացմանը: Իրավաչափ է պահանջը, որ ոստիկանության ծառայողները գործեն անկողմնակալ, երբ արտահայտում են իրենց տեսակետները, որպեսզի նրանք պահպանեն հասարակության աչքերում իրենց վստահությունը և հուսալիությունը: Այս նպատակին հասնելու համար արհեստակցական միության անդամներին պատժի ենթարկելը համապատասխանում է

«Ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» (*Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia*, 2012, §§ 67-70):

300. Ոստիկանության արհեստակցական միության նկատմամբ կիրառվող գործադուլի արգելքը հետապնդում է անկարգությունը կանխելու իրավաչափ նպատակ՝ հաշվի առնելով ոստիկանությանը վերապահված առանձնահատուկ պարտականությունները և վերջինիս գործունեության խափանման հնարավոր հետևանքները: Ոստիկանության անխափան ծառայությունն ապահովելու անհրաժեշտությունը և այն հանգամանքը, որ նրանք կրում են զենք, տարբերում է նրանց այլ քաղաքացիական ծառայողներից՝ հիմնավորելով միավորման նրանց իրավունքի սահմանափակումը: Պետությանը տրված է հանրային շահերից ելնելով ոստիկանության արհեստակցական միության գործունեության որոշակի հարցեր կանոնադրելու հայեցողության բավականաչափ լայն շրջանակ, որը, սակայն, չի գրկում միությանը 11-րդ հոդվածով պաշտպանված իր իրավունքների բուն բովանդակությունից (*Junta Rectora Del Ertzainen Nazional Elkartasuna (E.R.N.E.) v. Spain*, 2015, §§ 37-39):

Գ. Զինված ուժեր

301. Հաշվի առնելով բանակի դերը հասարակությունում՝ Դատարանը գտել է, որ ժողովրդավարական որևէ հասարակությունում քաղաքականապես չեզոք բանակ ունենալն իրավաչափ նպատակ է (*Erdel v. Germany* (dec.), 2007):

302. Զինված ուժերում անհրաժեշտ կարգուկանոնը և կարգապահությունը պահպանելուն ուղղված միջոցները նույնպես հետապնդում են իրավաչափ նպատակ: 11-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված «կարգ» հասկացությունը ոչ միայն ակնարկում է հասարակական կարգին, այլև կարգուկանոնին, որը պետք է գերիշխի որոշակի սոցիալական խմբի, օրինակ՝ զինված ուժերի կազմում, քանի որ նման խմբում անկարգությունները կարող են ազդել ամբողջ հասարակության կարգուկանոնի վրա (*Matelly v. France*, 2014, §§ 62 and 67; *Engel and Others v. the Netherlands*, 1976, § 98):

303. Դատարանն ընդունել է, որ արհմիութենական գործունեությունը պետք է հարմարեցվի՝ հաշվի առնելով զինված ուժերի առաքելության առանձնահատուկ բնույթը, և որ մասնագիտական միավորման և դրա անդամների գործունեության և արտահայտման ձևերի վրա կարող են դրվել էական սահմանափակումներ: Սակայն, նման սահմանափակումները չպետք է զրկեն նրանց միավորման հիմնական իրավունքից՝ մասնագիտական և ոչ նյութական շահերի պաշտպանության նպատակով (*Adefdromil v. France*, 2014, § 55; *Matelly v. France*, 2014, § 71):

304. Զինված ուժերի անձնակազմի կողմից արհեստակցական միություն ստեղծելու կամ դրան անդամակցելու բացարձակ արգելքը խախտում է նրանց միավորման ազատության բուն էությունը և, որպես այդպիսին, արգելված է Կոնվենցիայով (*Adefdromil v. France*, 2014, § 60; *Matelly v. France*, 2014, § 75):

Մեջբերված գործերի ցանկը

Սույն ուղեցույցում մեջբերված նախադեպային իրավունքը վերաբերում է Դատարանի կայացրած վճիռներին կամ որոշումներին և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով», անգլ.՝ «Commission») որոշումներին կամ զեկույցներին

Եթե այլ բան նշված չէ, ապա բոլոր հղումները վերաբերում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճիռն: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում (dec.) բառը նշանակում է, որ հղում է արվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄԳ]» հապավումը (հղման անգլերեն տարբերակում՝ [GC]) նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Պալատի այն վճիռները, որոնք դեռևս օրինական ուժի մեջ չեն մտել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի իմաստով, ստորև բերված ցանկում նշագրված են աստղանիշով (*): Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է. «Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝ (ա) կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ (բ) վճիռ կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ (գ) Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը»: Եթե հանձնման պահանջն ընդունվում է Մեծ պալատի հանձնախմբի կողմից, ապա պալատի վճիռը վերջնական չի դառնում, ուստի՝ չի ունենում օրինական ուժ: Վերջնական դառնում է հետագայում Մեծ պալատի կողմից կայացվելիք վճիռը:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում մեջբերված գործերի վրա տրված գերկապային հղումներն ուղղորդվում են դեպի «HUDOC» շտեմարան (<http://hudoc.echr.coe.int>), որտեղ հասանելի է Դատարանի (Մեծ պալատի, պալատի և հանձնաժողովի վճիռները և որոշումները, ծանուցված գործերը, խորհրդատվական կարծիքները և իրավական ամփոփագրերը Նախադեպային իրավունքի վերաբերյալ տեղեկատվական ծանոթագրությունից) և Հանձնաժողովի (որոշումները և զեկույցները) նախադեպային իրավունքը, ինչպես նաև Նախարարների կոմիտեի ընդունած բանաձևերը:

Դատարանն իր վճիռները և որոշումները կայացնում է անգլերեն և (կամ) ֆրանսերեն, որոնք Դատարանի երկու պաշտոնական լեզուներն են: «HUDOC»-ը պարունակում է նաև բազմաթիվ կարևոր գործերի թարգմանություններն ավելի քան 30 ոչ պաշտոնական լեզուներով, ինչպես նաև՝ հղումներ այլ կազմակերպությունների պատրաստած և նախադեպային պրակտիկային վերաբերող մոտ 100 առցանց հավաքածուներին: Մեջբերված գործերի առկա բոլոր լեզվական տարբերակները հասանելի են «HUDOC» շտեմարանի «Language versions» բաժնում, որը բացվում է՝ սեղմելով գործի գերկապային հղման վրա:

—A—

A. and Others v. Spain, no. 13750/88, Commission decision of 2 July 1990, Decisions and Reports 66, p. 188

Adana TAYAD v. Turkey, no. 59835/10, 21 July 2020

Adefdromil v. France, no. 32191/09, 2 October 2014

Agit Demir v. Turkey, no. 36475/10, 27 February 2018

Ahmed and Others v. the United Kingdom, 2 September 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-VI

Akarsubaşı and Alçiçek v. Turkey, no. 19620/12, 23 January 2018

Akgöl and Göl v. Turkey, nos. 28495/06 and 28516/06, 17 May 2011

Alekseyev v. Russia, nos. 4916/07 and 2 others, 21 October 2010
Alıcı and Others v. Türkiye, no. 70098/12, 24 May 2022
Aliyev and Others v. Azerbaijan, no. 28736/05, 18 December 2008
Animal Defenders International v. the United Kingdom [GC], no. 48876/08, ECHR 2013 (extracts)
Annenkov and Others v. Russia, no. 31475/10, 25 July 2017
APEH Üldözötteinek Szövetsége, Iványi, Róth and Szerdahelyi v. Hungary (dec.) no. 32367/96,
31 August 1999
Appleby and Others v. the United Kingdom, no. 44306/98, ECHR 2003 VI
Artyomov v. Russia (dec.), no. 17582/05, ECHR 2006-XV
Ashughyan v. Armenia, no. 33268/03, 17 July 2008
Association of Academics v. Iceland (dec.), no. 2451/16, 15 May 2018
Association of Civil Servants and Union for Collective Bargaining and Others v. Germany,
nos. 815/18 and 4 others, 5 July 2022
Association of Citizens “Radko” and Paunkovski v. the former Yugoslav Republic of Macedonia,
no. 74651/01, ECHR 2009 (extracts)
Association Rhino and Others v. Switzerland, no. 48848/07, 11 October 2011
Associated Society of Locomotive Engineers and Firemen (ASLEF) v. the United Kingdom,
no. 11002/05, 27 February 2007
Ayoub and Others v. France, nos. 77400/14 and 2 others, 8 October 2020

—B—

Bączkowski and Others v. Poland, no. 1543/06, 3 May 2007
Balçık and Others v. Turkey, no. 25/02, 29 November 2007
Barabanov v. Russia, nos. 4966/13 and 5550/15, 30 January 2018
Barankevich v. Russia, no. 10519/03, 26 July 2007
Barış and Others v. Turkey (dec.), no. 66828/16 and 31 others, 14 December 2021
Barraco v. France, no. 31684/05, 5 March 2009
Barthold v. Germany, 25 March 1985, § 61, Series A no. 90
Bayev and Others v. Russia, nos. 67667/09 and 2 others, 20 June 2017
Bekir-Ousta and Others v. Greece, no. 35151/05, 11 October 2007
Bektashi Community and Others v. the former Yugoslav Republic of Macedonia, nos. 48044/10 and
2 others, 12 April 2018
Berkman v. Russia, no. 46712/15, 1 December 2020
Berladir and Others v. Russia, no. 34202/06, 10 July 2012
Bollan v. the United Kingdom (dec.), no. 42117/98, ECHR 2000-V
Bota v. Romania (dec.), no. 24057/03, 12 October 2004
Bozgan v. Romania, no. 35097/02, 11 October 2007
Budaházy v. Hungary, no. 41479/10, 15 December 2015
Bukta and Others v. Hungary, no. 25691/04, ECHR 2007 III
Bumbeș v. Romania, no. 18079/15, 3 May 2022

—C—

Cârmuirea Spirituală a Musulmanilor din Republica Moldova v. Moldova (dec.), no. 12283/02,
14 June 2005
Centre of Societies for Krishna Consciousness in Russia, no. 37477/11, 23 November 2021
Chassagnou and Others v. France [GC], nos. 25088/94, 28331/95 and 28443/95, ECHR 1999-III
Cheall v. the United Kingdom, no. 10550/83, Commission decision of 13 May 1985, Decisions and
Reports 42, p. 178
Chkharitshvili v. Georgia, no. 31349/20, 11 May 2023
Christian Democratic People’s Party v. Moldova, no. 28793/02, ECHR 2006-II
Christian Democratic People’s Party v. Moldova (no. 2), no. 25196/04, 2 February 2010

Christians against Racism and Fascism v. the United Kingdom, no. 8440/78, Commission decision of 16 July 1980, Decisions and Reports 21, p. 138
Church of Scientology Moscow v. Russia, no. 18147/02, 5 April 2007
Çiçek and Others v. Türkiye, nos. 48694/10 and 4 others, 22 November 2022
Cisse v. France, no. 51346/99, ECHR 2002-III
Council of Civil Service Unions v. the United Kingdom, no. 11603/85, Commission decision of 29 January 1987, Decisions and Reports 50, p. 228
Croatian Golf Federation v. Croatia, no. 66994/14, 17 December 2020
Cumhuriyet Halk Partisi v. Turkey, no. 19920/13, ECHR 2016 (extracts)

—D—

Dareskizb Ltd v. Armenia, no. 61737/08, 21 September 2021
Demir and Baykara v. Turkey [GC], no. 34503/97, ECHR 2008
Disk and Kesk v. Turkey, no. 38676/08, 27 November 2012
Danilenkov and Others v. Russia, no. 67336/01, ECHR 2009 (extracts)
Djavit An v. Turkey, no. 20652/92, ECHR 2003-III
Doğan Altun v. Turkey, no. 7152/08, 26 May 2015
Drieman and Others v. Norway (dec.), no. 33678/96, 4 May 2000

—E—

Ecodefence and Others v. Russia, nos. 9988/13 and 60 others, 14 June 2022
Eğitim ve Bilim Emekçileri Sendikası v. Turkey, no. 20641/05, ECHR 2012 (extracts)
Eğitim ve Bilim Emekçileri Sendikası and Others v. Turkey, no. 20347/07, 5 July 2016
Ekrem Can and Others v. Turkey, no. 10613/10, 8 March 2022
Elvira Dmitriyeva v. Russia, nos. 60921/17 and 7202/18, 30 April 2019
Emin Huseynov v. Azerbaijan, no. 59135/09, 7 May 2015
Enerji Yapı-Yol Sen v. Turkey, no. 68959/01, 21 April 2009
Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, Series A no. 22
Erdel v. Germany (dec.), no. 30067/04, 13 February 2007
Ete v. Türkiye, no. 28154/20, 6 September 2022
Éva Molnár v. Hungary, no. 10346/05, 7 October 2008
Ezelin v. France, 26 April 1991, Series A no. 202

—F—

Fáber v. Hungary, no. 40721/08, 24 July 2012
Federation of Offshore Workers' Trade Unions and Others v. Norway (dec.), no. 38190/97, ECHR 2002-VI
Fedotov v. Russia (dec.), no. 5140/02, 23 November 2004
Forcadell i lluis v. Spain (dec.), no. 75147/17, 7 May 2019
Friend, the Countryside Alliance and others v. the United Kingdom (dec.), nos. 16072/06 and 27809/08, 24 November 2009
Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey [GC], no. 23885/94, ECHR 1999-VIII
Frumkin v. Russia, no. 74568/12, 5 January 2016

—G—

Gafgaz Mammadov v. Azerbaijan, no. 60259/11, 15 October 2015
Galstyan v. Armenia, no. 26986/03, 15 November 2007

Geotech Kancev GmbH v. Germany, no. 23646/09, 2 June 2016
Giuliani and Gaggio v. Italy [GC], no. 23458/02, ECHR 2011 (extracts)
Gorzelik and Others v. Poland [GC], no. 44158/98, ECHR 2004-I
Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani v. Italy, no. 35972/97, ECHR 2001-VIII
Gülcü v. Turkey, no. 17526/10, 19 January 2016
Güler and Uğur v. Turkey, nos. 31706/10 and 33088/10, 2 December 2014
Gün and Others v. Turkey, no. 8029/07, 18 June 2013

—H—

Hakim Aydın v. Turkey, no. 4048/09, 26 May 2020
Hakobyan and Others v. Armenia, no. 34320/04, 10 April 2012
Herri Batasuna and Batasuna v. Spain, nos. 25803/04 and 25817/04, ECHR 2009
Herrmann v. Germany, no. 9300/07, 20 January 2011
Hizb ut-Tahrir and Others v. Germany (dec.), no. 31098/08, 12 June 2012
Hoppen and trade union of AB Amber Grid employees v. Lithuania, no. 976/20, 17 January 2023
Hrvatski liječnički sindikat v. Croatia, no. 36701/09, 27 November 2014
Huseynli and Others v. Azerbaijan, nos. 67360/11 and 2 others, 11 February 2016

—I—

Ibrahimov and Others v. Azerbaijan, nos. 69234/11 and 2 others, 11 February 2016
Identoba and Others v. Georgia, no. 73235/12, 12 May 2015
Ignatencu and the Romanian Communist Party v. Romania, no. 78635/13, 5 May 2020
İzci v. Turkey, no. 42606/05, 23 July 2013
Izzettin Doğan and Others v. Turkey [GC], no. 62649/10, ECHR 2016

—J—

Jafarov and Others v. Azerbaijan, no. 27309/14, 25 July 2019
Jehovah's Witnesses of Moscow and Others v. Russia, no. 302/02, 10 June 2010
Johansson v. Sweden, no. 13537/88, Commission decision of 7 May 1990, D.R. 65, p. 202
Junta Rectora Del Ertzainen Nazional Elkartasuna (ER.N.E.) v. Spain, no. 45892/09, 21 April 2015

—K—

Kalifatstaat v. Germany (dec.), no. 13828/04, 11 December 2006
Karaçay v. Turkey, no. 6615/03, 27 March 2007
Karakurt v. Austria (dec.), no. 32441/96, 14 September 1999
Kasparov and Others v. Russia, no. 21613/07, 3 October 2013
Kasparov v. Russia, no. 53659/07, 11 October 2016
Kaymak and Others v. Türkiye, no. 62239/12, 20 June 2023
Kazan v. Türkiye, no. 58262/10, 6 June 2023
Kemal Çetin v. Turkey, no. 3704/13, 26 May 2020
Koretsky and Others v. Ukraine, no. 40269/02, 3 April 2008
Köll v. Austria (dec.), no. 43311/98, 4 July 2002
Körtvélyessy v. Hungary, no. 7871/10, 5 April 2016
Krupko and Others v. Russia, no. 26587/07, 26 June 2014
Kudrevičius and Others v. Lithuania [GC], no. 37553/05, ECHR 2015
Kuznetsov and Others v. Russia, no. 184/02, 11 January 2007
Kimlya and Others v. Russia, nos. 76836/01 and 32782/03, ECHR 2009

—L—

Laguna Guzman v. Spain, no. 41462/17, 6 October 2020
Larmela v. Finland, no. 26712/95, Commission decision of 28 May 1997, unpublished
Lashmankin and Others v. Russia, nos. 57818/09 and 14 others, 7 February 2017
Lavisse v. France, no. 14223/88, Commission decision of 5 June 1991, Decisions and Reports 70, p. 229
Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium, 23 June 1981, Series A no. 43
Les Authentiks and Supras Auteuil 91 v. France, nos. 4696/11 and 4703/11, 27 October 2016
Linkov v. the Czech Republic, no. 10504/03, 7 December 2006
Lovrić v. Croatia, no. 38458/15, 4 April 2017
Lucas v. the United Kingdom (dec.), no. 39013/02, 18 March 2003

—M—

Maestri v. Italy [GC], no. 39748/98, ECHR 2004-I
Magyar Keresztény Mennonita Egyház and Others v. Hungary, nos. 70945/11 and 8 others, ECHR 2014 (extracts)
Makarashvili and Others v. Georgia, nos. 23158/20 and 2 others, 1 September 2022
Malofeyeva v. Russia, no. 36673/04, 30 May 2013
Manole and “Romanian Farmers Direct” v. Romania, no. 46551/06, 16 June 2015
Matelly v. France, no. 10609/10, 2 October 2014
McFeeley v. the United Kingdom, no. 8317/78, § 114, Commission decision of decision 15 May 1980, Decisions and Reports 20, p. 44
Members of the Gldani Congregation of Jehovah’s Witnesses and Others v. Georgia, no. 71156/01, 3 May 2007
Mesut Yildiz and Others v. Turkey, no. 8157/10, 18 July 2017
Metin Turan v. Turkey, no. 20868/02, 14 November 2006
Metodiev and Others v. Bulgaria, no. 58088/08, 15 June 2017
MİHR Foundation v. Turkey, no. 10814/07, 7 May 2019
Moscow Branch of the Salvation Army v. Russia, no. 72881/01, ECHR 2006-XI
Movement for Democratic Kingdom v. Bulgaria, no. 27608/95, Commission decision of 29 November 1995, unpublished
Mustafa Hajili and Others v. Azerbaijan, nos. 69483/13 et al., 6 October 2022
Mytilinaios and Kostakis v. Greece, no. 29389/11, 3 December 2015

—N—

N.F. v. Italy, no. 37119/97, ECHR 2001-IX
National Notary Chamber v. Albania (dec.), no. 17029/05, 6 May 2008
National Union of Belgian Police v. Belgium, 27 October 1975, Series A no. 19
National Union of Rail, Maritime and Transport Workers v. the United Kingdom, no. 31045/10, ECHR 2014
National Turkish Union Kungyun v. Bulgaria, no. 4776/08, 8 June 2017
Navalnyy v. Russia [GC], nos. 29580/12 and 4 others, 15 November 2018
Navalnyy and Gunko v. Russia, no. 75186/12, 10 November 2020
Navalnyy and Yashin v. Russia, no. 76204/11, 4 December 2014
Nemtsov v. Russia, no. 1774/11, 31 July 2014
Norwegian Confederation of Trade Unions (LO) and Norwegian Transport Workers’ Union (NTF) v. Norway, no. 45487/17, 10 June 2021
Novikova and Others v. Russia, nos. 25501/07 and 4 others, 26 April 2016
Nurettin Aldemir and Others v. Turkey, nos. 32124/02 and 6 others, 18 December 2007

—O—

Obote v. Russia, no. 58954/09, 19 November 2019
Ognevenko v. Russia, no. 44873/09, 20 November 2018
Öğrü v. Turkey, no. 19631/12, 17 October 2017
Olga Kudrina v. Russia, no. 34313/06, 6 April 2021
Öllinger v. Austria, no. 76900/01, 2006-IX
“Orthodox Ohrid Archdiocese (Greek-Orthodox Ohrid Archdiocese of the Peć Patriarchy)” v. the former Yugoslav Republic of Macedonia, no. 3532/07, 16 November 2017
Osmani and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia” (dec.), no. 50841/99, ECHR 2001-X
Ouranio Toxo and Others v. Greece, no. 74989/01, ECHR 2005-X (extracts)
O.V.R. v. Russia (dec.), no. 44319/98, ECHR 2001-V
Oya Ataman v. Turkey, no. 74552/01, 2006-XIII
Özbek and Others v. Turkey, no. 35570/02, 6 October 2009

—P—

Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v. Romania, no. 46626/99, ECHR 2005-I (extracts)
Parti nationaliste basque – Organisation régionale d’Iparralde v. France, no. 71251/01, ECHR 2007-II
Party for a Democratic Society (DTP) and Others v. Turkey, nos. 3840/10 and 6 others, 12 January 2016
Peradze and Others v. Georgia, no. 5631/16, 15 December 2022
Pivkina and Others v. Russia (dec.), nos. 2134/23 and 6 others, 6 June 2023
Plattform “Ärzte für das Leben” v. Austria, 21 June 1988, Series A no. 139
Popov and Others v. Bulgaria (dec.), no. 48047/99, 6 November 2003
Primov and Others v. Russia, no. 17391/06, 12 June 2014
Protopapa v. Turkey, no. 16084/90, 24 February 2009

—R—

Rai and Evans v. the United Kingdom (dec.), nos. 26258/07 and 26255/07, 17 November 2009
Ramazanov and Others v. Azerbaijan, no. 44363/02, 1 February 2007
Razvozhayev v. Russia and Ukraine and Udaltsov v. Russia, nos. 75734/12 and 2 others, 19 November 2019
Redfearn v. the United Kingdom, no. 47335/06, 6 November 2012
Refah Partisi (the Welfare Party) and Others v. Turkey [GC], nos. 41340/98 and 3 others, ECHR 2003-II
Rekvényi v. Hungary [GC], no. 25390/94, ECHR 1999-III
Religionsgemeinschaft der Zeugen Jehovas and Others v. Austria, no. 40825/98, 31 July 2008
The Religious Denomination of Jehovah’s Witnesses in Bulgaria v. Bulgaria, no. 5301/11, 10 November 2020
Republican Party of Russia v. Russia, no. 12976/07, 12 April 2011
Revert and Legallais v. France, nos. 14331/88 and 14332/88, Commission decision of 8 September 1989, Decisions and Reports 62, p. 309

—S—

Sanchez Navajas v. Spain (dec.), no. 57442/00, ECHR 2001-VI
Sáska v. Hungary, no. 58050/08, 27 November 2012

Savenko and Others v. Russia, no. 13918/06, 14 September 2021
Schmidt and Dahlström v. Sweden, 6 February 1976, Series A no. 21
Schneider v. Luxembourg, no. 2113/04, 10 July 2007
Schwabe and M.G. v. Germany, nos. 8080/08 and 8577/08, ECHR 2011-VI (extracts)
Sergey Kuznetsov v. Russia, no. 10877/04, 23 October 2008
Shmorgunov and Others v. Ukraine, nos. 15367/14 and 13 others, 21 January 2021
Sidiropoulos and Others v. Greece, 10 July 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-IV
Sigurður A. Sigurjónsson v. Iceland, 30 June 1993, Series A no. 264
Silgir v. Turkey, no. 60389/10, 3 May 2022
Sindicatul “Păstorul cel Bun” v. Romania [GC], no. 2330/09, ECHR 2013 (extracts)
Siveri and Chiellini v. Italy (dec.), no. 13148/04, 3 June 2008
Slavic University in Bulgaria and Others v. Bulgaria (dec.), no. 60781/00, 18 November 2004
Sørensen and Rasmussen v. Denmark [GC], nos. 52562/99 and 52620/99, ECHR 2006-I
Socialist Party and Others v. Turkey, 25 May 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-III
Şolari v. the Republic of Moldova, no. 42878/05, 28 March 2017
Stankov and the United Macedonian Organisation Ilinden v. Bulgaria, nos. 29221/95 and 29225/95, ECHR 2001-IX
Steel and Others v. the United Kingdom, 23 September 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-VII
Straume v. Latvia, no. 59402/14, 2 June 2022
Süleyman Çelebi and Others v. Turkey (no. 2), nos. 22729/08 and 10581/09, 12 December 2017
Swedish Engine Drivers’ Union v. Sweden, 6 February 1976, Series A no. 20
Swedish Transport Workers Union v. Sweden (dec.), no. 53507/99, ECHR 2004-XII (extracts)

—T—

Taganrog LRO and Others v. Russia, nos. 32401/10 and 19 others, 7 June 2022
Taranenko v. Russia, no. 19554/05, 15 May 2014
Tebieti Mühafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan, no. 37083/03, ECHR 2009
Tek Gıda İş Sendikası v. Turkey, no. 35009/05, 4 April 2017
The Gypsy Council and Others v. the United Kingdom (dec.), no. 66336/01, 14 May 2002
The United Macedonian Organisation Ilinden and Ivanov v. Bulgaria, no. 44079/98, 20 October 2005
The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria, no. 59491/00, 19 January 2006
The United Macedonian Organisation Ilinden and Others v. Bulgaria (no. 2), no. 34960/04, 18 October 2011
The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria, no. 59489/00, 20 October 2005
The United Macedonian Organisation Ilinden – PIRIN and Others v. Bulgaria (no. 2), nos. 41561/07 and 20972/08, 18 October 2011
Tourkiki Enosi Xanthis and Others v. Greece, no. 26698/05, 27 March 2008
Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia, no. 11828/08, 25 September 2012
Tsonev v. Bulgaria, no. 45963/99, 13 April 2006
Tüm Haber Sen and Çınar v. Turkey, no. 28602/95, ECHR 2006-II
Tuskia and Others v. Georgia, no. 14237/07, 11 October 2018

—U—

UNISON v. the United Kingdom (dec.), no. 53574/99, ECHR 2002-I
United Communist Party of Turkey and Others v. Turkey, 30 January 1998, *Reports of Judgments and Decisions* 1998-I
Unite the Union v. the United Kingdom (dec.), no. 65397/13, 3 May 2016
Urcan and Others v. Turkey, nos. 23018/04 and 10 others, 17 July 2008

—V—

Veniamin Tymoshenko and Others v. Ukraine, no. 48408/12, 2 October 2014
Vialas Simón v. Spain, no. 16685/90, Commission decision of 8 July 1992, unreported
Vogt v. Germany, 26 September 1995, Series A no. 323
Vlahov v. Croatia, no. 31163/13, 5 May 2022
Vona v. Hungary, no. 35943/10, ECHR 2013
Vörður Ólafsson v. Iceland, no. 20161/06, ECHR 2010
Vyerentsov v. Ukraine, no. 20372/11, 11 April 2013

—W—

Weiss v. Austria, no. 14596/89, Commission decision of 10 July 1991, unpublished
Wilson, National Union of Journalists and Others v. the United Kingdom, nos. 30668/96 and 2 others, ECHR 2002-V
Women On Waves and Others v. Portugal, no. 31276/05, 3 February 2009
W.P. and Others v. Poland (dec.), no. 42264/98, ECHR 2004-VII

—Y—

Yakut Republican Trade-Union Federation v. Russia, no. 29582/09, 7 December 2021
Yaroslav Belousov v. Russia, nos. 2653/13 and 60980/14, 4 October 2016
Yazar and Others v. Turkey, nos. 22723/93 and 2 others, ECHR 2002-II
Yefimov and Youth Human Rights Group v. Russia, nos. 12385/15 and 51619/15, 7 December 2021
Yeşiller ve Sol Gelecek Partisi v. Turkey, no. 41955/14, 10 May 2022
Yezhov and Others v. Russia, no. 22051/05, 29 June 2021
Yordanovi v. Bulgaria, no. 11157/11, 3 September 2020
Young, James and Webster v. the United Kingdom, 13 August 1981, Series A no. 44
Young, James and Webster v. the United Kingdom, nos. 7601/76 and 7896/77, Commission's report of 14 December 1979, Series B, no. 39, p. 36

—Z—

Zakharova and Others v. Russia, no. 12736/10, 8 March 2022
Zakharov and Varzhabetyan v. Russia, nos. 35880/14 et 75926/17, 13 October 2020
Zehra Foundation and Others v. Turkey, no. 51595/07, 10 July 2018
Zhdanov and Others v. Russia, nos. 12200/08 and 2 Others, 16 July 2019
Zhechev v. Bulgaria, no. 57045/00, 21 June 2007
Ziliberg v. Moldova (dec.), no. 61821/00, 4 May 2004
Zulkuf Murat Kahraman v. Turkey, no. 65808/10, 16 July 2019